



ԵՐԻՒՈՒՆ


1969. 1. 11.



Պահօնական ԱՄՍԱԳԻՐ
Հաջործութակամ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷջՄԻՒԾԵԼԻ

Ω

1957



ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Սուրբ Էջմիածնի Հոգեոր Ճեմարանը	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ բարող Կարողիկն Սուրբ Էջմիածնի տոնի առքիվ	6
Շարական Էջմիածնի	10
Շարական Եկեղեցւոյ	10
Մաղթանք ի տօնի Սուրբ Էջմիածնի	11
Հայրապետական մաղթեց	11
Տաղ Սուրբ Էջմիածնի	12
Քաղվածքներ գերազույն Հոգեոր Խորհրդի նիստերի արձանագրություն- ներից	13
Մայր Արքոնի տոնը Սուրբ Էջմիածնում	14
ՄԱՅՐ Ա. Թ Ո Ռ Ո Ւ Մ	16
Ամավերդի նանդիսությունները Հոգեոր Ճեմարանում	19
Ն. ՊԱԼՅԱՆ— Արարատ	28
Ա. Հ.— Հոգեոր Ճեմարանի ուսանողների ուխտագնացությունը	29
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ— Վահան ծայրագույն վարդապետ Բախտամյան	39
Ա. ՏԻՐԱԶՅԱՆ— Կիլիկյան Հայկական պետության սեփական նավա- տորմիդ ունենալու հարցի շուրջը	43
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ— Մոզաիկ ճկարչության արվեստը Հայաստանում	49
Հ. ՄԵԼԻԹԱՐՅԱՆ— Հայերենի կետադրությունը	56
Արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանի քահանայու- թյան բառասնամյակը	62
Սուրբ Էջմիածնի Հոգեոր Ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելություն 1957—1958 ուսումնական տարեշրջանի համար	63

ԽՄԲԱԳՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՆ, Էջմիածնի

«Էջմիածն», ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմանական Հայաստան, Շիրակի մարզ, Էջմիածն, Հայաստան

Redaction of the magazine „Etchmiadzin”, Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1957 թ.



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի
Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա .
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՅԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

ունիսի 23-ին, Մայր Արոռ Ս. էջմիածնի տոնի օրը, փակվեց Հոգեռոց Ճեմարանի 1956—1957 ուսումնական տարին, գոհացուցիչ արդյունքներով, ինչպես եւնում է մեր ամսագրի սույն համարում տպված Հոգեռոց Ճեմարանի տեսչուրյան տարեկան ընդհանուր գելուցարից:

Հոգեռոց Ճեմարանի կյանքում վերշացող 1956—1957 ուսումնական տարին անցավ վեհափառ Հայրապետի անմիջական հսկողության և առաջնորդության տակ, էլ ավելի կազմակերպված և արդյունավետ, Գերազույն Հոգեռոց եռերդի կողմից նախառավաճական ծրագրով և ձեռք առնված ուսումնական տարածքում անհրաժեշտ միջոցառությունով, ինչպես նաև Հոգեռոց Ճեմարանի աեշտական և դասախոսական կազմի բարեխիլն և ազգի աշխատանքի և ամրող ուսանողության ցուցաբերած աշխատասիրության և կարգապահության շնորհիվ:

Մրտի մեծ զոհումակուրյամբ պետք է արձանագրել այսաեղ այն փաստը, որ Հոգեռոց Ճեմարանը անցնող ուսումնական տարեշրջանում մի քայլ և մոտեցավ իր հարազատ նկարագրի և հոգեռուր կոչման բարձրության:

Հոգեռոց Ճեմարանը վեհափառ Հայրապետի սրտին մոտ և հարազատ հաստատություն է, որի գարգացման և ապագայի հետ նորին Ս. Օծուրյունը կապել է սրտառուց նույսեր և ակնկալություններ: «Մեր երազն է,— ասաց վեհափառ Հայրապետը Ճեմարանի ամափերշի հանդիսուրյան օրը արտասանած իր գեղեցիկ «հուսկ բան»-ի մեջ,— Մեր կյանքի հպատակն է շենցնել, ուրախացնել հազարմայս Ս. էջմիածնին՝ պարզելով անոր

հավատավոր, անրասիր և անձնվեր սպասավորներ:

Մայր Արոռ Ս. էջմիածնինը գլուխն է մեր Ս. Եկեղեցին, և ան իր զինվարյալ միաբանությամբ և հոգեռոց Ճեմարանով պետք է դառնա լուսատու փառոս, օրինակ, առաջնորդ և ներշնչարան համայն նայ նոգեռականուրյան և նայ հավատացյալ ժողովրդին»:

Այս զաղափարների և ծրագրերի իրազործման նախապարհի վրա, Վեհափառ Հայրապետը Ճեմարանը շրջապատել է զուրգութանքով և հայրական շերմուրյամբ, վառ հույսեր կապելով երա գյուրյան և նպատակներին:

Անցյալում մենք ունեցել ենք ուսումնասեր շատ հայրապետներ, որներ բազ զնակատելով ուսման ու դասախարակուրյան արժեքը՝ որ «զի որ կամակոր է յուսմանէ անկանի ի շարիս և որպէս կուրուրին աշաց ատելի է մարմնոյ, նոյնպես և տղիտուրին ոգոյ ատելի է Աստուծոյ» («Կանոն Սրբոյն Սահմակայ Հայոց Կարողիկոսի»), հիմնել են բազմարիվ դպրոցներ, մառանզավորաց վարժարաններ, հոգեռոց ճեմարաններ, լույս և գիտուրյուն են տարածել ժողովրդի մեջ:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ և ծրագրի համաձայն, Մայր Արոռ Ս. էջմիածնի Հոգեռոց Ճեմարանը կոչված է մեծ ու պատվավոր գեր կատարելու Հայ Եկեղեցու կյանքում, մեր հոգեռոց վերազարբունի այս խոստմնալից օրերին, իր կոչման և պարտականության գիտակից, բազմակողմանիորեն զարգացած հավատավոր ու հայրենասեր հոգեռականություն պատրաստելու ասպարեզում:

«Մենք մեր ուսանողներին շատ բան կսպասենք,— ասաց Վեհափառ Հայրապետը

Ճեմարանի հանդեսին, — շատ քան կպահանձնելու, Ա. Էշմիածնի Հոգեոր ճեմարանը իր սաներեն կպահանձն ավելին բան կրական որևէ հաստատություն։ ... Մենք կկամ ենանք ենա, որ իմացական ձեր կարողություններով ըլլաֆ ուշիմ, արքուն, նիշտ և արագ բնրություն հասկեաք Ձեր շշշապատը և հիմնովին յուրացնեք այն, ինչ որ ձեր ուսուցիչները ձեզ կուրցեցնեն։ Դուք պետք է գիտություն ամբարեք անհագ ծարակուլ և սիրով, մանականդերեք ուղղությամբ պետք է լավ զինվիլիք ա) սրբազն գիտելիքներով, բ) հայերենով և զ) հայ ժողովրդի պատմությամբ։ Դուք ոչ միայն պետք է սորվիլիք այս բոլորը, այլ տիրապետեք անոնց։ Հայոց պատմությունը ենմարանականի համար պետք է ըլլա երկրորդ Ավետարան։ Տարիներ հնոտ, եր դուք ժառողբեք մեր ժողովրդին, ձեզ մեկ ճենքի պետք է ունենաք Հիսուսի Ավետարանը,՝ իսկ մյուս ճենքին՝ հայոց պատմության զիրքը։

Հոգեւոր ձեմարանի ուսանողության առաջ Վեհափառ Հայրապետը խնդիր է դրել՝ ոչ միայն ժաշան մեղուների նման գիտություն և լույս ամբարել իրենց մտքի գանձարաններում, այլ նաև ձգտել հասնելու բարոյական և հոգեւոր նկարագրի կերտմանը, ազնիվ զգացմունեների և երիտասարդական, առաքի- նությունների մշակման և զարգացման:

«Մենք կուզենք նաև, — ասաց Վեհափառ Հայրապետը խոսքն ուղղելով Ճեմարանի ուսանողության, — որ դուք դառնաք բարոյական նկարագրի սեր մարդեր: Եվ այս կրնչգծենք մասնավոր կարեռությամբ: Առաջ բարոյական առաքինություններու, հոգկորականը կծախողի իր ասպարեզին մեջ աճնուափելի կերպով: Ներքին, հոգեկան հավասարակշռություն և կարգապահություն, անշահանդրություն, համեստություն, պարկեշտություն, եղբայրություն և այս բոլոր առաքինություններուն բազմ ու պահկը՝ մաքուր հավատք և սեր և հավատարմություն առ Աստված և դեպի մեր Ս. էջմիածնին»:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին դառն, ողբերգական հակատազիր էր վիճակին ենա մեր Նկեղեցուն և հոգևորականությանը: Հայ եկեղեցականությունը, հավատարիմ իր եկեղեցական և ազգային դարավոր ավանդություններին, ապրեց իր պատմության ամենառողբերգական էջերից մեկը, ապրեց իր արյունոտ Գողգոթան, և Արևմտյան Հայաստանում ամայացան մեր երեսնի ծաղկյալ հոգեւար կենտրոններն ու նեմարանները, ոչն ու պալծառ վաճերը:

Համազգային այդ մեծ աղետից հետո դեռ լրիկ շափով ուսի՞ չի կանգնել Հայ եկեղեցին։ Եվ ահա մեր երկուամբ և կորովի Հայրա-

պեսի ուսերին է ծանրանում սրտազին պարտականություն Մայր Արքով ևոր միաբանությամբ, Հոգեւոր ձեմարտանով, մանուկով ու բանին կենաց բարողությամբ ոտքի կանգնեցնել Հայ Եկեղեցին, եռոր շունչ ու ոգի տալ ենան, համալրել նուրացած եկեղեցական շարժերը ևոր ու խոստմանց ուժերով և այսօր ևս Հայ Եկեղեցին դարձնել շնչող, կենքանի, կազմակերպող ևոգեւոր մի հաստատություն, հայ հավատացյալ ժողովրդի հոգեւոր-ազգային նկարագրի, բարոյական բարեմասնությանց զարգացման գործում, հայեցի շնչով և Երիտանեական դաստիարակությամբ:

Անցյալում, մեր մշակույթի պատմության
մեջ, խոշոր և շնորհակալ դեր են կատարել
մեր ժառանգավորաց վարժարանները, բն-
ծայրանները, դպրեվանքներն ու հոգևո-
նեմարանները: Էջմիածին, Դվին, Աղբամար,
Սահմանին, Հաղբատ, Տարե, Սիս, Երևանաղեմ,
Արմազ և այլ հոգևոր կենտրոնների անուններ
վահուց անցել են արդեն մեր մշակույթի
պատմության մեջ:

Ս. էջմիածնի Հոգեւոր դպրոցը հազար
ամյա պատմություն ունի: Այս նույն նվի-
րական վայրերում շատ վաղուց եղել են վա-
նական-եկեղեցական դպրոցներ՝ աշակեր-
տական մեծ խմբերով, որոնք եկել էին Վա-
ղարշապատ «և ԿՈՂՄԱՆՑ ել ո ԳԱԼԻԱՆՈՒ-
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ՅՈՐԴԵԱԼՔ ել ո ԳԵՐ-
ԴԵԱԼՔ ՀԱՍԱՆԻՄ ո ԲԱՑԵԱԼ ԱՂԹԻՒՐՆ ԳԻ-
ՏՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ... ՔԱՆՁԻ ՀԱՅՐԱՐՈ-
ՏԵԱՆ ԳԱԼԻԱՆԻՆ ԲՂԵԽԵՑԻՆ ՀԱՅՈՅ ՇՆՈՐՀԿ-
ՊԱՏՈՒԻՐԱԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ» (Կորլամ):

Հոգեու ծեմարաբը շարունակությունն
անցյալում Գևորգյան ձեմարանի, որը տվե
է մեր ժողովրդին ոչ միայն հավատավոր
բարձրութեան պատրաստված հոգեռուականու
թյան մի գիտեական սերունդ, այլ նաև հա
յագետների, բանասերների, պատմաբաննե
րի, մանկավարժների մի պատկանելի սե
րունք:

շրջանի համար հրավիրվելու են մանևագետ պրոֆեսոր դասախոսներ հատկապես հայոց լեզվի, գրաբարի և հայ ծողովրդի պատմության դասավանդման համար։ Ճեմարանի այս ուսումնական տարին փակելուց առաջ վերանայվեց ու ամրողացվեց Հոգեոր Ճեմարանի ուսումնական ծրագիրը։ Այդ ծրագիրը իր հիմնական գծերի մեջ մեր կրոնական բարձրագույն բնծայարանների ուսումնական ծրագիրն է։ Բացի աստվածաբարձական, եկեղեցագիտական և կրոնական այլ մասնագիտական առարկաներից, որոնք բնորոշում են Հոգեոր Ճեմարանի նկարագիրը, դասավանդվելու են նաև հայոց պատմություն՝ հին, միջին և նոր դասրերացներով, հայ եկեղեցական արվեստ, հայ եկեղեցական կանոնագիտուրյուն, փիլիսոփայուրյան պատմություն, տոմարագիտուրյուն։ Մասնագիտական առարկաներին զուգընթաց մեծ ուշադրություն է դարձվելու հանրակրթական առարկաների վրա, հատկապես լեզուների գրաբարի, ուսուերենի, ֆրանսերենի։

Հունիսի 17-ին Վեհափառ Հայրապետի մոտ կայացած մանկավարժական խորհրդակցությունում, որտեղ հնենուրյան առնվեցին 1957—1958 ուսումնական տարվա հետ կապված ուսումնա-դաստիարակչական հարցեր, կարևորությամբ նշվեց նաև հաջորդ տարիներին Հոգեոր Ճեմարանում կայուն և մասնագիտական դասագրեր ունենալու և հրատարակելու աներածեցաւություն։

Հաջորդ ուսումնական տարում Հոգեոր Ճեմարանը կունենա հինգ դասարաններ՝ երեք դասարանական և երկուս՝ յարանական, մոտ 70 աշակերտական խմբով։ Այս տարի և նախատեսված է մոտ 30 նոր ուսանողների բնդունելություն։

Վեհափառ Հայրապետի գեղեցիկ կարգադրություններից մեկն այն է, որ Ճեմարանի խարանական բաժնում սովորող ուսանողները պետք է նախապես բնդորկված լինեն հո-

գելուական ասպարեզում ուսիս սարկավագներ։


«Մենք կփափագինք արագ բափով պատրաստի վարդապետներ և բահանաներ,— ասաց Վեհափառ Հայրապետը նույն հանդիպում,— դուք շատ լավ գիտեք և կտեսնեք, թե ինչքան մեծ է կարիքը հոգեոր մշակներու։ Մենք, այս՝ կրդանեք շատ վեղարենք տեսնել Մեր շուրջը, բայց առավել կարենք է Մեզ համար գիտեալ թե ի՞նչ կա վեղարին տակ։ Այս ոգիով է, որ պիտի առաջնորդվինք մենք այստեղ։ ...Այստեղ կանգնած, այս սուրբ տարերուն վրա, ովասենք կերտել նշանականներ, նշանական նկարագիրներ, մշակներ առանց ամորի։ ...Ով որ կկարողանա բմբնել և հասկնալ գեղեցկորյունը այսպիսի կյանքի մը, ով որ կկարողանա բմբնել ու հասկնալ բաղցրությունը այս լուծին, ով որ հոգիով ուժեղ է, բոլ մնա մեր մեջ, բոլ մնա մեզ հետո։


Վեհափառ Հայրապետի կողմից Հոգեոր Ճեմարանի համար ձեռք առնված այս բոլոր միջոցառումները գեղեցիկ ու խանդավառ ապացույցն են այն բանի, որ այսօր մանական Հոգեոր Ճեմարանը դրվում է իր հոգեոր հունի և կոչման բարձրության վրա, որպեսզի այսօր նա հանդիսանա հայ կյանքում «աղբիւր բացեալ գիտուրեանն Աստուծոյ»։

Հոգեոր Ճեմարանը, որպես Ամենայն Հայոց Հայրապետության կենտրոնական և բարձրագույն դպրոց, պետք է միշտ շրջապատված լինի հայ ժողովրդի սիրով ու գործուրանելով։

Այսօր Ս. Էջմիածնի Հոգեոր Ճեմարանը բոլոր հնարավորություններն ունի դառնարու խկապես բովանդակ հայուրյան ՀԱՄԱԳԻՒՆԵԻՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՈԳԵՎԼՈՐ ՕՀԱԽԸ, արձակի Ամենայն Հայոց Հայրապետության դիրքին և հեղինակության։

Ահա այսպիսի հուսարդիչ հեռանկարներով փակվեց Հոգեոր Ճեմարանի 1956—1957 ուսումնական տարին։





ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉ ԿԱՐՈՂԻԿԻ ՍԱՄՐԱ ԵԶՄԻԱՅՆԻ ՏՈՒԻ ԱՄԹԻՎ

(Կիրակի, 25 հունիսի 1957 թ.)

«Յանոն Հօր և Որդոյ և Հոգոյն Արքյ, ամէն:

«Եւ ասէ Աստուած. «Հեղից յնզոյ իմմէ ի վեռայ ամենայն մարտնյ. և մարզակացին ուստեմք ձեր և զստեմք ձեր. և ծերք ձեր երազովք երազեցին, և երփառարդք ձեր տեսիլս տեսցն: ... Եւ տաց հշան յերկինս ի վեր և հշան յերկիր ի խոնարհ՝ արին և հուր և մերիկ ծխոյ»:

(ՅՈՒԼ, թ 28, 30).

«Տեղիդ այդ լիցի Տանար Աստուածոյ և Տուն աղօրից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, և Արռ Քահանայապետուրեան»:

Այսպէ՞ս խոսեցավ Աստված «Երանելի Հօրն մերոյ Արքայն Գրիգորի»:

«Եւ լոյս հոսւալ ի վերուս ի վայր, մինչև յերկիր հասանէր»:

Եվ ահա նեմը Միածինը, «ի ձեռին իւրում ուն մի մեծ սոկի», «սլացեալ խոյացեալ զայր, բատ նմանուրեան արազաքը արծուոյ. և եկն էշ եհանս մինչև մօտ ի յատակս երկրիս, ի շինամէջ բաղաքին և բաղխեաց զրանձրուրին լայ- հատարած զետնայն»:

Եվ «Կանգնեցաւ սիւնն երեղէն՝ Կարողիկէ Եկեղեցի. որ ժողովէ զամենայն ժողովուրդն ի միաբանուրին հաւատոց ի ներքոյ քեց իւրոց»:

Սիրելի՛ հականացյալ հայ ժողովուրդ, տասնեւից փորուկալից դաւերու խորքեն կիառնե այսօր մեր նոզիներու մեջ՝ սփանչըլի երաշք տեսիլք Ս. Գրի- գոր Լուսավորչի:

Երա՛զ և իրականուրյուն դաւերու հետ կիյուսին, Երա՛զ և իրականու- րյուն դաւերու հետ կրածրանան, և դաւերու ծնունդ կուտան՝ հայոց հավատ- ի փառք երգելով:

Այս հավատի փառքով լուսավորված, մենք կանք այստեղ, տո- նելու համար մեր սրտերու Տանար Ս. Էջմիածինը: Ա՛յս է, սիրելի՛ Տանար Աստուածոն և Տունը աղորքի՝ համայն հայ հավատացյալներուն, և Արռող ամե- նայն հայոց Քահանայապետուրյան:

Այսօր Տերը և Փրկիչը մեր՝ Միածին Որդին Աստուծո, խորհուրդներու աշխարհի մը բարձունքներեն, եր կենարաւ հայացքը կուղղի դեպի Խ'ր իսկ հիմնած այս Ս. Տաճարը և աշխարհի Հայաստանյայց:

Այսօր, մեր բոլոր սուրբերը, հայոց պատմության ոգիով կյանք առած, մեզ նետ ծննդիր, կաղօրեն անձան և իշման հրաշքին փառքը կօրհներգեն:

Այսօր, Մեր բոլոր զավակները հավատացյալ, ուր որ ալ զտեվին անոնք աշխարհի համբարներուն վրա, իրենց եկեղեցիներու կամարներուն ներմէ, իշման տեսիլքը կտեսնեն, էջմիածինը կերազեն և իրենց երազով ոսկի՝ կմիանան մեզի:

Եկե՛ք, հարազատնե՞ր Մեր, բոլոր ծագերեն, Եկե՛ք, մոտեցե՛ք, Երկրպագեցե՛ք իշման հրաշքին՝ այս Ս. Սեղանին առաջ, բանզի հրաշակերտված այս հրաշք Տաճարով, ժողովուրդը մեր հրաշքով ապրեցավ դարեր ու դարեր...

Այս է հրաշքը հայոց հավատին:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին այսօր կտոնե իր Մայր Արոռ Կարողիկե Ս. էջմիածնի հիմնադրության տարեղարձը: Հազար վեց հարյուր հիսուսն և շորու տարիներ անցած են այն սուրբ օւերեն, երբ հայ ժողովուրդը վերածնավ Միածնի իշման լույսի փայլատակումնվ: Քրիստոսի սրբով արգասափորվեցավ հայ նոզին և բացվեցավ նշմարիս գիրքը հայոց պատմության: Ու մեկ դար շանցած, Ս. էջմիածինը դարձավ ամրակուր բերդ մը հավատիր. ան կազմակերպեց Հայաստանյայց Ս. Եկեղեցին, միավորեց հայուն նոզին, ներքին ուժ և իմաստ տվակ անոր, անխախտ ու ապահով նեցուկ եղակ հայ պետության և դրշակիր Մայր Երկրի անկախության: Եվ ուրիշ հրաշքով մը, Ս. Մեսրոպի ձեռամբ, ան տվակ մեր ժողովրդին զիր ու դպրություն, և Ս. Գրիգոր պարզմանուրյամբ՝ հիմք դրակ հայ մատենագրության:

Ս. էջմիածինը վառեց կրակը հայ մշակույրին:

Հայ ժողովուրդը ծնավ ու ապրեցավ, կապրի ու պիտի ապրի՝ լուսաշող ծխածնուումվը Գրիգոր և Մեսրոպ սուրբ լուսավորչներու Երկնառակ տեսիլքներուն: Այդ տեսիլքներդը Ս. էջմիածնինը «Եղիցի լոյս»-ն է հայոց պատմության:

Ս. էջմիածինը անոնց լույսերով դարեր շարունակ կերտեց Եղիմը մեր Ազգի մատին, նոզիին:

Հայ ժողովուրդը բերես միակ ժողովուրդն է, որ իր իսկուրյունը զտավ, ինչզիներ իրականացուց և իր առավելագույնը տվակ՝ Քրիստոսի սիրո նոր աշխարհին մեջ:

Հելլենները անմահացան իրենց փառապանձ Պերիկլեսյան դարով, Քրիստոս նինգիներ իրականացուց և առավելագույնը տվակ՝ Քրիստոսի սիրո նոր աշխարհին մեջ:

Հայոց մեջ, սակայն, ոսկյա վերածնումդը՝ սմանչելի հանդիպումը եղակ մարդու և Աստուծո միատեղ ծնունդին:

Քրիստոնեուրյունը իշակ նիեղեն շաղախի մը նման հայ ժողովրդի նոր ընձյուղով նոզիին վրա, նիշտ այն պահուն, երբ այդ նոզին, տակավին փափուկ կաղապարներու մեջ՝ իր ձեր կորոներ...

Ս. էջմիածինը այն մայր հնոցը եղակ, ուր դարբնվեցան անեառ ձեռքը հայոց հանճարին և այն գանձարանը, ուր մեկտեղվեցան այդ հանճարի գանձարները լոյս:

Ս. էջմիածինը մեր Սինա լե՛ռն է, մեր Ակրոպո՛լը, մեր Ս. Պետրո՛սը:

էջմիածինը սակայն անցյալ չէ միայն. ան է նաև ներկա և մեր ապագան։ Կենդանի է ան ու մշտանորոգ։ Ս. էջմիածինը միշտ կրաշխավի ու չի նվազիր. ինչքան բաշխավի, այնքան կշառանա, ինչքան լույս սփռե՝ այնքան կշռղա։ Դարեր կուգան, դարեր կանցնին, ան կրագրանա, կլուսավորե ու կներշնչի միշտ. կյանե տաղով՝ կապրի...

Սովեր, օվկիանոսեր կամ օտար ձեռքեր կրնան մեզ բաժնել, բայց էջմիածինը միշտ մոտ է մեզի։ Եվ ինչքան հնոր, այնքան մերձ է ան, այնքան կղաղնա խորհուրդ և հրաշք, երազ և խոկորյուն, հույս և ստուգուրյուն։

Եվ անա մենք, այսօգաններս, կանգնած աստվածակառույց այս Ս. Տաճարի սալերուն վրա, հափշտակված կդիտենք՝ մեր նախնյաց հավատի ու սիրո լոյսերով հորինված կամարներն այս սուրբ։ Մեր հոգիներու բոլոր լաւերավ կիպինք այս հազարամյա ծանր քարերուն, կշնչենք խորունկ՝ մրնոլորտին մեզ այս խորհուրդներով լեցուն։ Անիմանալի սարսու մը բաղցր և այրող, կիսուրկե մեր էօրյունը ամբողջ և կփոխադրվինք տարբեր աշխարհ մը՝ խոր իմաստներու, իրավ արժեքներու, անկորնչելի գեղեցկուրյուններու։

Ս. էջմիածինի սիրով վառված, կանք անա այստեղ, ու կը մնանք այսպիս։

«Հերքը մի պահ մերն է հիմա», — պիտի ըսեր մեծ բանաստեղծը։ Եվ անցնելե առաջ այս անցավոր կյանքի հովիտեն, կուզենք բար մը ևս ավելցնել այս բազմադարյան բարերուն վրա։ Կուզենք տող մը ևս շարել մեր երկարագիր մազաղաբներուն մեջ և պոտ մը լույս ևս կարեցնել կուզենք Ս. Լուսավորչի անմար կանքեղին մեջ։ Մենք ներկա ենք այստեղ մեր ժողովրդի կյանքին, սրտին մեջ, Արարատի փեղերուն, իշման վեմին վրա։ Եվ նոր կյանք առած՝ կապրի էջմիածինը մեր հոգիներեն ներս։ Ան կխոլկա և կորոնե, ան կգործե, և միշտ կհուսա և լուս կաղորե...»

Արդ, հայ՝ ժողովուրդ, «Զգոյշ լեր աւանդիդ, որ ժեզդ նաւառացաւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ»։ Մեացի՛ր հավատարիմ քու սուրբ հավատիդ։ Ֆու մայրենի բաղցրանու լեզվիդ, քու սրբուրյուններուդ, քու մշակույրիդ լույս սրժեքներուն, վերածնած քու Մայր Հայրենիքիդ և ամենասուրբ Ս. էջմիածնիդ։

Լուսավորված և զորուրյամբ լեցված՝ Փրկչի իշման խորհրդով և Օշականի Սեծ Սուրբին լույսով, այսօր մենք բոլորս, բոլորս անխափ, որ հայ անոնք իկրենք արդար պարծաճեռք՝ Մայր Հայրենիքին ներս, թե ի սփյուռս աշխարհի ցրված բեկորներ, ոլստենք շենցնել, ոլստենք ծաղկեցնել և փառավորել՝ մեր հավերժուրյան կենդանի վկան՝ Մայր Արոռ Ս. էջմիածինը ամենայն հայոց։

«Եղիցի, եղիցի և եղիցի»։

Եվ ամուր է Մեր համոզումը, թե այս ոլստը՝ իրավ ապրումն է համայն հայ ժողովրդին։ Զկա նշմարիտ հայ, որ զգավանի Ս. էջմիածինը. չկա նշմարիտ հայ, որ բաժանված ըլլա իր Մայր Արոռնեն։ Ս. էջմիածնեն բաժանված շենք նկատեր Մենք հայ ավետարանական հարազատները Մեր, և ոչ իսկ անոնք, որոնք իրենց անոնքը կապած են Հռոմին։

Իսկ անդին, Անքիլիխասի ափերուն, երե դեպի անշատում, դեպի ներձում լինացողներ կամ, միշտ հուսով ենք Մենք, թե կվերադառնան Հայ Եկեղեցվո սիրո միուրյան մեջ, Կիլիկյան Արոռի օրինապահ միաբանուրյան և ժողովրդուրյան կողքին, ընդհանուր հաշտուրյամբ։

Ամեն բան վեր, Ս. էջմիածինը կմիացնե զմեզ բոլորս՝ երեկ և այսօր, միշտ և հավիտյան։

Սիրելի՝ ժողովուրդ, հայտնի է բոլորիդ, մասավանդ ձեզ՝ հայաստանցիներ, թե մեր օրերուն Ս. էջմիածինը նոր կյանքի սեմին՝ կզանվի լուսավոր հորիզոնի առաջ: Անա բարի են ժամանակները և հուսագրիչ՝ բոլոր նշանները: Մեր կողմին է մեր ժողովուրդը, Մեզ նեցուկ է մեր Հայրենի պետուրյունը, Մեզ օգնության ձեռք կերկարեն Սփյուռքի Մեր հարազատ զավակները: Կզզանք, կտեսնենք, թե բարի է այդ ձեռքը և առատարաշխ:

Եվ այս օրերուն մեր կյանքի ճամբան առավել կպայծառանա՝ հավետ անձուաց երշանկանիշատակ Գալուստ Կյուպինիանի բողած ավանդի կենսագործումը:

Թող աշխարհ գիտեա, թե Մեծ Բարերարի հոգվոր պարզեռվ, հիմնովին և ամբողջապես պիտի վերաշինվի՝ բազմադարյան այս Ս. Արոռը իր խոյր ուրավայրերով, իր բոլոր հաստատուրյուններով:

Քրիստոնեության սյուն Ս. էջմիածնի վերաշինությունը Մեր կյանքի ճպատակն իսկ է:

Երազը անզամ մը ևս իրականություն կդառնա:

Ո՞վ հոգվոր Մայր մեր՝ Դուռ Ս. էջմիածին, այսօր, այս սուրբ աղորքի պահուն, երբ թեզ կերգենք, կփառավունենք սիրով անարատ, մենք՝ զավակներդ և ծառաներդ, հավատքով լեցուն, անզամ մըն ալ կոխտենք թեզ պայծառացնել, թեզ ծաղիկ դարձնել, թեզ ուրախացնել, որպեսզի թեզմով Աստված ընդ մեզ մնա և մենք՝ ընդ Աստուծուն:


«Պարծանեմ զօրութեանց մերոց Դուռ ևս և ի կամս քո՝ բարձր եղիցի եղիւր մեր» (Սաղմ. ԶԸ, 18):

Արդ, Ազգ Մեր սիրելի՝, ժողովուրդ հայոց, «Եկայք շինեսցում սուրբ զյուրանի լուսոյ, հանգի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Ողջույն և մալրանեմ և բյուր օրինություն ձեզ բոլորիդ, հարազատներ՝ Մեր, Միածնաէջ Մայր Տանարեն ամենայն հայոց:

«Շնորհի և զօրութիւն Միածնի Որդույն Աստուծոյ մերոյ եղիցին ընդ ձեզ: Ամէն»:





ԾԱՂԿԱՔԱԼ ՇԱՐԱԿՆՈՑԻՑ

ՇԱՐԱԿԱՆ ԷՇՍԻԱԾՆԻ

Եղ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց բնդ նմա,
Չայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկալք շինեսցուք սուրբ զիսորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

ՇԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի,
Քանզի Քրիստոս արքայն երկնից
Այսօր պսակեաց զիեզ խաչին խրով,
Եւ զարդարեաց զամուս քո սբանչելի փառօքն խրովք:

Խնդա յոյժ, դուստր Սիովնի,
Քանզի երկիրս երկիքն եղեն
Այսօր վերստին քո նորոգմամբ,
Եւ թագաւորն երկնաւոր հանեցաւ բնակիլ ի քեզ:

Ընդ դասս եկնաւոր զօրացն,
Վեր առեալ տօնեմք քեզ
Այսօր զանդադար փառաւրութիւնս.
Ուրախ լեր, հարսն անարատ, անքնին քո խորհրդով:


ՍԱՂԹԱՆՔ Ի ՏՕՒԻ ՍՈՒՐԲ ԷջՄԻԱԾՆԻ

ՏԵՌ ԱԽԵ և Փրկիչ Յիսոս Քրիստոս, որ աղօթիմ և միշնորդութեամբ բազմաշարշա
վկային եռ և Հօրեն մերոյ Մրբայն Գրիգորի
Լուսաւորչին, մեծաւ փառօք և բազմութեամբ
գօրացդ լուսեղինաց իշեր յերկնից ի դաշտն
Աւարտեան, ի յայցելորիմ փոքր հօտիդ
Քռ Ազգիս Հայոց, և ի ցուցումն յատկականի
սիրոյդ և մեծի ողորմութեանդ. և ոսկէուումբ
բաղինեցն զիսոր անդնդոց, և հալածեցն
զգունդս սահմարտականաց. ուր և լու-

սաձե յօրինմամբ նրաշակերտեցներ. զՄայր
Արքոն մեր զՍուրբ եղմիածին. և արաւեր
զնա շահմարան անսպառելի շնորհացդ աս-
տուածայնոց՝ ի լինել ծնող, դաստիարակ և
կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս Հա-
յաստաննեայց. արդ՝ պահեա՝ զնա անարատ,
հաստատուն և անաղօտ, ի պայծառազար-
դուրին եկեղեցեացս մետրոց և մանկանցս
սոցին մինչև ի կատարած աշխարհի. յորոց
միշտ փառաւորի ամենասուրբ անոն քն
յախտեանս յախտենից. ամէն:

ՀԱՅՈՒԹԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐՈԳ

Ամեն նայի սրտից բխած
 Լսիր այս ձայն, ո՞վ Ասված.
 Երկար կյանի տուր Հայրապետին,
 Երկար օրեր Հայոց Հոր.
 Տե՛ր, անսատան պահիր դու միւս
 Դո իսկ նիմնած Մայր Արքոն:





ՏԱՂ ՍՈՒՐԲ ԷջՄԻԱԾՆԻ

Կիտվինք զեանէ երկնյա ծովին,
Վարդ կու բաղենք ներկվա հովին,
Թամամ աշխարհ քեզ կը գովին,
Սալվու շինար, էջմիածի՞ն:


Էջմիածին բարձր սար ա,
Աղրբներդ կարմիր քար ա,
Քո մատաղդ կապույտ գառ ա,
Սալվու շինար, էջմիածի՞ն:

Էջմիածին, դու հեռու՝ զորքդ մոտիկ,
Մեցդ կապեր կարմիր գոտիկ,
Ըստավորդ գառ գլուխ, ուս բորիկ,
Սալվու շինար, էջմիածի՞ն:

Էջմիածին՝ ալա դարի,
Թամամ աշխարք ուսէդ բափի,
Քո Մեռոնդ անկրակ կեֆի,
Սալվու շինար, էջմիածի՞ն:

Էջմիածին ուշար դուշ ա,
Ըստավորդ գառ դոշա-դոշա,
Խնդրում եմ ինձի տաս փեշա,
Սալվու շինար, էջմիածի՞ն:

Ես եմ Ակոր Ախտավանցի,
Ազգատակով Երևանցի,
Ես արծանի չի, քեզ զովեցի,
Սալվու շինար, էջմիածի՞ն:





ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

~1957 թ. ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ՆԻՍՏԵՅ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
լավեց Մայր Աթոռի հաշվապահության 1955
թվականի երկորդ կիսամյակի հաշիվների
ստուգման արդյունքների մասին Վերստու-
փիչ հանձնաժողովի զեկուցումը (զեկուցող՝
պ. Ե. Ալեքսանյան):

Գերագույն հոգևոր Խորհուրդը գոհունա-
կությամբ նշեց, որ վերջին շրջանին զգալիո-
րեն բարելավվել է Մայր Աթոռի հաշվապա-
հական գործի դրվածքը և խստորեն պահ-
պանվում են գործարքների օրինական ձևա-
կերպման կանոնները:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հաստատե-
լով Վերստուփիչ հանձնաժողովի զեկուցման
մեջ նշված դիտողություններն ու առաջարկ-
ները, ուրախությամբ արձանագրեց Վերստ-
ուփիչ հանձնաժողովի կատարած բարե-
խիղճ աշխատանքը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՍՊԵԿ-
ՏԱԿԱՆԻ ՀԱՍՏԱՏՎԵցԻՆ ՎՐԱՀԱյոց թեմա-

կան խորհրդի 1957 թվականի հունիս 6-ի
նիստի որոշումը՝ արժանապատիվ Տ. Ղազար
ավագ քահանա Գրիգորյանի, ինչպես նաև
Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի
թեմական խորհրդի 1957 թվականի ապրիլ
12-ի որոշումը՝ արժանապատիվ Տ. Վահան
ավագ քահանա Բավարրեկյանին սույն թվա-
կանի հունիսի 1-ից ամսական 400-ական
ուռուի ցկյանս կենսաթոշակ նշանակելու
մասին:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
կարդացվեց Երևանի Ս. Զորավոր եկեղեցու
նորոգման մասին եկեղեցական խորհրդի նա-
մակը և որոշվեց հանձնարարել Մայր Աթոռի
գլխավոր ճաշտարապետ պ. Արծըունի Գա-
լիկյանին՝ ներկայացնել նորոգման նախա-
հաշիվ 27 000 ռուբլու սահմաններում, որից
17 000 ռուբլին հայթայթել ծխական միջոց-
ներից, իսկ 10 000 ռուբլին՝ ի հաշիվ Ս. Զո-
րավոր եկեղեցու հասույթների:





ՄԱՅՐ ԱԹ-ՈՒՒ ՏՈՆԸ ՍՈՒՐԲ ԷՇՄԻՑՃՆՈՒՄ

Հունիսի 23-ին, կիրակի, «Տօն Կաթողիկէ Ս. էջմիածնի»:

Շաբաթ օր երեկոյան Վեհափառ Հայրապետը, եկեղեցական մեծաշուր հանդեսով և ուշաշափառ-ով, առաջնորդվեց Մայր Տաճար, ուր նախագահեց կիրակամտի ժամերդուման:

Մայր Աթոռի մեծ տոնն է այսօր. Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցելու Վեհափառ Հայրապետը:

Առավոտ կանուխ Ս. էջմիածին են հասնում մայրաքաղաքից, շրջաններից և գյուղերից ուխտավորների մեծ բազմություններ: Երևան—էջմիածին երթուղու վրա աշխատում են բազմաթիվ մարդատար ավտոմեքենաներ, Ս. էջմիածին փոխադրելով ուխտավորների նորանոր խմբեր:

Առավոտյան ժամը 11-ին, զվարթագին և տոնական, դողանջում են Մայր Աթոռի գանգերու, Վանքի բակում հավաքված հավատացյաների բազմությունը անհամբեր սպասում է Վեհափառ Հայրապետի գալստյան:

Վեհարանում կազմվում է եկեղեցական թափոր: Նորին Ս. Օծությունը, զգեստավորված, հայրապետական ամպհովանու տակ, սուրբ խաչով ու Ավետարանով, խնկով ու շարականով, առաջնորդվում է Տրդատյան դուռն առաջով գեպի Մայր Տաճար: Թափորի առաջ տարվում են Հայրապետական գավագանն ու քողոր: Ճանապարհի վրա, գեպի Տաճար, ժողովուրդը, խանդավառորեն և սրտագինս, ողջունում է Վեհափառ Հայրապետին:

Ավագ Սեղանի առաջ լվացման արարողությունը կատարելուց հետո, Վեհափառ բարձրանում է Ս. Սեղան: Ակսվում է հանդի-

սավոր հայրապետական սուրբ պատարագը: Վեհափառ Հայրապետին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազնները, Հոգեշնորհ Տ. Վահան, Տ. Մուշեղ, Տ. Մեսրոպ վարդապետներն ու Տ. Հովհիկ արեղանի Մայր Աթոռի երգախոսմբը, Հանդիսավոր ու դաշն, երգում է Եկմալյան պատրագը:

Մայր Տաճարի աշակողմյան և ձախակողմյան դասերում կանգնել են Գերագույն Հոգուորհու Խորհրդի և Վեհստուգի հանձնաժողովի անդամները, Ճեմարանի դասախոսական կազմը և վանքի ամբողջ պաշտոնների վահանը:

Տոնականորեն զարդարված և շահավորված Մայր Տաճարում առ Աստված են բարձրանում պատարագի Սրբազնագույն Քահանայապետի աղոթքի մրմրմանները և հավատացյալ ժողովրդի սրտագին մալթանքները՝ Մայր Աթոռի հավերժության և Վեհափառ Հայրապետի թանկապին կյանքի արկշատության համար:

«Ուրախ լիր, Ս. Եկեղեցի»:

Այսօր մանավանդ ուրախ է Ս. էջմիածնը, ոքանզի երկիրս երկինք եղեն այսօր վեհստին քո նորովմամբ, և ոփ քեզ հանձնաւ բնակիլ Տէր Աստուած հարցն մերոց»:

«Հայր մերա-ից առաջ Վեհափառ Հայրապետը, սուրբ խաչը և Հայրապետական գավագանն ի ձեռին, խոսում է օրվա տոնի մասին իր ներշնչված և գեղեցկահյուս քարոզներից մեկը»:

Վեհափառ Հայրապետի գարովը ձայնափուլեց երևանի ուղիուկայանից նույն գիշերը, ժամը 11.30-ին:



Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայւապետի հանդիսապետությամբ, հջման Ս. Սեղանի առաջ կատարվում է Ս. էջմիածնի մաղթանք: Մայր Տաճարի կամարների տակ և ի ըստ ժողովրդական հնշում է Ս. էջմիածնի տոնի առթիվ գոված հոյակապ աղոթքը. «Տէ՛ր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս..., պահեա զՄայր Աթոռն մեր անարատ, հաստատում և անազօտ, ի պայծառագաղութիւն եկեղեցեաց մերոց և մանկանցն սոցին մինչև ի կատարած աշխարհի»: Ժողովրդը իր սրտաբովի «ամենաներով միանում է աղոթքին և բարեմաղթություններին»:

Տաճարում եկեղեցական հանդիսությանց ավարտից հետո, մեծահանդես թափորով Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մաղլիա գահին և բազմում Հայրապետական Գահի վրա: Մայր Աթոռի երջանիկ տոնի առթիվ Վեհափառ Հայրապետին ողջունում է հանուն հայ հավատացյալ ժողովրդի՝ Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների՝ լուսարարապետ գերաշնորհ Տ. Մահակ արքապիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը:

Խորապես հուզված Մայր Աթոռի մեծ տոնի առթիվ արտահայտված համաժողովրդական այս բարեմաղթություններից, Վեհափառ Հայրապետը օրհնում է «Համայն Ազգն Հայոց», Հայրենի պետությունն ու ժողովրդը, մաղթելով պայծառություն եկեղեցիներին, է՛լ ավելի բարգավաճում՝ Հայրենիքին և խաղաղություն՝ բովանդակ աշխարհին:

Երեկոյան ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը, կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն Մայր Աթոռի տոնի առթիվ:


Հրամակիրյաների թիվումն էին մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, Գերագույն Հոգածոր Խորհրդի և Վերատուգիչ Հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, «Էջմիածնի» ամսագրի խօժբագրությունը, Մայր Աթոռի պաշտոնելությունը և այլ հրամակիրյաներ:

Առաջին բաժակը առաջարկեց Վեհափառ Հայրապետը ի պատիվ Մայր Աթոռի մեծ տոնի, որն նմանապես ընդունելոց ծափահարություններով: Հոտնկայս երգինց միաբերան «Էջմիածնին ի Զօրէ» շարականը:

Երկրորդ բաժակը առաջարկեց Գերագույն Հոգածոր Խորհրդի անդամ պլոտ. Արարատ Ղարիբյանը՝ Վեհափառ Հայրապետի կենացը, որը նմանապես ընդունելոց ծափահարություններով: Ապա հարգելի պրոֆեսորը սրտագին փոսքեր ասաց Մայր Աթոռի վեհագույն և Վեհափառ Հայրապետի եկեղեցաշն, ազգաշն գործունեության մասին: Խորովին երգած «Տէ՛ր, կեցո՛ Դու դհայս մաղթերդից հետո խոսք առին նաև Գերագույն Հոգածոր Խորհրդի անդամներից պ. Ա. Տիրացյանը և պ. Ա. Աղաջանյանը և շնորհագր Մայր Աթոռի տոնը:

Մափահարությունների տակ խոսք առավ նաև սիրելի Վարպետը՝ Ավետիք Իսահակյան, որի արտասանած սրտից բխած խոսքերը խորապես հուզեցին բոլոր ներկաներին:

Հնդունելությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիշ»-ով:





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒՆԻՍԻ 2-ին, ԿիրԱԿԻ, Երկրորդ Մաղաղաբերդ: Մայր Տաճարում պատարագեց և քառովեց հոգինորդ Տ. Մուշեղ վարդապետ Պետրիկյանը՝ օրվա տոնի նշանակության մասին:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒՆԻՍԻ 3-ին, ԶԲԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Հոգևոր Ճեմարանում ակսվեցին 1956—1957 տառումնական տարվա ամավերջի բանավոր մանությունները: Քննություններին ներկա եղան Վեհափառ Հայրապետը, բանաստեղծ Ա. Խաչակրյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը և ամբողջ դասախոսական կազմը:

Քննությունները տևեցին մինչև հունիսի 15-ը, շաբաթ օր:

ՀՈՒՆԻՍԻ 5-ին, ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհարանում միաբանական լսարանում դասախոսուց հոգինորդ Տ. Մեսրոպ վարդապետ Անթագյանը՝ Վեհափառ Հայրապետի Անգլիա կատարած ուղարկության առթիվ «Հայ և Անգլիան եկեղեցիների հարաբերությունը» թեմայի շուրջ:

ՀՈՒՆԻՍԻ 9-ին, ԿիրԱԿԻ, Հոգեգալուստ (Պետքանուստե): Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերազնորդ Տ. Մահմակ արքեպիսկոպոս Տեր Հոգինանիսյանը: Տոնի կազմակցությամբ Մայր Աթոռ տվյալի էր եկել հավատացյալների խուսն բազմություն: Պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, քարողեց հոգինորդ Տ. Վահան վարդապետ Գալուժ բնաբանով: Հավատացյալ սուրբ պատարագի

կատարվեց հոգինանկատյան պաշտոն հունիսի 2-ին Կոստանդնուպոլսում վախճանված գերազնորդ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանի հոգու գրկության համար: Հանգուցյալ սրբազանի կյանքի և գործունեության մասին խոսեց հոգինորդ Տ. Եղիշ վարդապետը Սարգսյանը:

Սուրբ պատարագին և հոգինանկատյան արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒՆԻՍԻ 12-ին, ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, հոգենորդ Տ. Մայտոց արքեպահ Խաչիկյանը միաբանության համար Վեհարանում կարդաց հերկորդ դասախոսությունը Շ. Հայրապետը Սուսկվայում և Մուսիլաշյի հայ գաղութը թեմայի շուրջ:

ՀՈՒՆԻՍԻ 16-ին, ԿիրԱԿԻ, «Ակիպյան Ցարութեան կիրակիցից և յիշատակ եղիալի մարգարէին»: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Տ. Մկրտչյանը: Այսօր Մայր Տաճարում իր անդրանիկ քարոզը խոտեց հոգինորդ Տ. Հովհակ արքեղա Սանթուրյանը, ծանրանալով եղիալ մարգարէի կյանքի և նախանձահույզ գործունեության վրա:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒՆԻՍԻ 17-ին, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Տօն սրբոց կուսանացն Հոփիսիմեանց»: Նախատնակը և առավոտյան ժամերգությունը կատարվեց Ա. Հոփիսիմեանց վանքում: Սուրբ կույսերի նահատակության տարեդարձի առթիվ Ա. Հոփիսիմեանի տաճարում պատարագեց և քարոզեց վանքի վանահայր հոգինորդ Տ. Սահապետ վարդապետ Մուրադյանը: Քարոզիչ Մայր սուրբ վեհ հանեց սուրբ կույսերի նահատակության

դեղեցկությունը և մահվան դեմ խիզախելու քաջությունը՝ հանուն քրիստոնեական կրոնի վեհ իդեալների:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 10-ին Հոգևոր Ճեմարանում, փոխ-ստեղծի նախագահությամբ գումարվեց մանկավարժական խորհուրդ, որն ամփոփեց 1956—1957 ուսումնական տարվա կիսամյա և ամավելօրշի քննությանց արդյունքները: Հետմիջօրին ժամը 3-ին Վեհափառ Հայրապետի մոտ Վեհարանում տեղի ունեցավ մանկավարժական խորհրդակցություն՝ նվիրված 1957—1958 տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Խորհրդակցությունում վեհափառ Հայրապետը որպես մանկավարժ արեց մի շարք օգտակար և անհրաժեշտ գիտողություններ՝ Ճեմարանում աշխատանքը ե՛լ ավելի կազմակերպված անցկացնելու և արդյունավետ դարձնելու համար:

Խորհրդակցության վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց հայտնել իր օրհնությունն: ու գոհունակությունը տեսչության և դասախոսական կազմին՝ Ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներում ձևուր բերված գոհացուցիչ արդյունքների համար:

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց իրեն սեղանակից դարձնել Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմին:

ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Տօն սըրոց կուսանացն Գայիհանեանց»: Ս. Գայանեի վանքում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը՝ օրվա առնի նշանակության և բարեպաշտ հայ կնոջ՝ կյանքում կատարած մեծ դերի մասին:

ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Առող Ս. Էջմիածին այցելեց Հարավալավան երիտասարդական միությունների պատվիրակությունը: Հյուղեղը հղան Մայր Տաճարում և թանգարանում:

ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՍՍՌՄ Ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար Աբրոսիմովը, որին ընկերակցում

ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Յովհաննու Կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի» տոնի առթիվ Ս. Շողակաթի վանքում պատարագեց և տոնախմբվող սրբերի մասին քարոզեց հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ:

ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն Սրբոյ Գրիգորի Լուաւորյան մերոյ ելիցն ի վիրապէն»: Մայր Տաճարում հանգիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Մահակ սրբազնը: Առավոտյան ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետի հրամանով և Սահակ արքավիսկոպոսի շնորհարշխությամբ դպրության շրու աստիճաններ ստացան Հոգևոր Ճեմարանի դասարանական բաժնի 11 շրջանավարտները՝ ծոլակ Աղաջանյան, Խշան Մելքոնյան, Խորեն Մելիսանեցյան, Վագիմիր Կերոյան, Հակոբ Ջենելյան, Հակոբ Զաքարյան, Գասպար Կակոյան, Գրիգոր Ներովզյան, Ֆիլիպոսյան, Վարուժան Սուաքելյան և Աբրահամ Մարգարյան:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ, ԿիրԱԿԻ, «Բարեկենդան Ս. Գրիգոր Լուաւորյի պահոց»: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը: Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հանդիսավոր հոգեհանգստյան պաշտօն՝ բարձրաշնորհ Տ. Գևորգ արքավիսկոպոս Արսլանյանի և Մայր Աթոռի բարեհար նորոգ հանգուցյալ ներսեա Կյուպահնկյանի հոգիների փրկության համար:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էյն Մոսկվայի և Երևանի մի խումբ ճարտարապետներ՝ Միխայլովը, Խոչակը, Մագմանյանը, Աղաբարյանը և տրիշներ: Այցերուները հանգամանորեն ծանոթացան Մայր Տաճարի ճարտարապետական առանձնահատկություններին և պատությանը:

ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ, ԿիրԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հունգարական լրագործների պատվիրակությունը, գիւմարու-



թյամբ «Նեպասարդշագ» թերթի գլխավոր խմբագիր Դեմե Նեմեցու: Պատմիրակության կազմի մեջ մտնում էին «Նեպասարդշագ» թերթի խմբագրական կազմի անդամները Սամոշին, Հոմգարական ռադիոյի նախագահի տեղակալ Դյուզա Շիմոն, և ուստաշ Մարի» անմագրի պատասխանատու խմբագիր Դեմերդ Ֆելիքսը, «Նեպակարատ» թերթի գլխավոր խմբագիր Խշտվան Վարկոնին, Հրապարակախոս Միհմայ Անդրաշ Բոնային, Դեմերդոպրոնի մարզի գլիշալիքելու թերթի գլխավոր խմբագիր Շանդոր Լոյային, «Ասրադֆելու» գլուղացիական շաբաթաթերթի խմբագրի տեղակալ Դյուզա Եկու, Հունգարիայի հեռագրական գործականության և ուստիոյի Մոռովլայի մշտական թղթակիցներ Զաբա Կիշը և Խշտվան Կուչշը, «Գանց ուշագ» գործարանային թերթի խմբագրի Դեմերդ Էրդեկին, Հունգարիայի Սոցիալիստական բանվորական պարտիայի գենտուրի մամուլի բաժնի վարիչ Թիշտ Սաբոն:

Վերջում Հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապետու:

ՀՈՒՆԻՍԻ 11-ին, ԵՐԵԲՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Գերմանական Դեմոկրատական Ռեպարտելիկայի մի խումբ գրողներ՝ արձակագիր, բանաստեղծ և մանկավան գրող, Գերմանական Դեմոկրատական Ռեպուբլիկայի գրագոր Խերերդ էրդեկին, Հունգարիայի Սոցիալիստական բանվորական պարտիայի գենտուրի մամուլի բաժնի վարիչ Թիշտ Սաբոն:

Մայր Տաճարը և եկեղեցական հնագիտական թանգարանը դիտելուց հետո Հյուրերն արժանացան Վեհափառ Հայրապետի ընդունելության:

ՀՈՒՆԻՍԻ 19-ին, ԶՈՐԵԲՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Բիրմայի պալատինատի պատմիրակությունը, որի կազմումն էին Աղյությունների պալատի

սպիկերի տեղակալ Տակին Թեյն Մառնը (պատմիրակության ղեկավար), Սառ Կունին, Սու Լու Լուն, Դուվա Լովանդին, Ու ԲաԴունը, Ու Մառնդը: Պատմիրակության հետ էին նաև ՍՍՌ-ում Բիրմական Միության արտակարգ ու լիազոր դեսպանի կինը՝ տիկին Չինը, ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Պ. Ի. Մորոզովը, ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության պատասխանատու աշխատակիցներ:


Մայր Աթոռում ողջույնի խոսքով Հյուրերին դիմեց Մայր Տաճարի ավագ լուսարար Մահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, որից հետո սրբազնը Հյուրերին բացարձեց Տաճարի ճարտարապետական կառուցվածքը և ծանոթություններ տվեց Մայր Աթոռի ներքին կյանքի մասին:

Ազգությունների պալատի սպիկերի տեղակալ Տակին Թեյն Մառնը իր և պատմիրակության անդամների անունից խորին շնորհակարտություն հայտնեց շերմագին ընդունելության համար: Հյուրերը Մայր Աթոռուց մեկնեցին լավագույն տպակորսություններով:

ՀՈՒՆԻՍԻ 24-ին, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Զիխուլովակյան Ռեպարտելիկայի կերպարիվուսոի աշխատավորների պատմիրակությունը ու կառավանն ումենից ամսագիրի գլխավոր խմբագիր Դուշան Շինգեկարժիքի գլխավորության քարտուղար Մաքս Կիմերինը (պատմիրակության ղեկավար), բանաստեղծ, պետական մրցանակի լասրեատ, ռեժիլվանդակություն և ձեռա ամսագրի գլխավոր խմբագիր Պետեր Հովսելը, արձակագիր Վոլֆգանգ Յոհանն, պրականագետ Էրուարդ Ցալը, ուսա գրականության թարգմանիչ Մոնիկա Հովսելը, քննադատութիւն Քրիստո Վոլֆը և ակնարկագիր Հելմոտ Հասպատմանը:

ՀՈՒՆԻՍԻ 24-ին, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հետմիջուրեի ժամը 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ղարաբաղի 70 հայ ուսուցիչներից բաղկացած խումբը: Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել ուսուցիչներին և շուրջ մեկ ժամ տեղող սիրալիք տեսակցության ընթացքում Գետաքրիվեց Ղարաբաղուած հայ դպրոցների և ուսուցիչների կյանքով:





ՅՄԱՎԵՐՁԻ ՀԵՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԴԵՎՈՐ ՃԵՄԱՐՄՆՈՒՄ

Հունիսի 25-ին, շաբաթ օրը, Ս. Գրիգոր Լուսավորչի ռեխ ի վիրապէնա տունին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Հոգևոր Ճեմարանի պատշաճորեն զարդարված հանդիսությանց սրահում, տեղի ունեցած Հոգևոր Ճեմարանի 1956—1957 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը:

Ֆամը Յ-ին Հոգևոր Ճեմարան առաջնորդից Վեհափառ Հայրապետը, ուր ընդունվեց դասախոսական կազմի, ուսանողության և բոլոր ներկաների խանդավառ ու սրտագին ծափահարություններով: Նորին Ս. Օծության ընկերակցում էին սիրելի Վարպետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վեհապետի հանձնաժողովի պատվարժան անդամները և Մայր Աթոռի միարանությունը:

Հանդեսն սկսվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվազումով, որն ունինքից հունիկայս: Ապա Ճեմարանի երգչախոսութը հանդիսությամբ երգեց «Ուրախ ըն Ս. Եկեղեցի» շարականը, որից հետո հանդեսի բացուը կատարեց Ճեմարանի դասախոս Ա. Հատիսյանը: «Այսօր Կրկնակի ուրախության օր է Հոգևոր Ճեմարանի համար: Առավոտյան սուրբ պատարագին Ճեմարանի դասարական բաժնի ավարտական դասարանը՝ 11 հոգի, Վեհափառ Հայրապետի բարեհաճարառությամբ, արժանացավ դպրության շրու աստիճանների, իսկ այժմ՝ Ճեմարանի ամբողջ ուսանողական դասարանը՝ 1956—1957 ուսումնական տարվա ընթացքում իր ձեռք բերած գիտելիքները, երգի, արտասանության,

ինքնագիր դանաստեղծության և շարադրության վերածված, որդիական անհում երախտափության հիմ, իր սիրելի և գորովագութ Վեհափառ Հայրապետին է ընծայաբերում, ասելով. «Զքոյս ի քոյց Քեզ մատուցանեմք»:

Ամավերջի հանդիսությունը բազկանում էր երկու մասից: Առաջին բաժնում կատարվեցին իմացական ազատ մրցություններ (երգ, արտասանություն, ինքնագիր բանաստեղծություն և շարադրություն), իսկ երկրորդ բաժնում լավեց Հոգևոր Ճեմարանի տեսչության 1956—1957 ուսումնական տարվա գործունեության տեղեկագիրը:

Առաջին բաժնի արտասանական մրցություններին մասնակցեցին Ա. Մարգարյանը («Արլու շնար, էջմիածին»), Ն. Պալյանը («Դավթի հրաժեշտը»), Ի. Մելքոնյանը («Հաւած «Զայն Հայրենական»-ից»), Ապա Ճեմարանի երգչախոսմուկ երգեց «Մեր երգը», որից հետո իրենց ինքնագիր շարադրություններով մրցման մասնակցեցին բարեշնորհ Սարգսի սարկավագ Բերությանը («Դեպի Օշական») և ճեմարանական Կ. Սուրբիասյանը («Ճամելի վանքը»):

«Օդն է զով» խմբերուց հետո սկսվեցին երգի մրցությունները՝ «Վարող», խոսք՝ Գյոթեի, երաժշտություն՝ Ռ. Մելիքյանի (Պետրոս սարկավագ), «Սովոր», խոսք՝ Ա. Խաչակիյանի, երաժշտություն՝ Վ. Մրվաննամի (Կարապետ սարկավագ), «Ալստուծո», խոսք՝ Վ. Թեֆելյանի, երաժշտություն՝ Վ. Մրվաննամի (Կարապետ սարկավագ), «Ալստուծո»,

գելանի (Ժիրայր Շերեմյան), «Յարձր ապրեր», «Անուշ» օպերայից, երաժշտություն՝ Ա. Տիգրանյանի (Խորեն սարկավագ):

Խմացական ազատ մրցությունների արդյունքները, քննչական համաճախողութիւն (փոխ-տեսուչ Մեսրոպ Վարդապետ, դասախոսներ և Հատիւյան, Պարգև Շահբազ, Հրանտ Գևորգյան) ներկայացմամբ, Վեհափառ Հայրապետի թելադրությամբ և Վարդիկի մասնակցությամբ գնահատվեցին այսկերպ. արտասահման մրցության մեջ առաջնություն շնորհել ոչ որի:

Երգի մրցման մեջ լավագույն կատարման համար առաջին մրցանակի արժանացավ բարեխնորհ Պետրոս սարկավագը («Վարդը»), ինքնագիր բանաստեղծության մեջ ապրետի պատկերին արժանացավ Ա. Քասարանի տանող Ն. Պալյանը իր «Ալբարատ» բանաստեղծության համար, որը տպագրվում է ամսագրի սույն համարում, առանձին էլուստ:

Արձակ շարադրության մրցման մեջ առաջին կարգի մրցանակի արժանացան երկու Հոգի՝ Սարգիս սարկավագը («Դնեակի Օշական») և Կ. Սովիտայանը («Տաթևի վանդը»):

Ահա՝ այդ շարադրությունները, որոշ կը ճատկում երով:

Դ Ե Պ Ի Օ Շ Ա Կ Ա Ն

Մայիսյան շինչ առավոտ է: Արևի պայծառ շողերը ողողել են Արարատյան գաշտավայրը: Ամեն տեղ գարնանային բազմերանգ ծաղկների բույրն է զգացվում: Այսօր մենք՝ Շեմարանի ուսանողներս, շատ պում ենք Օշական, խոնարհելու մեր ազգային փառքերից մեկի, երանելի մեծ ուսուցիչ, հայ գրի ու գրականության հիմնադրի և Մեծ Սուրբի նվիրական գերեզմանի առաջ և համբուրելու այն Գնում ենք հետիունն Անցնում ենք այն արահետով, որով մի օր յոթ պարթի երիտասարդների հետ Հմայակ Մամիկոնյանն ու Վահան Ամատոնի իշխանը, ժողովրդի հոծ բազմությունը ճեղքերով, Մեծ Սուրբի սկսուելու գագաղը ուսերին՝ անցել են Նրանք անցել են լացով, աղջիքի մրմուշով և վշտով, իսկ մենք անցնում ենք ներշնչումով, հուզով ու ապրումներով: Մեր սիրազ նրանց սրտերի պես վշտի բոցերում շի այրվում, այլ ուրախության ժիանքների մեջ է:

Արևը կիզամ է:

Մոտենում ենք Օշականին:

Գյուղ շասած, տների կուռքների ու ժառերի միջից դեպի վեր խոյացած եկեղեցու գանգակատունն է երեւում:

Մեր հոգին լցում է ցնծությամբ: Արագացնում ենք բայլերը: Ահա մեծ սրբ գերեզմանը...

Երկուուղածությամբ մտնում ենք եկեղեցին: Անպանույց, պարզ բայց վեհ ու տպագործ է եկեղեցու ներսը: Խորանի առաջ առաջ շարադրած մեր խորանից հնչեցնում

է «Որք զարդարեցին» շարականը, նրա բառերին ու եղանակին հանձնելով մեր չերմ հույզերի ամբողջ հորդությունը:

Շարականի երգեցողությունից հետո Մեսրոպ վարդակատը մեզ առաջնորդում է աչ կողմի խորանը, ուր մի գույք է բացվում և մի քանի աստիճան ունեցող սանդուղքը մեզ ցած է տանում մթասավեր մի անկյուն, որտեղ, բարեկ կամարների հավաենական անդրորի ու լուսիքան մեզ սպիտակին է տալիս մի ցածրիկ, տափակ և անզարդ շիրմաքար: Այսուղ է հանգչում հայ տառերի ստեղծողը, Մեծ Վարդապետը: Այս գերեզմանն է մեր ազգային իդեալի ներշնչարանը:

Ս. Մեսրոպի հոգու հետ մեր հոգիների երկյուղած հաղորդության նվիրական ժամն է:

Անկրնելի հույքի պահեր եմ ապրում: Միտքս սանում է գեպի գարերի խորքը և մշուշապատ անցյալի միջից որպես փարոս իմ աշքերի առաջ ճառագայթում է Ս. Մեսրոպ Մաշտոցի լուսապայծական գեմքը:

Վերադառնում ենք:

Արևը տաք է հիմա, շատ տաք: Մեր սրտերն էլ տաք են և ուժունեան բարախուն:

Զնյամած նորից հետիւն ենք ուղերվում, բայց Ս. Մեսրոպի հրաշագործ սեր բազմացրեց մեր ճանապարհը ուրեմն հոգնությունը մեր վլայից և նոր ոգի ու շունչ ներտրկեց մեր երակների մեջ:

Վերադառնանք՝ լցված Ս. Մեսրոպի հոգով և տեսիլով:

Այս ճանապարհորդությունը մեր բույրին սրտերի և զգացմունքների վլու խորին և անջին տպավորություն թողեց և մենք վերադառնաք լիքրավորված և անմահ Վարդապետի շալզոր այրբենդիմ-ից զատ տուած:

ՎԱՐԴԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՇՐՈՒԹՅԱՆ

Տ Ս Թ Ե Վ Ի Վ Ա Ն Ք Ը

Ամեն մի պատահական դիտովի իր հույսի ապահով տեսքով հիացմունք է պատճառում միշնագարի հայ ճարտարապետության ամենահրաշալի հուշարձաններից մեկը՝ Տաթևի հռչակավոր վանքը, որի պարիսակները պակում էին Որոտանի ուղղահայց կիրճը: 1931 թվականի երկրաշարքը կործանել է այն և հիմա միայն նրա պատերն են մնացել:

Տաթևի վանքի հիմքը դրվեց հայոց Ցեղության թվականին (895 թ.): Մերաւ թագավորունու թագավորության, Սյունյաց Աշոտ իշխանի և Գևորգ Գաւանեցի կաթողիկոսի օրոք: Վանքը կառուց լցուեց ժամանակակից Հովհաննես հայուղուուի ոչակցությամբ: Հայուու կանգուն բարձրություն է ունեցել՝ երկու սյուների վրա հանգչող երա գմբեթը, 48 կանգուն երկարություն և 24 կանգուն լայնություն Բաղկացած է եղել շորս խորանից, բայց ավագ Խորանից ներսից կանգնեցրած է եղել երկու սյուն խորդանշելու թագավորությունը և առաջանական սարքավաններին եղեղեցին կառուցվելս, նրա հիմքերու դրել են առաջանական սարքերի և այլ սրբերի մասունքներ: Կից կատարվել են գրատուն, դամբանատուն, պատապարան, իսկ հարավային դռւն:

գիմաց, հանուն Ս. Երրորդության, կանգնեցրել են մի զարմանալի սյուն, որի բարձրությունը 15 մետր է, իսկ պարագիծը՝ 3 մետր:

Գավագան-սյունն ունի յոթ նիստ (երես), շինված է սրբատաշ քարերից, կանգնած է երկու մեծ քաղման-կյունի խարխիսների վրա: Կերեկ պատվանդանը ավելի նեղ է, կրում է սյան բունք տասներկու հավասար, մեկմեկու վրա դրված աստիճանների վեցերորդի գաղաթը, շրջապատված է պարուածների միակուռք քարամանակով: 1931 թվականի երկրաշարժից հետո, սյան այս մասը ամբացված է շրջանակածն երկաթ-ներով՝ այն ամուռ և հասաւա պահելու համար: Այս վիթխարի քարեզնի զանգվածին բավական է մի բերե հաել և նա կսկսի ճոճվել Շաա ճարտարապետներ և ն փնտու այս հրաշք-սյան ճոճման գաղանիքը: Ումանք կարծել են, թե նրա հիմքը սնդիկով է լցված և գողածն է ազուցված Սակայն ոչ ոք չի կարողացել հայտնագործել բուն գաղանիքը: Ավանդությունը պատմում է, թե Լենկիմուրը մտադրվում է հիմնովին կործանել սյունը: Հրամայում է, որ տասը գոմեց լին և նրանց լերից փոկով կապեն այն: Հրամանը կատարվում է, և երբ գոմեշները մկանը են քաշել, փոկը կարգում է երողորն էլ ձորն են գահավիժում, մինչդեռ գավազան-սյունը մնում է կանգուն և մշտահաստատու:

Նույնիսկ 1931 թվականի երկրաշարժից հետո գավազան-սյունը մնում է կանգուն: Այդ սյունը պիտի մնա հավելու, որպես լուս կոթողը հայոց հավատին, Տաթեցու հավատին:

Վահեին կից եղել է սյունաշարով երկալված նախասրանը, որտեղ, Փատոնի ակադեմիայի օրինակով, ուսուցումը բացողաւ է կատարվել: Հայկական հագույն զարդարանդակի նրբագեղ Հրավաքեներով են ծածկված սալիկները: Վանքը կառուցվել է բարձրագիր տեղում: Կարծեն նա հսկող լիներ գեղատեսիլ բնության:

Մեծ է եղել Տաթեցի գերեն ու նշանակությունը՝ հայ կյանքում նա սկզբից ի վեր հանդիսացել է հավատի, ներշնչման, գիտության և գաղաքարական լուսի աղյուր: Վանքին կից եղել է համալսարան, որն ունեցել է 10 000 ձեռագիր: Համալսարանը հիմնել է Հովհան Որոտնեցին 1345 թվականին, գործել է շուրջ 70 տարի:

Մեծ հոգակ էր վայելում վանքը համալսարանի հնատ միասին: Եղանակության մեջ ալ-տեղաց՝ երեկի էր ի մէջ ամենայն ոչ միայն շնուռածովը, այլև պայծառանայր քահանալական և կրօնաւրական գասիր ի շափ 500 եղբարց: Իր և ծովածատուց վիլխոտայիք, երաժշտական երգոց, նոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբը: Նաև արհեստաւորը նկարչացն և գրողաց անհամեմատքաւ Տաթեց այնքան է հոգակ վայելել, որ նույնիսկ կոչվել է «երկրորդ Աթենք»: Ժ՞՞—Ժ՞ դրերում Տաթեցը իր նշանակությամբ ավելի է պայծառանում հանձինս եռամեծ փիլիսոփա-վարդապետներ Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթեցու Որոտնեցին «իբրե արեգակն փայլէր ընդ ամենայն ազգս հայոց և լուսաւորէր զամանայն աստուածային գիտութեամբ»:

Ունիթունների (միարաբների) գեմ բաւան պալտար մզեց Տաթեցի համալսարանը՝ Հովհան Որոտնեցու գիտավորությամբ: Որոտնեցին, սպիտակա, զպրոցի հետ միասին աեղափոխվեց Ապրակումի, ուր և զախանվեց 1988 թվականին: Որոտնեցու մահից հետո նրա վարդապետմկան ամբոնը շարունակում է իր աշակերտ Գրիգոր Տաթեցին՝ «Քրիստոնածաւալ ազգիւրն, անմար արեգակն, և երկրորդ լուսաւորիչն, վարդապետն ամենայն հայոց...»:

Տաթեցին թաղված է եկեղեցու հարավային պատի առջև, սպիտակ քարերով շինված մատուռ գամբրանի մեջ եկեղեցին կիսավեր է, բայց կանգուն է յոթնալույս վարդապետի մատուռ շիրիմը: Ներկայումս վանքը կիսավեր է, կամարները խորտակված են և այստեղ ամայություն է տիրուու:

Տաթեցի ավերմանը պատճառ են հանդիսացել դարերի ընթացքում բարբարոս հրոսակները և 1931 թվականի երկրաշարժը:

Ներշնչված Որոտնեցու և Տաթեցու հավատով, թափանցենք լուրսի, գիտության օվկիանի մեջ, հետեւ՝ նրամասաւեր վարդապետներին, ընդմիշտ պայծառա պահենք հայ հանճարեղ մտքի երկնակամարի անմար աստղի Որոտնեցու և Տաթեցու անմահ հիշատակը:

Հավերժ անսասանություն՝ Հայաստանայց եկեղեցցուն Հավերժ անսասանություն՝ մէ Տաթեցու լուրս կոթուին: Հավերժ անսասանական փա՛ռ մեր մէծ վարդապետներին:

Կ. ՍՈՒԹԻԱՅԱՅԱՆ

Հանդեսի երկրորդ մասն սկսվեց «Ակոռի կարասը» խմբերգով: Ապա Վ. Կերոյանը ջութակի վրա հաջողությամբ կատարեց «Հովհանական պոեմա»-ն: Տիգրան Ութուշյանը ծեմարանի ուսանողության անումից կարգաց վեհափառ Հայրապետին ուղղված որդիական երախտագիտության և շնորհակալության շերմ զգացմունքով գրված հետևյալ ուղերձը:

Վեհափառ Տե՛ր.

Ուանողության կողմից թույլ տվեք Ճեմարանի ամավերջի այս հանդեսին հայտնի երախտագիտական զերմ և ինքնարտուի շնորհակալություն այն հոգատարության և գորդուրանքի համար, որոնց արժանացանք իրունք Ճեմարանի ուսանողներ, ավելի ճիշտ՝ որպես Զերդ Վեհափառության հոգմոր որդիներ:

Փակվեց ուսումնական տարին: Հետաղարձ հայացքը անցածի վրա՝ մեր պրտերը լցնում է արդար հպատությամբ: Զերդ Վեհափառության և Հոգմոր Ճեմարանի մշակների աշխատանքով ցանվածը սերմանվեց պտղաբեր հոգում:

Այս ուրախ առիթով մեր հոգին ու սիրտը երկյուղածորեն ուղղված են առ Աստված, որ

ժամանակին բացեց մեր աշքն ու ականջը, տեսնելու և լսելու Տիրոջ այգին մշակելու կանցող ձախրդ: Ճիշտ է, դեռ թուզ են մեր զգայարանները, դեռ մեզ շրջապատում է պատանիան անդիտության մշտուշը, բայց շնորհիմ Զերդ Վեհափառության, մենք արդին զգում ենք մեր հայրերի բոցավառված շահն ոչ միայն լուսը, այլ նաև ջերմությունը: Մենք զգում ենք մեզ ուղղված նայվածքների ոչ միայն ծանրությունը, այլ նաև քաշականներ ու հրավերը: Այդ նայվածքները ամենուրեք մեզ հետ են: Նրանք գալիս են Զեր գիւղավորությամբ ուսուցչական ամբողնից, գրերի էջերից, սերունդների հոգին իրենց մեջ բյուրեղացրած այս սրբատաշ քարերից: Դուք, Վեհափառ Տեր, մեզ սովորեցրիք խոսել մեր պապերի հետ, հասկանալ նրանց, ապրել նրանց գաղափարներով: Այդ միաձուումը անցյալի հետ, նույն ժամանակ թափանցումը այսօրվա իմաստին, հասցրին ծեմարանի այս տարվա ավարտական գուասարանի այսօրվա նվիրման և ողջակիցման, ու մենք կփայլենք մեր ավագների հետքերով:

Մեր սրտերը լին են անհուն երախտագիտությամբ դեպի Զերդ Վեհափառության գործակիցները, այս նվիրական հաստատության բոլոր միարաններն ու աշխատողները: Մեր սրտերը լին են անհուն երախտագիտությամբ և զերմ սիրով նաև ղեպի Հայրենի կառավարությունն ու բովանդակ հայ ժողովորդը: Ծեմարանը կոսավորչի կանթեղն է, ու թե Արագածի կատարին կախված, այլ սուրբ Խորանների առաջ բոցավառվող: Մենք դիտակցում ենք այդ կանթեղում լցված յուղի, հայ հոգու, սրտի ու մտքի թանկությունը, ստեղծագործությունը և ուխտել ենք անել մեր կարելին՝ այդ կանթեղի ձեթը անխառն ու մշտնչենական դարձնելու համար:

Մենք ուրախ ենք ուսումնական այս տարեշրջանին ձեռք բերված հաջողություններով:

Գիտենք սակայն, որ սա «սկիզբն է երկանց» և անհրաժեշտ է բավական երկար ժամանակ, մեր ուժերից գուրս գոնվող բոլոր միջոցների օգնությունը, շարունակելու համար սկսածքը: Դրա համար, երբ շնորհակարություն ենք հայտնում Զերդ Վեհափառությանը, հայ ժողովրդին՝ Հայրենիքում կամ ի սիյուս աշխարհի, Մայր Աթոռի միաբանությանը և ծեմարանի դասախոսական կազմին, նույն ժամանակ ինդրում ենք, որ շարունակվի ինամքը և առաջնորդությունը մեր հոգու և մարմնի:

Այս հանդիսավոր առիթով՝ թուզ տվեք, Վեհափառ Տեր, մաղթելու, որ Զեր շուրջ ու ղեկավարությունը միշտ անպակաս լինեն


մեր վրայից ու կրթության այս սուրբ հարկից, ուր թրծվում են մեր հոգիները, մտքերն ու կամքերը, որպեսզի կարողանանք պատղարերել Զերդ Վեհափառության և բոլորի վաստակը մեր ուսանողական տարիներում:

«Աշխուց նավաստի» խմբերդի կատարումից հետո Գ. Նկրույլանը դաշնամուրի վրա ապրումով նվազեց Շոպենի «Ինքնարուկի ֆանտազիա»-ն:

«Ոգեստը ծեմարանի փոխ-տեսուչ հոգեշնոր: Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը կարգաց ծեմարանի 1956—1957 ուսումնական տարվա գործունեության ընդհանուր պատկերը ներկայացնող խնամքով դրված հետեւյալ զեկուցագիրը.

«Մայր Աթոռ Ս. էջմիածնի Հոգեստը ծեմարանը ավելի քան տասը տարիներ ապրելով ուսումնա-դաստիարակչական ստեղծագործ կյանք, ձեռք է բերել օգտակար կենսափորձ՝ յուրաքանչյուր ուսումնական տարի առավել հաջողությամբ կազմակերպվելու և նորոգվելու համար: 1956—1957 ուսումնական տարվա սեմին և նկատի առնվեց այդ փորձը: Սակայն ի մասնավորի կենսագործվեցին Վեհափառ Հայրապետի ջանքն ու անիշխական թելադրությունները, որի պատճառով իսկ արդյունքը առավել կերպով զգալի և շոշափելի դարձավ: Այս ուսումնական տարին սկզբնավորվեց հաջողությամբ, ապելի կազմակերպված պայմանների մեջ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ պատվարժան Գերագույն Հոգեստը Խորհուրդը ամենայն բժախնդրությամբ քննության անելով նոր ուսումնական տարվա հետագա աշխատանքները բարեհաջող կերպով սկսելու նախնական բոլոր միջոցառումները, տվեց համապատասխան որոշումներ և վավերացրեց ուսումնական ծրագրը: Համաձայն այս նոր ծրագրի, Ս. էջմիածնի Հոգեստը ծեմարանը առավել հարազատությամբ մնում է իր բուն նկարագրի և կոշման վրա: Կրոնական-աստվածարանական, եկեղեցա-պատմական, կանոնադիտական և եկեղեցագիտական առարկաների հետ զուգընթաց գառավանդվելու էին Հայագիտության, պատմագիտության, Հնագիտության, Հայկական արվեստագիտության բնագավառի առարկաներ, ինչպես և ավելի շեշտվում էր գրաբար և աշխարհաբար լեզվի, ուսաներն ու ֆրանսերեն լեզվուների գառավանդությունը էլ ավելի արդյունավետ հմտերի վրա դնելու անհրաժեշտությունը: Մրագրի վագերացման հետ միաժամանակ կատարվեց Շոպենը ծեմարանի վարչության, դասախուական կազմի լուրջ ընտրությունը, որով շատ հաջողություններ են պայմանավորված:



Ա. Վահակովի երգչախոսությունը և պատմությունը՝ կամաց շուրջ 700 դժ. (1957 թ.)

Վեհափառ Հայրապետի բարեհամ կարգադրությամբ Հոգևոր Ճեմարանի վերատեսուշ էր հրավիրված Կալիֆորնիայի թեմի բոլորանվեր և հարուստ իմացականությամբ օժուղած առաջնորդ գերապատիվ Տ. Շնորհը եպիսկոպոս Գալւստյանը, Դժբախտարար մեր եկեղեցական կյանքի ինչ-ինչ պարագաների բերումով Սրբազն Հայրը շկարողացավ լինել մեզ մոտ:

Դասախոսական կազմը գլխավորում էր նորին Ս. Օծովյուն Վեհափառ Հայրապետ՝ դասավանդելով հոգեբանություն Ա լարանում և Գ դասարանում:

Սուրբ էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմը և վարչությունը իրենց վստահված պարտականությունները կատարեցին ըստ համարավորին լավ, իրենց իմացական և հոգեկան կարողությունները բոլորանվեր կերպով բաշխելով մեր սիրելի ուսանողներին:

1956—1957 ուսումնական տարվա համար նոր ուսանողների ընդունելությունը կազմակերպվեց հաջողությամբ: Ավելի քան 60 թեկնածուներից ընդունվեցին 30-ը, որոնք բաժանվեցին համապատասխան դասարանների: Ուսանողության ընթանուկ թիվը հասավ 47-ի: Գոհուակությամբ պիտի ընդգծել, որ Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանի պատմության մեջ առաջին անգամ լինելով այս տարի արտասահմանի հայ դաղութներից ևս ունեցանք ուսանողների: Այս ուսումնական տարվա ընթացքում ողջ ուսանողությունը ընդգրկված էր մեկ լսարանի և երեք դասարանների մեջ: Տարեկերպին Ա լսարանը ուներ 8 ուսանող, Գ դասարանը՝ 14, Բ դասարանը՝ 9 և Ա դասարանը՝ 9:

Ուսումնական տարվա ընթացքում կարգապահական կանոնների խախտման, այլև անպարկեցած ընթացքի և Հոգևոր Ճեմարանի ուսանողի ազնիվ կոչման անհամապատասխան համարվելու պատճառով հեռացված են 4 հոգի, մնացած 3-ը ազատված են համաձայն իրենց խնդրագրերի:

1956—1957 ուսումնական տարվա աշխատանքները կատարված են ավելի քան գոհացուցիչ կերպով՝ նորին Ս. Օծովյուն և պատվարժան Գերագույն Հոգևոր Խորհրդի նախատեսած ծրագրի, ձեռք առած անհրաժեշտ միջոցառումների, Հոգատար թելադրությունների, Հոգևոր Ճեմարանի վարչության և ուսուցչական կազմի բարեխիղճ, եռանդում, ամենախիստ պատասխանատվության զգացմունքով թելադրված աշխատանքի և ուսանողության ցուցաբերած զանասիրության և կարգապահության շնորհիվ:

Հաջողությամբ իրագործվեցին ուսման ծրագրերը: Դասավանդությունները եղան արդյունավետ: Եկեղեցի հաճախումները եղան կանոնավոր: Դժբախտարար սակայն աստվածաբանական առարկաները, ուսուցչի բացակայության պատճառով, մնացին չդասավանդված:

Ուսանողության մտավոր և հոգեկան կարողությունների արագ և առողջ ածի համար ձեռք առնվեցին բոլոր հնարավոր միջոցառումները, կազմակերպվեցին դասախոսություններ, հանդեսներ, երեկություններ, գրուարզավներ, ուստափնացություն դեպի Ս. Մեսրոպ Մեծ Վարդապետի շրիմը և այլն: Ուսանողության գեղարվեստական ճաշակը զարգացնելու և Ծղկելու համար քանից ուսանողները եղան համերգներում, օպերայում, թատրոնում և կինոներում:

Տեղի ունեցած ուսանողական ժողովներ, որտեղ քննության առնվեցին Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանում ուսումնական, դաստիարակչական, կարգապահական և եկեղեցական կյանքը լավագույն կարգավորելու հարցերը, քննադատավեցին որոշ ուսանողների անկարգապահ և անպատշաճ արարուները:

Այս տարի Վեհափառ Հայրապետի անմիջական հոգատարությամբ նորից համալրվեց Մայր Աթոռի գրադարանը, որն արդեն գործում է կանոնավոր կերպով:

Հոգատար և բարյացագամ վերաբերմունքի հետ միաժամանակ հետևողական խստությամբ և արթնությամբ հետևել ենք յուրաքանչյուր ուսանողի առօրյա կյանքին՝ դպրոցից ներս, եկեղեցում, հասարակական տարրեր վայրերում, ննջարանում, ճաշարանում և այլուր: Ամենափոքր թերություններն անգամ չեն մնացել անվիրել և սրբագրվել են թեկով պատժի միջոցով: Այս տարվա կարգապահությունը Հոգևոր Ճեմարանում եղել է էլ ավելի գիտակից:

Մասնակի ուղարկություն է նվիրվել ուսանողների դաստիարակության գործին: Հետևողականորեն և դասավանդությունների ժամանակ, և զանազան առիթներով նրանց ներշնչել ենք վառ և անխարդախ հայրենասիրություն, անձնվեր ազգասիրություն, եկեղեցասիրական անկաշառ ողի, մեր ժողովրդի դարավոր նվաճումների հանդեպ հարգանքի և պաշտամունքի զգացմունք, և միասնական ներդաշնակ ու համերաշխ կյանք վարելու համոզմունքը:

Վեհափառ Հայրապետի հայրական գուրգուրանքի շնորհիվ մեր ուսանողները գտնվում են կենցաղային հարմարավետ պայմաններում: Ապահովված են լվացելու համա-

զգեստով և այլ զգեստներով։ Սնունդը մըշ-
տապես եղել է լավ։ Ննջարանները իրենց
պարագաներով եղել են հանգստավետ, մա-
քուր և առողջարար։ Ժամանակին հոգ է տար-
վել առողջապահության, լվացքի, բաղանիքի
և սափրվելու մասին։ Օգտվել են կուտուրա-
կան սպասարկման բոլոր ձեռքերից։ Ամեն ա-
ռավու զբաղվել են մարմնամարզությամբ և
օրիւ ազատ ժամերին կազմակերպվել են
խաղեր։

Ուսանողների առօրյա կյանքը ավելի
կանոնավոր հոնի մեջ դրած լինելու համար,
որոշ ուսանողների հանձնարարված էին
պարտականություններ, ինչպես՝ հանդերձա-
պահություն, հանդիսասարահի հսկողություն,
ննջարանի մաքրության հսկողություն և
այլն։ Յուրաքանչյուր դասարան իր պահն
ուներ և նշանակված էր հերթապահություն։
Նույնը նաև յուրաքանչյուր ննջարանում։

Մայր Աթոռ Ս. էջմիածնի Հոգեւոր Ճեմարա-
նի 1956—1957 ուսանոնական տարվա համար
նախատեսված էր 455 000 ուսուցիչ ընդհանուր
բյուզեն։ Բոլոր ծախսերը կատարվել են Հոգե-
վոր Ճեմարանի վարչության պահանջով։ և
Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառա-
վարության միջոցով։ Ուստի բյուզենի կատա-
րողականի հաջվետվությունը վերապահվում
է Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կա-
ռավարչության։

Ուսանողները իրենց ջանասիրության շնոր-
հիվ կիսամյա և ամավերջի քննությունների
ընթացքում հասան լուրջ հաջողությունների։
Վեց ուսանողներ կապարդեատրվեն քննու-
թյուններին լավագույն գնահատականների
արժանացած լինելու համար, չորս ուսանող-
ներ ունեն վերաբննելի և երկու ուսանողներ
կրկնում են իրենց դասարանը։ Վարքի համար
լավագույն գնահատականը ստացած հինգ
ուսանողներ նույնպես կապարդեատրվեն։

Այսօրվա ամավերջի հանդեսին հայտա-
րաված է մրցություն լավագույն զարադրու-
թյան, ինքնագիր բանաստեղծության, արտա-
սանության և երգեցողության ու նվագի հա-
մար։ Այս մրցության նպատակն է երևան բե-
րել ուսանողների սեփական կարողություն-
ներն ու ձիրեները և նրանց զարգացման հա-
մար հնարավորություններ ստեղծել։

Այս է համառոտակի նկարագրված անց-
նող ուսումնական տարվա ընդհանուր պատ-
կերը։ Հիշված հաջողությունների հետ զուգ-
ընթաց ունեցել ենք մեր սիսալները և ան-
շուշա չենք հասել մեր ցանկալի բարձրու-
թյան։ Սակայն հավատում ենք, որ աստիճա-
նաբար կսրբագրվեն այդ բոլորը և Հոգեւոր
Ճեմարանը մոտիկ ապագայում ինքնիրեն
կգտնի լրիվ կերպով։

Վեհափառ Տե՛ր.

Մեկ համար արդեն ավելի քան համոզ-
մունք է, որ Դուք Ձեր ուշադրությունը սկս-
ել եք Ս. էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի վրա
և շատ սրտառուց հույսեր եք կապել նրա հետ։
Անցնող ուսումնական տարվա բոլոր օրերին
ու ժամերին Ձեր հետեղական, խղճամիտ,
սրտագիտ գործուրանքով էիք շրջապատել
Հոգեւոր Ճեմարանը։ Գիտենք Ձեր ակնկալու-
թյունները և ծանօթ ենք այդ ակնկալություն-
ները թելապող Ձեր ազգաշեն մտահոգությա-
նը։ Ձէ՞ որ Դուք ժամ առ ժամ սպասում եք,
որ Ձեր Վեհափառությունը շրջապատված
լինի հավատագոր և հավատարիմ, անխար-
դախի ու անկաշառ, խորու ու խանդավառ,
հայրենասեր, ազգանվեր և եկեղեցաշեն հայ
կղերականներով։ Դուք այդ պահանջում եք
ազգին ներկայանալու համար, մենք այդ
խոստանում ենք Ձեզ տալ առանց ամոթի Ձեզ
ներկայանալու համար։ Ձեր բոլոր հոյակապ
ծրագրերն ու նվիրական իղձերը կյանքի եք
կոչում, Ձեր փայտիայած Ճեմարանը չի թե-
րանա իր երախատիքի մեջ։

Վեհափառ Տե՛ր.

Ս. էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի վարչու-
թյան, ուսուցչական կազմի և մեր ողջ երախ-
տապարտ ուսանողության կողմից ցանկա-
նում եմ Ձեզ երկար և արևոտ օրեր։ Ձեր
կյանքը թող հոլովի ամենայն երշանկու-
թյամբ և բեղմնավոր երախայրիքով։ Թող
լուսավորի կանթեղի շողբը մշտապես
հանգչ Ձեր օջալ գագաթին։

Ճեմարանի տեսչությունը սրտագին շնոր-
հակալություն է հայտնուած նաև Դերագույն
Հոգեւոր պատվարժան անդամնե-
րին, որոնք տարվա ընթացքում հաճախ ներ-
կա գտնվեցին Ճեմարանի դասավանդու-
թյուններին, քննություններին և իրենց օգ-
տակար թելադրություններով նպաստեցին
Ճեմարանի ուսումնա-դաստիարակչական
աշխատանքների բարվոք ընթացքին։

Ամենաշերմ շնորհակալություն մեր բոլո-
րին սիրելի Վարպետին, որ անձանձը ներկա
եղավ ամավերջի բոլոր քննություննե-
րին։

Շնորհակալություն նաև Ճեմարանի դասա-
խոսական ամբողջ կազմին, իրենց բարե-
խիղճ և ազնիվ պաշտոնավարության համար,
և Ճեմարանի վերակացու արժանապատիվ Տ.
Հովհաննես քահանա Մարուքյանին։

Ճեմարանի վարչության զեկուցագրի ըն-
թերցումից հետո, փոխ-տեսուց հոգեշնորհ
Տ. Մեսրոպ վարդապետը հրապարակեց ա-
նոնները այն ուսանողների, որոնք ուսան,
վարդապարքի, իմացական ազատ մրցու-
թյուններում և արտաճեմարանական լավա-

գույն աշխատանքների համար արժանացել էին մրցանակի:

1) Ուսման մեջ առաջնուրյան համար պարզեցարվեցին բարեշնորհ Հովհաննես և Խորեն Սարկավագները (Ա. Ղարաբան), Խորեն Մելիսանիջյան և Հակոբ Ջենեղյան (Գ. Դաստիան), Նուապար Պալյան և Արամ Սահակյան (Ա. Դաստիան):

2) Գերազանց վարդի համար մրցանակի արժանացան Յոլակ Աղաչանյան (Ա. Ղարաբան), Հակոբ Ջենեղյան (Գ. Դաստիան), Մաքսիմ Հակոբյան (Բ. Դաստիան) և Նուապար Պալյան (Ա. Դաստիան):

3) Բացառիկ եկեղեցայիրույան համար պարզեցարվեցին Ռաֆիկ Մկրտչյան (Բ. Դաստիան) և Արշակ Տերտերյան (Ա. Դաստիան):

4) Արտանեմարանական լավագույն աշխատանքների համար նվիրներ ստացան Շավարշ Աշոտյան և Մաքսիմ Հակոբյան (Բ. Դաստիան):

Իմացական աղաս մրություններում (երդ, արտասանություն, շարադրություն, բանաստեղծություն) առաջնություն շահող ուսանողները ևս արժանացան մրցանակների: Մրցանակի արժանացած բոլոր ուսանողները վեհափառ Հայրապետի ձեռքից աշահամրույրով ստացան իրենց նվիրները, դահիճում հավաքվածների ծափերի տակ:

Վերջում իսոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Մեզ համար շատ ուրախալի առիք մըն է այս, երբ Մեր հոգածուրյան ներք գտնվող այս հաստատուրյունը իր աշխատանքներու այս տարվան շրջանը կփակե: Մենք հավաքված ենք ուսնելու Մեր Հոգեկու ձեմարանի 1956—1957 շրջանի ավարտումը: Ս. Ավետարանի մեջ, ինչպես գիտե, բազմաթիվ ձեւով կշեշտվի պարտեր սիրով ու նվիրումով կատարելու զաղափարը: Հիշենք մանավանդ Տեսեսին առակին մեջ Տիրոջ խոսքը՝ «Տուր զիամար տեսնեսուրեան նո»:

Այս հարցումը պետք է ուղղենք մենք այսօր մեր Հոգեկու ձեմարանին՝ դասախոսներուն և մանավանդ ուսանողներուն:

Մեր խոսք ուղղելով նախ դասախոսական կազմին, ուրախուրյամբ պետք է ընդգծենք, որ այս տարի մենք բախտը ունեցանք հմտություն, բարեխիլն և մեր սուրբ հաստատուրյունը սիրով ուսուցիչներ ունենալ: Մեր խոսք կվերաբերի:

Մանոր պատճեններով, գերազնորի Տ. Շենորի եպիսկոպոս Հարողացավ Ս. Էջմիածին ժամանել ստանձնելու համար մեր ձեմարանի տեսչուրյան պաշտօնը: Անցնող այս շրջանին ուրեմն մենք տեսուչ չունեցանք,

բայց տեսչուրյան աշխատանքները իրենց մեջ բաժնեցին մեր երիտասարդ միարակներեն Մելուն վարդապետ և Երուսաղեմի Ս. Արքունի երեմնի միարան Արքուն Հատիւյան: Արքուն Հատիւյան անձնավորուրյունը մըն է, որ ոչ միայն իր հմտուրյունն ու աշխատանքի բացառիկ կորուլ բերած է այս տեղ, այլ նաև իր բավանդակ հոգին, իսկ Մելուն Հայր Սույրը, որ արդար պարծանելով կիրե իր վեղարը, իր պարտեր կատարեց նվիրումով և անպայմանավոր հավատարմությամբ, հակառակ իր շատ երիտասարդ տարիին և փորձի պահասին:

Մեր խոսքը ուղղելով մեր սահերուն, կվերադառնաելք «Տուր զիամար տեսնեսուրեան նո» զաղափարին:

Մենք ամեն առիք օգտագործած ենք բանու և կրկնելու համար, որ Մենք մեր ուսանողներեն շատ բան կապասենք, շատ բան կպահանջենք. Ս. Էջմիածին Հոգեկու ձեմարանը իր սահերեն կպահանջեա ավելին՝ բանուելու կրական հաստատուրյուն:

Մենք կիամենանք հայս, որ դուք ըլլաք մարմնով աղողյ և տոկուն: Ֆիզիկական առողջությունը, մարմնական ուժերու հավասարակշուրյունը կիամենք հիմնական պայմաններեն մին հոգեկան առողջուրյան: Մենք կիամենանք հայ, որ իմացական ձեր կարողություններով ըլլաք ուշիմ, արքուն, նիշտ և արագ ըմբռնեք ու հասկնաք ձեր շրջապատը և հիմնովին յուրացնեք այն, ինչ որ Ձեր ուսուցիչները ձեզ կորցեցնեն: Դուք պետք է գիտուրյուն ամրաւեք անհագ ծառավոլ և սիրով, մանավանդ երեք ուղղությամբ պետք է լավ զինվիկ' ա) Արքական զիտելիքներով, բ) հայերենով և գ) հայ ծողովրդի պատմուրյամբ: Դուք ոչ միայն պետք է սորվիկ' այս բոլորը, այլ տիրապետեք անենց: Հայոց պատմուրյունը, նեմարանցի համար, պետք է ըլլա երկրորդ Ավետարան: Տարիներ հետո, երբ դուք բարողեք մեր ծողովրդին, ձեր մեկ ձեռքին պետք է ունենալ Հիսուսի Ավետարանը, իսկ մյուս ձեռքին՝ հայոց պատմուրյան գիրքը:

Մենք կուզենք նաև, որ դուք դառնաք բարյական նկարագրի տեր մարդեր: Եվ այս կլնագծենք մասնավոր կաւելուրյամբ: Առանց մարդկային առաքինուրյուններու, հոգեուրականը կծախոսի իր ասպարեզին մեջ անխուսափելի կերպով: Ներքին, հոգեկան հավասարակշուրյուն և կարգապահուրյուն, անշահախնդրուրյուն, համեստուրյուն, պարկեշտուրյուն, եղբայրսիրուրյուն և այս բոլոր առաքինուրյուններու բազմ ու զարգացմանը հավատ և սեր և հավատարմություն առ Աստված և դեպի մեր Ս. Եկեղեցին և դեպի մեր Ս. Էջմիածինը:

Այս հավատքն ու սեր և այս անպայմանավոր հավատամորյունը ձեւ կյանքի կանոնը պետք է ըլլան:

Ու այս բոլորնեն վերջ, Մենք կպահանջենք նաև Ձեզմեն նշարիտ ժողովրդասիրուրյուն և անկաշառ ու անհանաչ հայրենասիրուրյուն: Մայր Արռողի միարանենք՝ և ուսանողնենք՝, միշտ հապատուրյամբ պետք է մտածենք, քեզագացինենք եթե մեր վերածնած Մայր Հայուսանին և Հայրենիքի համար գործողներու ու զոհաբերողներու առաջին զժին վրա պետք է զանվիլի դրաք:

Սիրելի՝ ուսանողներ, ահա քեզ ինչ կպահանջենք Մենք ձեզմեն: Կիսոստվածինք, քեզ Մեր պահանջները իրոք որ շատ են: Սակայն Մենք չենք ուզեր բայց մեր բայց իրականուրյունը: Ով որ կկարողանա ըմբռնել և հասկրեալ գեղեցկորյունը այսպիսի կյանքի մը, ով որ կկարողանա ըմբռնել ու հասկեալ բաղցորյունը այս լուծին, ով որ հոգիով ուժեղ է, բող մեա մեր մեջ, բող մեա մեզ են: Սակայն անոնք, որ կարող կըլլան մեալ մեր մեջ, անոնց համար կրացվի իրավ փառի համար մը. փառք՝ ծառայելու մեր ժողովրդին և այս աստվածակառույց Ս. էջմիածինին: Մենք շատերեն լավերը պիտի բնուրենք, լավերեն՝ լավագույնները:

Մենք կփափագինք արագ բախով պատրաստել փարզապետներ և հանահաններ: Դուք շատ լավ զիտե՞ս և կտեսնենք, քեզ ինչքան մեծ է կարիքը հոգենոր մշակներու: Մենք, այս, կըդանք շատ վեղարեներ տեսնել մեր շուրջը, բայց առավել կարենք է Մեզ համար զիտեալ, քեզ ի նշ կա վեղարին տակ: Այս ողիով է, որ պիտի առաջնորդինք Մենք այստեղ:

Մեր եկեղեցական կյանքի վերջին տարիներու տագնապը, ամեն բան առաջ տագնապն է մեր հոգեռականուրյան հոգեռ-բարոյական կյանքի, և հետևանքը առավելուրյան մը զիտակցուրյան պակասին:

Երեւ այսպես շրլար, մեր եկեղեցին պիտի խնայվեին այնքան անկարգուրյուններ,

կեդրենախույս ձգուումներ և անսուր զործեր, որոնք գրաւուրվեցան մահավանդ վերջին տարիներուն մեր նվիրապետական երկու Արռողներուն մեջ: Գոնե ինչքան ատեն Մենք կենականի ենք, բոյլ պիտի շտանք, որ նման արարեններ ի հայտ զան այստեղ կամ այլուր:

Մեր բոլոր նոգենոր ու բարոյական ուժեր լարած, արքուն պահակներու նման պետք է նսկենք, որ նման եւեռոյթներ չկրկնվին:

Այստեղ կանգնած, այս սուրբ բարերուն վրա, ուխտենք կերտել նշարիտ նոգեռականներ, նշարիտ նկարագիրներ, մշակներ առանց:


Մեր երազն է, Մեր կյանքի նպատակն է շենցնել, ուրախացնել հազարամյա Ս. էջմիածինը՝ պարզելով անոր հավատավոր, անբասիր ու անձնելու սպասավորներ:

Մայր Արռօ Ս. էջմիածինը զրոխն է մեր Ս. եկեղեցին, և ան իր զինվորյալ միարանուրյամբ և իր Հոգեոր Ճեմարանով պետք է դառնա լուսառու փառու, օրինակ, առաջնորդ և ներշնչառան համայն հայ հոգեռականուրյան և հայ ճողովրդին:

Շնորհագորելով մեր ուսանողները, իրենց աշխատանիներու եղրափակման այս հանդեսի առրիվ կմաղբենք բոլորին բարի և խաղաղ արձակուրդ, կմաղբենք բոլորին, որ նոր ուժեր հավաքած, նոր եռանդով ու սիրով վերադառնան սեպտեմբերին Մայր Արռօ, սկսելու համար աշխատանքի նոր շրջան մը մտավոր և հոգենոր մշակումի և անումի:

Վեհափառ Հայրապետի այս ոգեշունչ խոսքերը ընդունվեցին Հոտնկայս բուռն ծափահարություններով:

Հոգենոր Ճեմարանի ամավերջի Հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիշ»-ով և Տիրունական աղոթքով, որից հետո տեսչական և գասափոսական կազմը և ամրող ուսանողությունը մոտեցան Վեհափառ Հայրապետին՝ Համբուրելու համար նրա Ս. Աջը:






Ն. ՊԱԼՅԱՆ

(Հոգևոր ձեմարանի
Ա. դաստիարակության ուսանող)

ԱՐԱՐԱՏ

Ինչպես շեն մի հուշարձան Արարատյան ծաղկող դաշտում,
Արարատն է բարձրացել վեր, մի օր ուրախ, մի օր տրտում:
Ու դարեւն են եկել-անցել, ու վարպետներ բյուր-բյուրավոր,
Բայց ոչ մեկը դեռ չի կերտել նման արձան մի փառավոր:
Թիուրյունն է նրան ինչպես մի վեհ տաճար խոյացրել վեր,
Եվ ամեն մի բարի վրա դրել է հույս ու դրել սեր:
Մեր ալեզարդ Մասիսն ի վեր մեր երազներն են մազցել,
Դարեր ամբողջ նրա լանջին շինականներ երգ են հյուսել,
Նա տեսել է ժողովրդիս խոշտանգումնե՛րը անավոր,
Եվ դառնացել է իր հոգին ու մոլեզնել զիշեր ու զօր:
Ու մինչ գետերը մեր վարար, հորդակոհակ ու փրփրալի,
Սովու են վազել, ալիքներում իրենց խառնած այրուն ու դի,
Մասիսը մեր կանգնած նապարա, որպես տիտան լայնաթիկունն,
Պահպաննել է ժողովրդիս ու եղել է կյանքի ակունք:
Խանգնել է նա վահանի պես, կուրծքը տված մուր տարերքին,
Կայծակներն են շանք տեղացել գրանիտյա նրա կրծքին,
Բայց մեացել է անսասան, տեսել է բյուր ավեր ու վիշտ,
Եվ կոտորած արյունավեծ ու շենքերի կրակը միշտ...
Սերունդներ են եկել անցել ու բանակներ անեղազոր,
Բայց Մասիսը, Մասիսը ծեր, կանգնել է վեն ու փառավոր:





ՀՈԴԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՌԽՍԱՆՈՂՆԵՐԻ ՌԻՒՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

(Կեշառիս, Սևան, Սահանին, Հաղբատ և Հարինա վանելեր)

այր Աթոռում գեղեցիկ ավանդություն է դարձել Հոգմոր Ճեմարանի տւառմնական տարին փափել Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի հաջորդ օրը:

Վեհափառ Հայրապետը Հոգմոր Ճեմարանի նկատմամբ ունեցած իր հայրական վառ հոգածովթյան լրասառու ապացուցը տվեց այս անգամ ևս, հրահանգերով Ճեմարանի տեսչովթյան, որ Ճեմարանը փակեցոց առաջ տվառագություն կազմակերպի դեպքի մեր պատմավան վանքերը՝ Կեշառիս, Սևան, Սահանին, Հաղբատ, Հարինա և այլ ուսաստեղիներ, և ապա արձակուրդ տրվի ուսանողովթյան՝ վերադառնալու տուն իրենց ծնողների մոտ, հանգստանալու և կազդուրվելու համար:

Վեհափառ Հայրապետի այս հրահանգը անսահման երախտագիտությամբ ընդունվեց Ճեմարանի տեսչովթյան, դասախոսության և ամրող ուսանողովթյան կողմից:

Հոմիսի 24-ն է, օրը երկուշաբթի, ամառային վառ ու պայծառ օրերից մեկը: Ճեմարանում եռուզեռ կա: Մովորավան ժամից շուտ զարթնել են տասանողները և նախապատրաստվում են մեկնելու Քննովթյուններից և եկեղեցական տոներից հետո այսօր նրանց առաջին ազատ օրն է: Բարձր է բոլորի տրամադրությունը և ուրախ են ամենքը: Ճեմարանի բակում կանգնել են վանքի երկու մեծ ավտոմեքենաները, պատրաստ հեռավոր ճանապարհորդությունների: Մեր խումբը բաղկացած է 50 հոգոս:

Հնջում է մեկնումի ժամը: Մտնում ենք եկեղեցի աղոթեցու: «Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղովեան, Տէր, ուղղեա և առաջնորդեա մեզ բոլորիս: Բարձր և ուրախ տրամադրությամբ բարձրանում ենք մեքենաները: Ժամը 7-ն է, երբ մեր մեքենաները թողնում են Ս. Էջմիածնը, հարազատ Մայր Աթոռը և ուղղվում են գեպի երևան և աղաղ ու պոլ առավոտ է: Մեքենայում մկանում է «առավոտյան ժամերգովունը» և ապա մինչև Երևան հնջում է երգը ուրախ և գվարիթ, Երևանում մեզ միանում է դասախոսների ամրող խումբը: Ժամը 8-ին սիրուն Երևանը թողնելով մեր ետին տողվում ենք գեպի Մաղկաձոր... Հայրենի բնաշխարհի գեղեցկությունն սկզբում է Կոտայքից: Երևանից գուրս գարուց հետո մեր առջև բացվում է Հայրենի քննության սրանչելի տեսարանը: Ամեն կտղմ ծառ ու ծաղիկ, կանաչ ու թարմություն: Լիաթոք շնչում ենք ծաղիկների և մրգերի բույրերով հագեցած օդը, մինչ մեքենայի առաջ քակվում է ասֆալտապատ ճանապարհի սկզբ և առաջի սկզբանին:

Մաղկաձորը գտնվում է շրջանային կենտրոն հանդիսացող քաղաքատիպ գեղեցիկ ու սիրուն Ախուտա ավանից 8 կիլոմետր գեպի հյուախ-արևմտատք, իսկ Երևանից՝ 37 կիլոմետր հեռավորության վրա: Մաղկաձորը տեղակրված է Մաղկոմյաց լեռների արևմըտահայաց զանցի մի փոքր հարթակի վրա, ծորակի եզրին, շրջապատված անտառապատ լեռներով և ծաղկավետ հովիտներով:

ու սարահարթերով։ Մաղկաձոր գյուղը մեր հին մատենագրության մեջ կոչվել է Կեշառուի, որի անունով էլ վանքը կոչվել է Կեշառիս, «մենաստան հոյակապ, մի ի պանծալի դաստակերտաց Պահատմեաց»։ Մաղկաձորը Վարաժնոմի իշխանների սեփականությունն է եղել և միշին դարերից կոչվել է նաև Մաղկումիք կամ Մաղկումյաց գավառ, որի հետևանքով էլ հետագայում Կեշառիսը կոչվել է Դարաշշակ — Մաղկաձոր։

Բագրատումիների օրով, ժ դարի երկրորդ կեսին, այս պատճենը անցնում է Պահատմունիներին, և Կեշառիսի վանքը ԺԹ—ԺԳ դարերին զառնում է Հայաստանի ամենախոշոր և ազդեցիկ վանքերից մեկը։ Նա ունեցել է իր հոգևոր գալոցը, ուր սովորել են ժամանակի նշանավոր վարդապետները և նրանց թվում մանավանդ 13-րդ դարի մեր նշանավոր վարդապետներից Խաչատուկ Կեշառեցին։

Մեր մեքենան Հրազդանի ափերով բարձրանում է Մաղկաձոր, և անտառի եզրին, փարթամ կանաչության մեջ մեր աշքերի առաջ պարզվում է Կեշառիսի վանքի հուշարձանների խոմբը, որն անտարակույս պատկանում է Հայ ճարտարապետության անկրքնելի կոթողների թվին։ Հեռաց նա խոսում է արդեն մեր սրտերին, հոգուն և հուզում մեզ։ Ինչում ենց մեքենաներից և երկուուղածովթյամբ մոտենում այդ սրբավայրերին։ Վանքի հուշարձանների խոսմաքը բաղկացած է չորս եկեղեցիներից, մեկ գավթից և մի քանի գամբարան-մահարձաններից։ Կեշառիսի վանքի գլխավոր եկեղեցին է Ս. Գրիգոր Եկեղեցին, կառուցված 1003 թվականին Գրիգոր Մագիստրոսի կողմից։ Գմբեթակիր մեծ դաշինք է, ուղղանկյուն ճատակագծով, սալահատակված, տանիքը պատած սալաքարերով։ Տաճարին կից արևմբարյան կողմից գտնվում է հոյակապ գավթը, շինված չորս արտեմերի վրա, կամարակապ, կմնտրոնահատակ առանցքով, երդիկով։

Այցելում ենք նաև Ս. նշան (ԺԹ դար), Ս. Գրիգոր եկեղեցու հարավային կողմում, կարսոլիկ եկեղեցին՝ Ս. Նշանի հարավային կողմում։ այն կառուցել է Պատշյան Խալբակ հշիսանի որդի Վասիլը՝ ԺԹ դարի առաջին գառորդում։ Ամեն կողմ վեհություն, խորհուրդ, Կեշառիսի վանքի չորրորդ եկեղեցին է Ս. Հարությունը, կառուցված 1220 թվականին, որը գտնվում է վերոհիշյալ վանքերի խմբի արևմուտք, 200 մետր հեռավորության վրա։

Կեշառիսի վանքը հարուստ է նաև դամրաբաններով և մահարձաններով։ Երախտադիտությամբ և խորոմնկ հարգանքով լցված շրջապատում ենք մանավանդ վանքը կա-

ռուցով ճարտարապետ Վեցիկ վարդապետի նշանավոր մահարձանը։ Նրա գեղեցիկ տապանաքարի վրա կարդում ենք՝ «Վեցիկ վարդապետս յաղախս յիշնաշիք ի Քրիստոս աղաշեմք»։

Ավելի քան մի ժամ այստեղ ենք, ամեն մի քայլին մի գեղեցկության ենք հանդիպում, ամեն մի կտոր քարի վրա կրոշմվել է Հայ ժողովրդի մոռքի, Հոգու, արտի և ձեռքերի մրտունաբույր գեղեցկությունը, որը տպագորում է մեզ, հուզում և արդար երախտագործությամբ է լցնում մեր սրտերը դեպի մեր փառապանծ ճամփանիքներ՝ իշխան, վարդապետ, գրիչ, քարտաշ, մշակ։ Այս խորհրդի մեջ նորից տղղվում ենք Ս. Գրիգոր եկեղեցին աղոթերու Մեզ հետ է գրույի ամբողջ բնակությունը, Մաղկաձորում հանգստացող խոմբը։ Եկեղեցում հուշիկ երգում են մեր սարկավագներն ու ուսանողները «Խորհուրդի խորին»-ը, «Տէր, ողորմեա»-ն, «Հայր մեր»-ը։ Հուգումը պատճեն է մեզ բոլորիս Ճեմարանի փոխ-տեսուց Մեսրոպ վարդապետը «Հոգուց» է արտասանում։ Եվ մենք հիշում ենք ոչ միայն Գրիգոր Մագիստրոս իշխանին, Վեցիկ վարդապետին և Հովհաննես քահանային, այլ նաև տղեկոչում ենք հիշատակը բոլոր նրանց, որոնց քրոինքն է թափել այս բարերի վրա, և որոնց անունները Ամստուծում միայն հայտնի են։ Դուրս ենք գալիս տաճարից։ Վանքի բակում զվուամ է Հայ տաղանդապոր արհեստավորի մրգի և քրունքի շինարար ձայնը։ Խել քանդվել է ժամանակի ավելիշ հարվածների տակ, այսօր քար առ քար, գիծ առ գիծ, կամար առ կամար վերակառուցվում է։ Հայրենի կառավարությունը խոշոր միջոցներ է տրամադրել այս նշանավոր հուշարձանը վերականգնելու համար։ Արդեն երկու տարի է, ինչ մկանիկ և շարտանակիտում են վերականգնման աշխատանքները։ Բակում մեզ շրջապատում են բազմաթիվ մարդիկ։ Առաջին իսկ հանդիպումից մեզ զգում ենք հարազար միջավայրում։ Մարկավագները, ուսանողները շրջանակ կազմած՝ սիրով պատասխանում են բոլոր հարցերին։ Ակարտում ենք բազմաթիվ անգամների Սաղկամատության սուրբությունը։ Մարդկանակի սաղկամատության սուրբը սական է այս ժողովրդի պատմության միջով։

Սևան... Ժամը 11-ն է։ Մեքենայի ամբողջ թափում, ասֆալտապատ ճանապարհով սուրբությունը ենք գեպի Մևան, իսկ մեր միտքը սականում է Հայ ժողովրդի պատմության միջով։

Հայկական բարձրասվամութակի լինմերուանդած բազմաթիվ լինմերի մեջ իր մեծությամբ,

գեղեցիկությամբ առաջին տեղն է գրավում Սևանը, անցյալում Գեղամա լիճ կամ Գեղարքունյաց ծովն Սևանը աշխարհի շեռնային մեծ և բարձր լճերից մեկն է: Նրա բարձրությունը ծովի մակերևույթից 1916 մետր է, մակերեսը հավասար է 1416 քառակուսի կիլոմետրի, իսկ զծի ավազանն տևի 4760 քառակուսի կիլոմետր տարածություն: Սևանա զծի ավազանն տևի եռանկյուն ձև: Գեղապի ավազան իշխող լեռնաշղթաների լանջերը ծածկված են զմրության արոտավայրերով: Սևանա զծի մեջ են թափվում մոտ 29 գետ ու վտակ: Էջից դուրս է գալիք միայն Հրազդանը կամ Զանգուն:

«Բարի և գեղեցիկ է ծովի ի խաղաղ ժամանակի», — ասել է Բարսեղ Կեսարացին, մանավանդ մեր շքնաղ Սևանը, ամռան, երբ «ճանդարտացեալ կայցէ յալիաց և ի մըրկաց»: Հիացած նայում ես օրնդ ծիծաղել չուց նորա, որ յազդի ազգի գույնս ցուցանեն զերին երփն նարօտուց, մերթ ծիրանույ, մերթ կապուտակի»: Ահա այսպիսի էր արդարեւ Սևանը մեր ովասի օրը: Գեղամա, Արեգանի, Սևանա, Վարդենիսի, Զանգեզուրի լեռները խոր խաղաղությամբ և չեփմագին սիրով իրենց գրկում առած օրորում են Սևանը և Վազգին, «իր դուրս վանքերի տարութեն հուզիչ սրբության մեջ»:

Մեր մեքենան կանգ է առնում կղզու ստորառում, հանգստյան տաճ դարբասի առաջ, որի թերթը բացվում են հյուրներուրեն, Այստեղ ևս մեղ շրջապատում են խանգաղատանքով: Դեպի վանք մեր ճանապարհի վրա մեղէ միհանում ալստեղ հանգստացդղեների խումբը: Բարձրանում ենք կղզու փոքր զառիվերը և կանգ ենք առնում հարավ-արեւմը տայան փոքր սարալանջի վրա: Մեր տաքերի տակ է Սևանը, փուած իր մաքուր հայելին: Երջանակ կազմած, կանգնել նայում հնք վար, մինչ առաջին դասարանի ուսանող նուպար Պալյանը, խորունկ ապրումով ու ներշնչումով, արտասանում է Ճեմարանի փոխ-ականու Մերուս վարդապետի (Փայակ Միհածան) «Սևանը» գեղեցիկ բանաստեղծությունը, որի պատկերները, միտքը, ներշնչումը և գաղափարարական բովանդակությունը տպավորում են մեջ, հույսով.

«Ուր էլ որ լինի Սևանը խոնան ու կապուտաշի, Մեր վեն լեռների սուր սկիբի մեջ ընջաղ»

բաժակում, Ազգի կը տա մեզ, կը տա մեզ սուր նաց

և կը տա զինի,

Ու նայ տանարում լինի պատարաց և նայոց երկում խնդուրյուն լինի»:

Ազգա խմբով ուղղվում ենք դեպի վանք: Պատմական ու նիհական արահետում անցնում և մտնում ենք Ս. Կարապետի եկեղե-

ցին, որը կառուցել է Սյունյաց Տիկին Մարիամը 874 թվականին: Առաքելոց եկեղեցին վէլ կառուցվել է 874 թվականին նույն իշխանություն կողմից: Սևանի վանքերն են եղել են մեր հոգևոր մշակութի վառ ու հարուստ օջախ, ուր առվորդել ու ստեղծագործել են մեր համատափոր ու սրբակենցաղ հոգևորականներից շատերը, որոնցից ոմանք բարձրացել են նաև Հայրապետական Գահի վրա: Սևանի վանքի անոնը սերտորեն կապված է նաև մեր ժողովրդի ազատագրական պայքարի պատմության հետ: Սևանի ճակատամարտում 922 թվականին Աշոտ թ Երկաթը, վանքում ապաստանած իր մի խումբ քաշերի հետ, հարձակվեց արար թեշեր ոստիկանի հրոսակների վրա և նրանց փախցրեց մինչև Դվին:

Կրոնարուց ու Հայրենաշումչ այսպիսի դոլագների վերիշտանով մտնում ենք եկեղեցի: Փոքր, սիրուն մի մատու է Ս. Կարապետի եկեղեցին, փոքր կղզու փոքր արթատեղին: Այստեղ ևս կատարվում է հուզի ու տպավորի ժամերգություն, որին ներկա են լինում Սևանում հանգստացդ հայեր և ոռուներ: Ճեմարանականները երգում են Սևանի ճակատամարտի առմիվ գրամած «Ճի Աստուած ընդ մեղ է» շարականը, «Նայաց սիրով»-ը, «Տէր, ողորմեած-ն և «Հայր մեր»-ը:

Եկեղեցուց դուստ գալուց հետո շրջապատմ ենք կղզու զանազան մասերը, ծանոթանում կղզու պատմության և գատնարաններին, որտեղ պահվել են արհամիրքի օրերին շրջակա վանքերի և հայ գյուղերի հարցատությունները, ձեռագրերը. և նույնիսկ զենքերը:

Ժամը 3-ին նախաճաշում ենք Սևանի ափին, կանաչների վրա. վայեկում ենք Սևանի հշխան ձուլը: Հետմիջօրին ժամը 4-ին հրաժեշտ ենք առնում կապույտ Սևանից:

Սևանից վեր մինչև Սովազյուղ ճանապարհը անցնում է լճի ափերով: Կանգ շենք առնում: Մեր մեքենան սուրում է վեր, միշտ վեր, սարն ի վեր:

Սևանիոնվկա գրուի մոտ մենք արդեն գտնվում ենք ծովի մակերեւությունց 2122 մետր բարձրության վրա: Ցուրտ է, մրսում ենք: Ազա ճանապարհը օձագալար սրաւում իշխում է Դիլիջանի ծաղկավետ և գալագավել հովիտը: Այստեղ անձրւում է առաստղեն: Լիամբոք շնչում ենք Դիլիջանի կանաչավետ եղենիների, սոճիների և անձրիի բուրմունքով հագեցած օդը:

Դիլիջանից լինի պատկան, ճանապարհի երկու կողմերում, փուած են փարթամ կանաչների և ընդարձակ մրգաստան-

ների մեջ թաղված կղմինդրե տանիքներու գյուղեր:

Երեխոյան ժամը 6-ին հասնում ենք Կիրովական, երբեմնի Հարաքիլիսեն: Կիրովականը հանալի դիրք ունի. դալարագեղ բլուրների լանջին, երբեմնի Գուգարաց աշխարհի Տաշիրք գավառի Բամբակաձորի մեջ, Տանձոտ, Վանաձոր և Փամբակ գետակների ողակների մեջ առնված: Հեռվից Կիրովականի վրա իշխում է Մայմեխ լեռնագագագիթը:

Կիրովականը Հայստանի երիտասարդ և գեղեցիկ երրորդ քաղաքն է, որ իր ուշագրավ դիրքով, բարեկարգ փողոցներով, զբուսային երրություն, պուրակներով և ծաղկանցներով հմայում է մեզ: Հարուկապես գեղեցիկ է քաղաքի կենտրոնական հրապարակը, որի շուրջ բարձրանոամ են հայեական ճարտարապետությամբ և նրարավեստ քանդակներով զարդարված գեղեցիկ շենքերու Անցյալի տիտուր և սև քաղաքից ոչնչն չի մնացել: Կիրովականը արդիական և երիտասարդ քաղաք է, թաղված ծառերի մշտադալար կանաչ գորի մեջ: Կիրովականը նաև զարգացած արդյունաբերական կենտրոն է, որտեղ կան բազմաթիվ գործարաններ: Բացի այդ, քաղաքը ծածկվել է միջնակարգ դպրոցների, երաժշտական, արհեստագործական ուսումնարանների, մանկապարտեզների, մանկամատքների, պրադարանների և հիվանդանոցների խիստ ցանցով: Քաղաքում մեքենաներով ման գալուց հետո, ուղղվում ենք դեպի Կիրովականի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին: Կանգ ենք առնում եկեղեցու մեծ դարպասի առաջ: Մեքենաների շուրջ հավաքված բազմությունը մեզ դիմավորում է ժամիներով: Ուղղվում ենք եկեղեցի, ուր 80-ամյա Տ. Գևորգ ավագ քահանա Գևորգյանը և Անթիլիասի դպրեվանքի նախկին ուսանող և այժմ նորօծ Տ. Վագգեն քահանան կատարում են երեկոյան ժամերգությունը: Մարկավագներն ու Շեմանինի ուսանողներն անմիջապես անցնում են դաս՝ գրակալի գլուխ, և խանդավառությամբ երփում օրվա ստեղի համբարձին՝ «Երանելի առլոր մանկություն»: Եկեղեցին լցովում է հավատացյալներով, որոնք երկուսը առնելու մեջ գարթնում են ամառավագանը:

Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցին, որը շինվել է Հովհաննես Կարեհյու օրով 1831 թվականին, նախկին եկեղեցու երկրաշարժից քանդիվուց հետո, ճարտարապետական տեսակետից առանձին արժեք չի ներկայացնում:

Ժամերգությունից հետո եկեղեցու գալում հավաքված ժողովուրդը շրջապատում է մեր ուսանողությանը. նրանք բազմաթիվ

հարցեր են տալիս Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռի և Ս. Էջմիածնի մասին: Անձրւում է: Այս եղանակին հաճախաղեալ են անձրւաները այստեղ: Գիշերում ենք Կիրովականում:

Հունիսի 25-ին, երեքշաբթի, վաղ առավոտյան, մեկնում ենք դեպի Սանահին, Լոռի աշխարհը, Գուգարաց երկիրը:

Կիրովականից 3 կիլոմետր հեռավորության վրա, դեպի Շիրակի դաշտավայրը տանող խճուղուց մեքենան բաժանվում է դեպի կտորի տանող ճանապարհը, որի հարավային մասից մկանվում է և դեպի արևելք է տարածվում Բաղրամի կամ Բղոլուսալի լեռնաշղթան, արևմտաքից ծածկված ալպյան ճոխ արտուալյարերով, իսկ արևելքից՝ թանձրախիտ անտառներով: Մինչ ձորամասում է լեռնային առվագը:

Մեքենան բարձրանում է միշտ վեր, մինչ ճանապարհի գոտին սեղմում է և գրկում թաղամաթի շեռնաշղթայի ալպյան արտավայրերով ծածկված դալարագեղ լանջը: Սաւարի գրին մառախուղ է, և դեռևս չկամբու: Ամպամած է:

Առավոտյան ժամը 9-ին անցնում ենք Պուշկինյան լեռնանցքով: 2040 մետր բարձրության վրա ենք: Թիւ հետո արդեն կանգ ենք առնում պատմական այն աղբյուրնուածանի առաջ, որտեղ գրված է. «ԱՅՍԵՅՂ ՊՈՒՇԿԻՆԸ 1829 թվի ՀՈՒԽԻՍԻ 23-ԻՆ ՀԱՄԴԻՒԹՅՈՒՆ» է Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵՑԾՈՎԻ ՄԱՐՄԻՆԻՆ: Հարբար քանոտագթ տարի հետո, նույն ամսին և համարյա նույն օրերին մենք են անցնում ենք նույն լեռնանցքով: Այսուղեալ ևս մեր ազգերի առաջ պարզելի է հայրենի աշխարհի չնաշխարհիկ գեղեցիկությունը: Ահա կոռվա աշխարհը, Գուգարաց երկիրը, ամպերի մեջ միխրճված լեռնապատամերություն, ընդարձակ անտառապատ հովիտներով և անդնդախոր կիրճերով: Ի տես այս բղդորի, մեր հիշողության մեջ զարթնում են պատմական այդ վայրերի հետ սերտորեն կապված քաղցր:

Պուշկինյան լեռնանցքով, աղբյուր-հուշարձանի գլխին, տասը քալի հետուալության վրա բարձրացել է սիրուն և ճաշակավոր «Գուգարաց» ճաշարանը: Մատում ենք ճաշարանից ներա: Գտնուած ենք զերմ հյուսափերություն: Ամեն կողմ մաքրություն և կանոնագրություն: Նախաճաշուած ենք այստեղ, ու մի պահ հանգստացնուած, ճանապարհ ենք ընկնուած դեպի Աղավերդի, Սանահին: Օձագար ճանապարհարհը քակիվում է սարի լանջի վրա: Ինըում ենք Զորագետի հովիտը: Ահա և գետը՝ Զորագետը: Տեղ-տեղ շատ խորի է գետի անկողինը. նա սկիզբ է առնում կուռու ճարթավայրից երկու ակումքներով, և մի

որոշ տեղ հանգիստ գալարումներով հոսելուց հետո, դուրս է գալիս Տաշրատափի վրայից և մտնում նեղ ու զառիվայր ձորը: Անցնուամ հնք Չորագետի հին կամքջով և բարձրանուամ Չաղին-դաղի հանդիպակաց սարալամջը, մինչ հեռալից երկում են Չաղին-դաղի Լալվար, Լոր և Լեզան լեռնագագաթները, և, ասմակերը դամուաղ ուղտերի նման Չաղին լեռան վրա կանգ առանա»: Հիշուամ հնք մանավանդ հայ պրականությանից «լարվար որսը»: Չաղին-դաղի խոր ձորերով է հոսուամ պղտոր Դեբետը: Անցնում ենք Ալգինատ, Ովունլար (Օծուն) հայ գրտերով և ուղղվում դեպի Ալավերդի:

Այժմյան Ալավերդու շրջանը պատմական Հայաստանի Գովարաց նահանգի Տաշիրք Գալառի մի մասն է հանդիսանուամ, ժ դարից այստեղ իշխակ են Բագրատումիները: 978 թվականին այստեղ է հիմնադրվել Անիի թագավորության հնաթակա Կյուրիկյան թագավորությունը: Այս շրջանում Տաշիրքը ապրել է տնտեսական, մշակութային, հոգարուուն վերելքի Կառուցվել են բաղմաթիվ վանքեր, աշխուժացել է առևտուրը, կառուցվել են Հաղորատը, Սանահինը, Քոբայրը, Հոռոմայրը, Քառասուն մանկումաքը և Կայսն, Կայծոն, Ավամալա ամրոցները, ժ դարից այստեղ իշխակ են Զաքարի և Խվանի եղբայրները: Ինտում ենք Դեբետի ձորը, և ահա մեր առաջն է Սանահին կայարանը: Այսիներից մեզ ժամուամ են մրգերով ծանրաբեռնված բաղենիներն ու խնձորենիները, մինչ Ալավերդու պղնձածպական գործառանները իրենց պղնձատայա թոփերից արտաշնչում են աշխատանքի ստեղծարար ներք:

Հետմիջօրեի ժամը 1-ին մեր մեքենաները կանգ են առնուամ Դեբետ գետի վրա ձրգած հին կամուգչի մոտ, կամուրջ՝ որը շինվել է ժ դր դարուում նանա թագունու կողմից: Սանահին վանքը գտնվում է կամրջից 3 կիումնոր հետավորության վրա, Սանահին համանուն գորոշի սարի լանջին: Շտապում ենք ժամ առաջ համել վանքը: Ոտով բարձրանում ենք սարն ի վեր, ովստավորի հավատով և զերմանանդրով. ժայռու և ոլորապուր նեղ կամանաներով. ձորում հոսուամ է պղտոր Դեբետը, հանդիպակաց պղնձածպույն լեռներից լավում է Ալավերդու պղնձածպական գործարանների զվարթ աղուկը և անընդհատ երթևեկոյ գնացքների պղդարար սուլոցը: Հասնուամ ենք Սանահին գուուը: Կոմինգը կոտորմերով ծառերի և փարթամ կամաշների մեջ թարված երդիկների ետևից երևում է Սանահին հոչակալու լանքի հովանավոր սուրբ գմբեթը: Շտապեցնում ենք բայլերը, ժամ առաջ ծնրա-

դրերու և համբուրեկու հաղարամյա վանքի սուրբ քարերը և մեր եռամենծ վարդապետների նվիրական շիրիմները: Վեհերտու քայլերով մտնուամ ենք վանքի բակից ներս և հափշտակված կանգ ենք առնուամ այդ սրբավայրերի և շիրիմների առաջ: Սարսուամ է անցնուամ մեր ամբողջ մարմնով: Վեհ է պահը և տպավորիչ... դարերն են մեր նայուամ:

Սանահին վանքի փոյովթյունը բարձրանում է մինչև ժ դար: Քաղկեդոնական վիճակի պատճառով Հոմաստանում հաղածված հայ Հովորականները Անանիա Մովսեցի կաթողիկոսի օրով այստեղ կառուցում են վանք, Հիմնուամ միաբանովիյուն և զրադշում գիր ու գրականովիյամբ, աղոթքով ու հայ մշակուվթով: Սանահինը դառնում է մեր մշակուվթի վառ օգախներից մեկը, Բագրատունյաց Սմբատ թ թագավորի օրերից, այստեղ աշխատում ու ստեղծագործում են մեր եռամենծ վարդապետները, Հայ եկեղեցու մեծիմաստ և քաջակորով պաշտպանները:

Սանահին և Հաղպատ վանքերի մասին խոսել են մեր պատմիչներից Ստեփանոս վարդապետ Ասողիկը (ժ դար), Սամվել Անեցին (ժ դար), Կիրակոս Գանձակեցին և Մատթեոս Ուռչայցին և Վարդապետ Բարձրբերդցին (ժ ծ դար):

Սանահինի վանքը միաժամանակ հանդիսացել է մեր ազգային-եկեղեցական առաջին պանթեոնը. վանքի տաճարում թե սարի լանջին կողք-կողքի պակել են մեր պատմության, սրի և քաջության, գրի և հավատքի մեծանուն հերոսները, Զաքարի հշխանից մինչ Գրիգոր վարդապետ Տուտերդին:

Ժթ դարում Սանահինը իր շրջակայքով պատկանել է Արդությանց երկայնաբազուկ իշխանական տոհմին, և վերջապես քաղցր է հիշել, որ Սանահինում է ծնվել հայ ժողովրդի տաղանդավոր զավակ Անաստաս Միկոյանը:

Սանահինի վանքը քարեկեն ճարտարապետական մի համանվագ է՝ հուշարձանների իր խմբով, որտեղ ներդաշնակորեն օտագործվել են հայ ճարտարապետության մինչ այդ ձեռք բերված բոլոր նվաճումները: Սանահինում գոյություն է ունեցել բազմանդամ միաբանություն, որը մեծ աղդեցություն է թողել ժամանակի հայ քաղաքական ու մշակության կյանքի վրա: Այստեղ գործել է Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը (ժ ծ դար), և, ըստ ավանդության, այստեղ դասավանդել է ինքը՝ Գրիգոր Մագիստրոս գիտուն իշխանը: Սանահինը միաժամանակ հանդիսացել է Կյուղիկան Բագրատունիների, Զաքարյան սպասալարների և Երկայնաբազուկ Արդությանների տոհմական գերեզմանոցը:

Վանքը, բացի իր ճարտարապետական կառուցվածքի առանձնահատկություններից, ու-

նի նաև բազմաթիվ վիմական արձանագրություններ, հոլյժ կարևոր հայ պատմության համար:

Սանահինի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 935—945 թվականներին Հովհատանիքի Ռումանիա կայսրության վայրից այստեղ ապատան կան հալածանքներից այստեղ ապատան գտած ուստանատեն Հայ վարդապետների կողմից: Եկեղեցին արտաքուստ ուղղանկուն է, ներքուստ՝ խաչաձև, կամարակապ, գմբեթազարդ: Եկեղեցու հատակը ծածկված է սրբատաշ սալիկներով:

Սանահին վանքի ամենագլխավոր և փառաշուրջ ճարտարապետական կողողն է Սմենավորկիշ եկեղեցին, կառուցված 967—972 թվականներին Աշուա Գ Ողորմած թագավորի բարեպաշտ թագուհի Խոսրովանուշի և նրա երկու որդիների՝ Սմբատ և Գուրգեն իշխանների կողմից, և որոնց բարձրագանդակները նկարված են եկեղեցու արևելյան պատի ճակտին: Տաճարը սյուներ չունի, ներքուստ խաչաձև, գմբեթազարդ, ոմնի կրկնահարկ խորաններ չորս անկյուններում, ինը պատրագամատուց սեղաններ Խորանի մուտքի պատի մեջ գտնվում է գաղտնարանը, ուր պահպես են վտանգի ժամերին վանքի սրբազնան անոթները, ձեռագրերն ու սրբությունները:

Սույն եկեղեցու արևմտյան կողմում գրտնը վում է Գավիթը կամ Ժամատունը, կառուցված 1181 թվականին Սանահին վանքի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից: Գավիթը մի ընդարձակ սրահ է, գմբեթազարդ, երդիկով, հաստատված չորս հաստարեստ միակտուր սյուների կամարագոտու վրա: Սյուների խարիսխներն ու խոյակները քանդակազարդված են հրաշալիորեն: Գավթում կան բազմաթիվ վիմական արձանագրություններ. Հատակը ծածկված է վանքի երախտաշատ և մեծանուն առաջնորդների տապանագարերով:

Նորագավիթը ընդարձակ կամարակապ մի սիրուն սրահ է, շինված կամ կառուցված միատեսակ սրբատաշ քարերից 1211 թվականին, Զաքարե սպասարարի հազարապետ Վաչե Սարգսյան իշխանի կողմից: Այստեղ են գտնվում իշխանների բազմաթիվ դամբարանագրեր:

Սանահին վանքի հովարձանների մեջ ամենահետաքրքիր կառուցներից մեկն է Մագիստրոսի ենեմարանը, նախագավթի հյուասային կողմում, Սմենափրկիշ և Ս. Աստվածածին եկեղեցիների միջև: Մագիստրոսի ճեմարանը կամարակապ մի գողարիկ կառուց է, ժամարից: Նա եղել է Սանահին վանքի դպրանոցը:

Ս. Աստվածածին եկեղեցու հյուասային պատին կից բարձրանում է գեղեցիկ զանգատունը, որը քարեղեցն մի սլացք է, թոփշքեղինք կառուցված է ժամագործ Արաւ Բ Բագրատունի թագավորի օրոք: Գողարիկ կաթողիկուլ եռաշարկ մի կառուց է զարդարության սեղանների մասն է, ներքուստ քարե սանդուղքներով: Երկրորդ հարկում կան պատարագի երկու սեղաններ: Սանահին վանքի պատմական հուշարձանների մասն է կազմում նաև Ս. Գրիգոր Բարձրագալ եկեղեցին: Սա մի փոքր և սիրուն մատուռ է, գմբեթակիր, արտաքուստ կոր, իսկ ներքուստ խաչաձև, կառուցված հավանաբար ժամագործ:

Վանքի ամենահետաքրքիր և արժեքավոր կառուցներից մեկն է հանդիսանում Մատենադարանը, կառուցված 1063 թվականին Դավիթ Ա Անհողին թագավորի դուստր Հրանութագուհու կողմից: Մատենադարանը գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսակողմը Շենքի մուտքի կամարի և ճակտի մեծ քարի վրա կան բազմաթիվ արձանագրություններ տրանցամ. հիշատակիվ են նվիրատուների անունները: Գրատուն-մատենադարանը ի ճարաւարապետական առանձնահատկությամբ, ու միայն նորություն է, այլ նաև հոյակամի կոթող: Մատենադարանը առանց սյունի և կամարակապ, քառակուսի հատակագծու գմբեթի թմբուկը հաստատվել է կամարների վրա, որոնք վեր են բռնվել չորս կեղաքան գիսասար խորությամբ, և կեղեցական սպասաներ և ձեռագրեր պահելու համար: Որմասյունները և նրանց խարիսխներն ու խոյակները կրում են կողոված ներն ու խոյակները կրում են կողոված նուրբ զարդագանգակների: Շենքի ընհանուր երկարությունն է մոտ 9 մետր, ի բարձրությունը՝ մոտ 11 մետր: Այս բոլոր դիտելուց հետո, նորից վերադառնում է Ամենափրկիշ եկեղեցին ու կանգնում երեկոյան աղոթքի...: Մեզ հետ նույն ժամին դուքքի են կանգնել նաև մեր եռամեծ վաղապետական երեսների և շինարար իշխանների հոգինը: Հինավորաց տաճարի կամարների տառուր ծնրագրել են և աղոթել մեր նախնանշը է նաև մեր աղոթքը... Ուանողները գոգում են զելոյս զուարթ»-ը... եկ լուս է նում մեր հոգիների մեջ, լուս է իշնում աշտեղ թաղված սուրբ վարդապետների և վաղապետների շինարար իշխանների շիր ների վրա... Եկեղեցու գմբեթից վեր, դեմքեր, երկինք է բարձրանում մի անգամ հայ աղոթքը, Պահը հուղիչ է և աննկարագիլի: ... Երկուստածորեն համբուրելուց հետո Ս. Սեղանը, ուղղվում ենք դեպի արքայական

և վարդապետական գամբարանները, վանքի հարավ-արևմտյան մասում՝ Կանգնում ենք մի պահ Զաքարի և Իվանի սովասալարների և Հայ իշխանների գամբարանների տառաջ, ու այս խմբումների ուղղվում զեպի հուամեծ վարդապետի, Սանահին վանքի Հոչշակավոր առաջնորդի և մեծիմաստ աստվածարանի՝ Գրիգոր Տուտեռդու մահարձանը: Ինքնարերարար և ներքին մղումով բրոլոր մեկ մարդու նման ծնրազրում ենք նրա շիրմի առաջ: Հոգիշնորհ Տ. Մերուպ վարդապետը Հոգվածու թրթուն ճայնով «Հոգոց» է արտասանում: արցունք և կրախագիտություն կանա աղոթքի մեջ: Ամեն ինչ լուս է մեր շուրջը, ու մենք մեր հոգեզն աշքերով տեսնում ենք ահա մեծ Տուտեռդուն այս նույն տեղերում շոշապատված իր Սանահինյան աշակերտներով, երբ նրանց տալիս էր կրակե իր պատգամը, որ պատգամն է նաև տրված մեղ, և գալիք բրոլոր սերունդներին. «Ճաւան եմք մեր ընդ ճարսն մեր ի դժոխու իջանել և ոչ ընդ հուսոցոց յերկինս ելանմել»: Համբուրում ենք շիրմը ու մեր ուխտը կատարած, ոտքի կանգնում: Գեղեցիկ է Տուտեռդու մահարձանը, բարձր, սյունազարդ և կամարակապ, վրան քանդակազարդ շքեղ խաչքարով և արձանագրությամբ:

Սանահինի վանքը հուշարձանների, մատուռների մի սուրբ աշխարհ է, ո՞ր մեկը հիշել, ո՞ր մեկի առաջ ծնրազրել... Մոտ երեք ժամ ենք անցկացնում այս սրբավայրում և մեղ թվում է, որ գեռ ոչինչ չենք տեսել. Ժամերը սահել են ըոպեների նման արագ և անվերաբար:

Հայենի կառավարությունը սեփական մէջոցներով խոշոր վերանորոգական աշխատանքներ է կատարել նաև Սանահինի վանդում:

Հավաքվում ենք Սանահինի կամարակապ աղյուրի մոտ, աղյուր, որ կառուցվել է Զաքարի և Իվանի եղբայրների կողմից: Աղյուրը էլ ճարտարապետական մի սիրուն կոթող է. նրա ճարտարապետն է ուն Մխիթար: Սառնորակ զուրը Հավաքվում է ստորերկրյախոր ու ընդարձակ յոթը ավազանների մեջ և Զադին-դաղից կալե թթված խողովակների միջով հասնում է մինչև վանք:

Մեկնման տիսուր ժամն է: Պետք է հրաժշտ առնել այս սրբավայրերից: Վանքի բակում կանգնած, մի անգամ ևս մեր աշքերով գրկում ենք վանքը, նրա հուշարձանների ամբողջ խումբը, և նրա պատկերը մեր սրտում ու հոգում որպես թանկագին մասունք՝ սարերի ու ձորերի միջով ուղղվում ենք մյուս բարձունքը, որտեղ անհամբեր մեղ է սպասում Հաղբատը:

Ժամը 5-ն է: Աշու որ սովածություն չի զգում: «Ոչ միայն հացին կեցցի մարդ...»: Խոկ այսօր մենք Սանահինում շատ մեծ հոգեկան սնունդ են լույս ենք քաղել մեր ուխտից:

Ուղղվում ենք զեպի Հաղբատ, Հաղբատի և պատություն այս երկրորդ օշախը՝ «Յուխտ և յերկրպագութիւն»: Հաղբատի ճանապարհը ավելի զժվար է, թեք ու ցից: Բայց կրակ կամ մեր սրտում, տեսնելու նաև մեր եռամեծ վարդապետների այս հոգերոր ու իմացական Տունը: Մազցում ենք ժայռերն ի վեր, երբեմն հետո ընկրկում, բայց միշտ առաջանում ենք, Հաղթահարելով դժվարությունները, որովհետեւ մեր սուրբ նպատակը տկարություն չի ճանաչում: Հեռվից Հաղբատը քաշում, ձգում է մեղ իրեն: Նա ուրախ է: Ամեն մի քայլին մեր աշքերի առաջ միշտ պարզվում են նորանոր գեղեցկություններ: Հեռվում կոռու հեքիաթային լիոներն են, խոկ ձորում, խոր կիրճի միջով հոսում է պղտոր Դիերետը: Ուսով Սանահինից Հաղբատ 8 կիլոմետր ճանապարհ կտրելուց հետո համանում ենք գյուղ: Այս մտերիմ ճանապարհով անցել են նաև մեր վարդապետները: Հեռվից մտերմորեն մեղ է նայում և ժապում Սանահինը... որ այցելում ենք իր եղբորը:

Հաղբատ ու Սանահին, երկու համբուրելի անուններ, մեր հոգերով մշակութի ու հավատի վառ օշախներ: Երկյուղածությամբ ու հիացմունքով համակածած, մտնում ենք դարավոր մենաստանի պարիսպներից ներս: Նույն սիրելի և միստիկ միջավայրը, նույն համբուրելի պատմական անունները, նույն ջերմ ու կենդանացնող շումը ամեն կողմ... Հարազատ է մեղ նաև Հաղբատը: Նա խոսում է մեր զգացմունքներին, մեր հոգուն... Հաղբատի վանքը հիմնադրվել է Արաս և Բաղրատունու օրոք, Հունաստանից հալածական հայ վանականների կողմից:

Հաղբատի գլխավոր եկեղեցին է Ս. Նշանը, ճարտարապետական հոյակապ մի կառուցյալ եկեղեցին հիմնադրել է նույն բարեպաշտուի Խոսրովանուշ թագուհին, Բագրատունյաց նախարարական տան և արքունիքի պաշտպան ու պահապան Քրիստոսի խաչախայտից մի մասունք նվիրելով եկեղեցուն: Ս. Նշանը շինվել է 967—991 թվականներին, Գուրգեն և Մմբատ արքայորդիների օրոք, որոնց բարձրագանդակները գտնվում են տաճարի արևելյան պատի վրա, գեմ-դիմաց կանգնած, եկեղեցու կաղապարը իրենց ձեռքում բռնած: Ս. Նշանը կառուցվել է սրբառաջ քարերով, ներքուստ խաչաձև է, արտաքուստ՝ քառանկյունի, առանց սյուների:

Ճարտարապետական տեսակետից հոյակապ կառուցյա է նաև Ս. Նշանի Գավլիքը կամ ժամատունը, որը գտնվում է արևմտյան կողմում, «զարմանակերտ» մի շենք, որ ըստ պատմիչի, «հիացուցանէ գտեսողան»։ Այս շենքը են տվել Կյուրիկի Ա.-ի Մարիամ և Ռուսադան արքայագուստերերը, 1161 թվականին։ Գավլիքի կենտրոնամբ կա ավագան, որտեղ, ըստ ավանդության, կատարվելիս է եղել ջրօրները։ Գավլիք հատակը ծածկված է տապանաքարերով։ Գավլիքը մի մեծ սրահ է, խաչաձև հատակագծով, երկու մեծ սյուների և 10 կիսասյուների խաչաձևով կամարների վրա կանգնած նոյակապ գմբեթով։

Ժամատան հարավում գտնվում է Ս. Դրիգոր եկեղեցին, կառուցված 1005 թվականին, ինը պատարագամատուց սեղաններով։ Խակ հյուսիսային կողմում գտնվում է Ս. Աստվածածին մատուռը (ԺԴ դար)։

Հաղբատի կառուցյան երրորմ, իր ճարտարապետական յուրահատով՝ կառուցվածքով ուղարկություն է գրափում վանքի վանահայր Համազասպ եպիսկոպոսի 1257 թվականին շինած ռամազասպի շենքում, մի քեղեցիկ և ընդդրածակի դահլիճ, շինված սըրբատաշ քարերից, շուրջ 25,50 մետր երկարությամբ, 32 մետր բարձրությամբ և 25,50 մետր լայնությամբ, ութի կիսասյուների հետ վամբարներով միացած գմբեթով։ Այս մեծ դահլիճը ժառայել է որպես հայրացուն, որտեղ դասավանդել են մեծ հաղբատցիները։

Դպրատան հարավային կողմում գտնվում է Սատենադրաբանը, քառակուսի հատակագծով, առանց այտման, ութանին գմբեթով մի շենք, կենտրոնամբ ունենալով մի բացվածք, որտեղից բույս է թափանցել ներս։ Վանքի բակում, մենակ, բարձրանում է Զանգակառունը, կառուցված 1245 թվականին, երկհարկանի, քառակուսի հատակագծով, քանդակազարդ զույգ լուսամուտներով։ Առաջին հարկի պատի ներսում կան երկու փոտք խորաններ և քարե աստիճաններ, երկրորդ հարկ բարձրանալու համար, որտեղ կան չորս փոտքաններ և սյունազարդ գմբեթ։ Զանգակառուն մուտքը կամարակապ է, Զանգակառուն առաջ, բակում կան դամբարանները մեծ վարդապետների՝ Դավիթ Քոբայրեցու (ԺԴ դար), Հովհաննես Սարկավագ հմաստասերի (1229 թ.), Հովհաննես Պլուտի (ԺԴ դար) և ուրիշների։

Վանքի պարիսպներից գույս գտնվում է Սեղանատառը, 30 մետր երկարությամբ և 9 մետր լայնություն մի շենք, շինության թվականը անհայտ, բայց հավանաբար ԺԴ դարից, երբ Հաղբատն ուներ մեծ թվով միաբանություն։

Հաղբատի վանքը շրջապատված է պարսպով (ԺԴ դար)։ Պարիսպը արևմուտքից տափած է աշտարակներ, Գլխավոր մուտքը, արևմտյան կողմից, կամարակապ է։ Պարսպից ներս, թե՛ հյուահսային և թե՛ հարավային պատերին կից կան միաբանական խցիկներ, ուր աղոթել և ատեղծագործել են մեծիմասս հաղբատցիք։

Պարսպից դուրս, արևելյան կողմում է գտնվում վանքի աղբյուրը, կառուցված 1258 թվականին, վանքի վանահայր Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից։ Սրահանման, երեք կամարակիր մուտքերով քարեղեն մի չքնար կոթող է։ Պատերին կից հաստառված է հնգանգ գմբեթը վավանդաններ, որոնց մեջ հոսում է առաստղերին սառնորակ ջուրը, բերված։ Ս. Լուսի սար լեռան ակունքներից, կամ խողովակներով։ Աղբյուրից գեպի արևելք Հաղբատի գերեզմանատառներ է (հոգեվոր և աղխարհիկ) գեղակերտ խաչքարերով։

Ժամերն անցնում են աննկատ։ Հաղբատն իր շրջակայքով շատ հարուստ է պատմական հուշարձաններով և օրեր են պետք հանգամանորեն այցելելու այդ բոլորին։ Արդեն երեկո է, արեւ մայր է մտել, պետք է շտապել։ Նորից մտնում ենք Ս. Նշան, ու իշխող գիշերվա հետ, կառարում մին մեջ անկեցնեց։ Հաղբատի դարավոր կամարների տակ հնչում է մի անգամ ևս ոի խորոց սրբամբած մեր աղոթքը։ Անասելի հուգումով, համարյա բռնի բաժանվում ենք Հաղբատի սուրբ քարերից։ Ինչում ենք սարից ներքմ։ Մեզ է հետևում հեռավից Հաղբատի կամողիկներ։ Գիշերում ենք Ալավերդիում և հաջորդ օրը, ամսի 26-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 7-ին, մերադրամի մեր ճանապարհի վրա, ուղևորվում ենք Օձուն (Ուգուանար) գյուղը, ուր կա հոյակերտ տաճար և մահարձան կողմող։ Գեղադիր գյուղը սարդի լանջին թաղված է ծառերի և փարթամ կանաչի մեջ։

Մոտենում ենք պարսպապատ եկեղեցուն։ Օձունի եկեղեցին կառուցել է Հովհաննես Օձնեցի Բմաստասեր կաֆողիկոսը 735 թվականին։ Եկեղեցին գմբեթակիր է և ունի բազիկի ձև, երեք կողմերից շրջափակված կամարակապ սրահներով։ Տաճարի գմբեթը շրջանավանդող, պատուհանների պատճեն երեր զարդարվել են բուսաքանդակներով և սրբերի բարձրագագանդակներով։

Եկեղեցու արևելյան պատի լուսամտափի ճակատում գտնվում է Քրիստոսին ներկայացնող մի պատկերաքանդակ, ձախ ձեռքում գոյնած առաջարարական դարձու և սրբառ պատճեն երեսի վրա գրված է միջին երկարագործով՝ «Ակզիանէ էր բանն առ, մյուս ե-

րեսի վրա՝ պատճեն էր առ Ած. և Ած. էր բաննա: Տաճարի հյուսային կողմում բարձրանուած է գերեզմանական մի շատ հին և բացառիկ աստիճանավոր կոթող, երեք քառանկյուն սուներով, կամարով կապված միմյանց հետ: Հուշարձանը կառուցված է վարդապուլն սրբատաշ քարերից: Եկեղեցու շրջափակը գերեզմանատուն է, գեղաքանդալ խաչքարերով: Կես ժամ մնալուց հետո հրաժաշտ ենք առնում Օձունի եկեղեցուց և ուղղվում դեպի Հառինա վաճեքը:

Ճանապարհին հանգստանում ենք նորից «Ճաշարան Գոստարք»-ում, և ապա կտրելով Փամբակի և Երանեցի դաշտը, լենինական քաղաքի միջուվ, երեկոյան ժամը 6-ին հասնում ենք Հառիճա վաճեք:

Հառիճա վաճեքը գտնվում է Արթիկի շրջանի Հառիճա գյուղում: Հառիճը եղել է պատմական Հայաստանի հնագույն և նշանավոր բերդավաններից մեկը, իսկ վանքը՝ Հայաստանի հոգմուր խոշոր կենտրոններից և մշակույթի վառ օջախներից մեկը: Հառիճա վանքը բազմել է Արագածի փեշերին, ձորի բարձր քարափի ափին, գեղատեսիլ վայրում: Հառիճա վանքը իր հովանուն կլիմայով, սանուրակ աղբյուրներով, ալպյան կանաչությամբ և երփներանդ անուշարույր ծաղիկներով՝ հին օրերին եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսուների սիրած ամառանոցային վայրերից մեկը:

Հառիճա վաճեքի նշանավոր հուշարձանների խումբը ըստիկանում է երկու գավիթ-ժամանակից, երկու մասուտից, վանականների խցիկներից, պարսպապատից և գերեզմանոցից:

Հառիճա վաճեքի ամենահին կառուցյան է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կառուցված մի ուն Սարգս Շոնի կողմից, և գարում: Կենտրոնագրեթ փոքրիկ եկեղեցի է դա, խաչաձև հատակագծով, ներսից վկոր, գույնավոր մուռափի արևմտյան փողմում փոքր զանգակատնով: Եկեղեցին կառուցված է սև ու կարմրի տուփի մաքուր տաշված մեծ քարերով:

Հառիճա վաճեքի գլխավոր եկեղեցին է Ս. Աստվածածին եկեղեցին, որը կառուցել է Զաքարի սպասալարը 1201 թվականին: Սա ընդարձակածավագալ մեծ կառուցյան է, բարձր ու լայնանիստ գմբեթով: Հատակագիծը արտաքուստ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից՝ խաչաձև: Խորանները երկարգանի են: Վերի հարգի խորանները սրահաձև, սյունազարդ և կամարակապ, փշանների համար, և ուր բարձրանում էին 12 աստիճան ունեցող քարի սանդուղքներով: «Խորանների այսպիսի բուծումը եղակի դեպք է հայկա-

կան ճարտարապետության մեջ», ըստ մասնագետների:

«Տաճարի արևելյան ճակատի վերի մաստմ, պատի մեջ արտուցված է Զաքարի և Եղանական եղանակությունների ամբողջական, մեծադիր բարձրաքանդակը: Եկեղեցին կառուցված է վար մանիշակագույն մաքուր հղկված խո- 2որ բարերում, ճակատների և գմբեթի թրմ- բումի գուսամտաները պսակված են գոտ- կավոր 2բանակներով, գմբեթի վեղարը պարտարված է ծովերով, իսկ գիշերը պա- տած են ծաղկահյուս զարդաքանդակներով:

Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, տաճարին կից, գտնվում է Գավի- րը կամ Փամբարունը, որը կառուցվել է ժդ- դարի 50-ական թվականներին Վահրամ Հե- ճուակ իշխանի կողմից, քառակուաի հատա- կագծով, չորս հաստահեղույս և ամբողջա- կան ութ կեսայունների վրա, թաղակապ ծածկով, կենտրոնում հատուկ քառակուաի անց-երդիկով: Գավիթը երեսապատված է կարպագույն բազմաբարձրության կողմում գտնվում է երկրորդ գավիթը, ավելի վի- ճակուած:

Այցելում ենք նաև ձորի քարափի եղբայր գտնվող մատուսք, միաբանության հացիկնե- րը, կաթողիկոսավան ամառանոցը՝ վանքի հյուսիս-արևմտյան կողմում, պարսպից ներս, բողոքն էլ երեքհարկանի, շարված վարդագույն տուփի տաշված քարերով: Ա- ռաջին հարկում են մառանը, ամբարե- րը, սեղանատունը, խոհանոցը, անասնա- գումբը:

Հառիճա վաճեքը բուլոր կառուցյաները պա- րսպապատված են: Արևելյան պարիսպը կառուցել է Զաքարի սպասալարը:

Վաճեքի գերեզմանատունը գտնվում է պարսպից գույս, գույսամիջում, բարձրա- դիր վայրուած: Հառիճա վաճեքում հնատաքի բարձր այս է, որ ոչ գավթուամ, ոչ բակում չկան զամբարաններ, ինչպիսիք կային Սանահ- նում և Հաղպատում:

Երկու ժամ մեջ հասցինք Հառիճա վաճեքը: Ժամը 8-ին կատարեցինք երեկոյան ժամեր- գություն: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին լիքն էր պատափ աղոթավորներով: Մեզ խո- րապես հոգեց Հառիճա վյուղացիների բարե- պաշտություն ու հյուրասեր ասպանջականու- թյունը: Նրանք մեզ հյուրասիրեցին առատո- ւեն թարմ զավաշով, սարի մածնով և պա- նիրով, և մեզ ճանապարհեցին սիրով և ու- րախությամբ: Երեկոյան ժամը 9-ն էր, ա- ռեզ մայր էր մտել, երբ մենք հրաժեշտ ա- ռանք Հառիճա վաճեքից, անմոռանալի հու- շերով:

Նույն գիշեր ժամը 1-ին մեր խումբը հասավ Մայր Աթոռ, 700 կիլոմետր ճանապարհ կտրելուց հետո:


Դեպի մեր պատմական վանքերը կատարված այս ովաստագնացությանը իր քաղցր ու սրտագին հուշերով և մեզ պատճառած իր հոգեկան խորունկ բավականությամբ, ոչ միայն առհավետ անմոռանալի է մնալու մեջ, այլ նաև ընդմիշտ մեր սրտերը լցնելու է անհուն

երախտագիտությամբ և շնորհակալությամբ՝ դեպի մեր բոլորի սիրելի Հայրապետը, որը այս երջանիկ տիվոտագնացության առիթը շնորհեց մեզ:

Վերագրարձանք Մայր Աթոռ՝ հոգեկան նոր լիցք, նոր կենդանություն և շոնչ առած մեր պատմական վանքերի գեղեցիկ հուշարձաններից և նրանց կամարների տակ ծրարված խորհուրդներից:

Ա. Հ.





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ

ՎԱՀԱՆ ԺԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏՈՒԹՅՈՒՆ

 ահան ծայրագույն վարդապետ Բաստամյանը մեկն է 19-րդ դարի երկրորդ կեսի էջմիածնական այն միաբաններից, որոնք թողել են արժեքավոր պատմա-քանասիրական մեր մշակույթի զանարանին մեջ: Ժամանակակիցները քիչ են խոսել նրա մասին, բայց խոսել են շերմությամբ, բարձր գնահատելով անշահախնդիր ու հայրենասեր կղերականի ոգին, փայլուն գիտնականի ու անխոնչ բանասերի տաղանդը:

Վահան ծայրագույն վարդապետ Բաստամյանի մասին ժամանակակից Ղ. Աղայանը գրել է, «Մի հարյուր տարի պիտի անցնի, որ կրկին մի Բաստամյանց երեա, բայց այն էլ՝ դժվար թե... Նա դեռ ուսանող ժամանակ «Անդուա-ի առաջին տարիներում ոգեց Քենամին Ֆրանկլինի կյանքը: Նա չեր կարող երևակայել, որ այդ մարդու կենսագրությամբ ինձ մեծ խրախուս տվեց¹»:

Մեզ մանրամասն տեղեկություններ չեն հասել Բաստամյանի կյանքի սկզբնական շրջանի մասին: Նրա վախճանման առթիվ «Արարատ» ամսագրի 1881 թվականի նոյեմբերի 30-ի համարում զետեղված մահագուականից պարզվում է, որ նա ծնվել է 1842 թվականին, ուսի մեդալով ավարտել է Սոսկվայի Լազարյան ճեմարանը և 1862 թվականին ընդունվել որպես ազատ ունկնդիր Սոսկվայի կայսերական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: «Բաստամյանը այդ ժամանակ մարդասիրական զգացմունքներով էր տոգորված, նեղ ազգասիրական ոգի չուներ: Նա ինքնակրթության և արհեստների պաշտպան էր: ... Համալսարան չեր հաճա-

խում և բոլոր կուրսերի քննությունն էլ մի անգամից տվեց, որով զարմացրեց շատերին ու գրավեց պարոն Սանասարյանցի ուշադրությունը... Նա շատ հոգվածներ էր գրում, բայց տպել էր տախիս կեղծ ստորագրություններով... Հիրավի տր այս մարզը նշանավոր մարդ էր... Մաքրասեր էր վերին աստիճանի, իր կերակուն ինքն էր եփում, իր հագուստեղենը ինքն էր կարում²:

1867 թվականին նա փայլուն հաջողությամբ ավարտում է համալսարանը: «Այնուհետև նրա առաջ բացված է հառաջադիմության և գործունեության ազատ ու ընդարձակ ասպարեզ³»:

Բաստամյանը գալիս է էջմիածին «Հայոց եկեղեցական ու քաղաքական իրավաբանությունն ուսումնասիրելու համար էջմիածնի մատենագրաբանում», որպես իրավաբանական գիտությունների թեկնածու Բայց Մայր Աթոռի խաղաղ ու խորհրդավոր շրջանակը, նրա հայ կյանքում կատարած դերը գրավում են նրան և նա ցանկանալով յուր տաղանքն Հայաստանյաց եկեղեցվոր մեջ եկեղեցական պաշտոնավարությամբ ավելի շահացնել, ուստի հոժարությամբ ընտրեց կուսակրոն քահանայություն, քաջ զիտելով, որ նույն դասակարգի ընտրելագույններն յուրայնց մեծ պարտականության հետ ունեն և մեծ հարգություն թե՛ ներկայի և թե՛ ապագայի առաջ, համոզված լինելով, որ ուսայլ և բարեկիրթ հոգևորականաց անհրաժեշտ պետք ունի Հայոց եկեղեցվոր և Աղդիս ներկա վիճակն⁴:

Եղիա Բաստամյանը (այս է եղել նրա աշխարհական անունը) 1872 թվականին գիմում

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 124—125:

¹ Ղ. Աղայան, «Իմ կյանքից», Հայպետհրատ, Երևան, 1955 թ., էջ 124:

է Ամենայն Հայոց Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսին, խնդրելով իրեն ընդունել որպես Ս. Էջմիածնի միաբանության անդամ: Հայութենասեր ու լուսամիտ կաթողիկոսի կենդանի օրինակը, իր իսկ արած խոստովանության համաձան, պակաս գեր չէր խաղացել թաստամյանի այս որոշման մեջ:

«Արարատ» ամսագիրը իր 1872 թվականի փետրվարի համարում գրում է Վահան վարդապետ Բաստամյանի ձեռնադրության մանրամասնությունները»:

«Մի քանի խոսք իմ արեղայության առթիվ հոդվածում 1872 թվականի «Արարատ»-ի ապրիլի համարում Բաստամյանը գրում է. «Ոմանք դանում են հոգևորական հատկապես հոգով փրկության համար, ոմանք դառնում են հոգևորական փառասեր և պատվախնդիր լինելու պատճառով... ոմանք դառնում են եկեղեցական յուրյանց առօրյա կյանքը ապահովացնելու համար և դյուրին ճանապարհություն ապրուած ձեռք բերելու համար»: Վահան արեղայ Բաստամյանը միանգամայն պարզորդ կերպով հայտնում է, թե ինքը դարձել է եկեղեցական «ազգակարգական հիմնարկության մասնակիության միանալու համար ապելի լայն և ընդարձակ ասպարեզ գործակատարության և ավելի հիմնավոր և հզոր միջոցներ... ազգաշինության համար»:

Այդ օրերին, վեր հանելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմական դերը հայ ժողովրդի ազգապահանման գործում, Վահան արեղայ Բաստամյանը գրում էր. «Եկեղեցին պետք է միխիթարի մեզ այսպիսի տիւուր և ողբալի ժամանակ, եկեղեցին է կազմում մեր փրկության ղեկը: Միայն եկեղեցին կարող է պահպանել հայությունը, ինչպես պահպանել է մինչև այսօր, միայն եկեղեցին կարող է նորոգել ազգությունը, տալ մեզ գիտովիյուն, հարատություն, երջանկություն, փառք...: Բայց ինչպես կարող է, — ավելացնում է նա, — եթե շունենա արժանավոր գործակատարներ, ուսումնական, առաքինի, չերմեռանդ, հավատարիմ, աստվածասեր պաշտոնյաներ...»:

Եկեղեցին պատմամյանը Մայր Աթոռի այնպիսի հոգևորականներից մեկն էր, որ գիտակցում էր իր կոշման պատասխանատվությունն ու լրջությունը, և իր ուժերը նվիրում էր Մայր Աթոռի ծառայության նվիրական գործին: «Եթե Կաթոլիկ եկեղեցին ունի յուր հոշակալոր Հոռվիմը, — գրում է նա, — եթե Հոռաց եկեղեցին ունի յուր քաղմահամբավ Բյու-

զանդիտնը, Հայաստանյայց եկեղեցին նույնպես ունի յուր փառազարդ էջմիածնը: Այստեղ ծագեցավ Հայոց Ազգի հոգևոր լուսավորության առաջին ճառագայթը, այստեղ բիեց նորա մտավոր զարգացման և լուսավորության աղբյուրը, այստեղ ցոլաց Հայաստանյայց եկեղեցվոր անխախտ և անսասան հաստատության ուժը, այստեղ ստացավ ազգային կյանքի կենտրոն, տիեզերացիր պազի անխպելի շաղկապ, միության մամուր ողակի: Եվ այսուհետև այստեղից պետք է ծագի ազգային լուսավորության նոր արշալույսը, այստեղից պետք է հալածվի և ցըրվի այժմյան տգիտության աղջամուղը, այստեղից պետք է ստանա Ազգը նոր կյանք, նոր ընթացք, բարոյական ուժ և հաստատ միություն»:

Հավատավոր ու պատրաստված հոգևորականը, բարձր գնահատելով Ս. Էջմիածնի Մայր Աթոռի գերն ու նշանակությունը հայ ժողովրդի հոգեր և ազգային կյանքում, սըրտափին կոչ է անում ույալ և ազգասեր երիտասարդությանը՝ հավաքվել Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսի շուրջը Ս. Էջմիածնի, որպեսի կարողագուաս սա կատարել յուր բարոյական և սրբազն պարտավորությունները»:

Այս ոգով և գիտակցությամբ Բաստամյանը նվիրվում է Մայր Աթոռի ծառայության գործին նա նշանակվում է Ս. Գայանեի վանքավայրի վանահայր ու Ճեմարանի ուսուցիչ և դաստիարակ:

Մայր Աթոռում և Գայանեի վանքում Վահան ծայրագույն վարդապետը ծավալում է եռանդագին գիտական, բանասիրական գործունեություն:

Այդ շրջանում «Արարատ», «Փորձ» և իր խմբագրած «Դպրոց» ամսագրերում լույս տեսած նրա բազմաթիվ հոգևորականները հանդիսանում են շոշափելի վկայություններ նրա գործունեության: 1880 թվականի «Փորձ» ամսագրի № 3-ի հավելվածում լույս ընծայած «Մի նկատողություն» խորագրով հոգևորական Բաստամյանը խոսում է այն մեղվաշան պըրպըրտունների մասին, որ նա կատարել է Ս. Էջմիածնի մատենադարանում, Փարիզի Ազգային մատենադարանում, Լոնդոնի Բրիտանական թանգարանում, Վիեննայի Կայսերական մատենադարանում, Պետերբուրգի մատենադարանում, Մոսկվայի Ռումյանցովի թանգարանում, Գերմանական Գոթայի քաղաքային մատենադարանում, Յոդինի ըն-

8 նույն տեղում:

9 նույն տեղում, էջ 145:

5 «Արարատ», 1872 թ., էջ 73:

6 նույն տեղում, էջ 142:

7 նույն տեղում, էջ 143:

թերցարանում, մեծ ու փոքր բազում այլ քաղաքների և անհատ մարդկանց գրադարաններում:

Գիտական-բանասիրական իր այս տքնաշան պրատումներին զուգընթաց Վահան Ժայրագույն վարդապետ Բաստամյանը միշտ հնչեցրել է Ավետարանի պատգամները—թրիստոսի պատգամները, ամենուրեք հանդես գալով որպես բոլորնավեր հայրենասիր կղերական: Բնորոշ է հայտնի բանասիր Երվանդ Շահազարի վկայությունը այն մասին, թե Մոսկվայի հայոց Ս. Խաչը եկեղեցում Վահան վարդապետի քարոզից ըլազարյան ճեմարանի հայ աշակերտների բերանում պահանդինաց նրա մի քանի խոսքերը. «Որտեղ Հայ Ազգն է, այնտեղ էլ եկեղեցին, որտեղ եկեղեցին՝ այնտեղ էլ դպրոցը, որտեղ դպրոցը՝ այնտեղ էլ լեզուն, որտեղ լեզուն՝ այնտեղ գրականությունն ու հայ մշակույթը»¹⁰:

Իրավաբանական, մանկավարժական, եկեղեցա-պատմագիտական իր տպագիր և անտիպ բոլոր աշխատությունների մեջ Վահան ծարյագույն վարդապետ Բաստամյանը հանդես է բերել լուրջ գիտնականի, համբերատար հետազոտողի բժախնդրություն, հմտություն, լրջություն, ազգային-եկեղեցական կարիքների անմիջական արձագանք, նվիրվածություն, անկեղծություն:

Ուշագրավ է նրա անտիպ «Տարեգրություն», որն, ըստ մեզ հասած գրավոր տեղեկությունների, «Բաղդացած է 400 մեծագիր երեսներից, բովանդակում է յոր մեջ շատ հետաքրքիր նյութեր, որպիսիք են՝ Գևորգ Դաթողիկոսի մասին, Ս. Էջմիածնի բոլոր եպիսկոպոսների և աշքի ընկնող վարդապետների մասին, Ճեմարանի մասին, և Ռուսիայի և Թյուրքիայի նշանավոր աշխարհական անձերի մասին համառոտ կենսագրական տեղեկություններ»¹¹:

Նրա տպագիր աշխատություններից ուշագրավ է «Արարատ»-ի 1872 թվականի համարներում լույս տեսած «Թե ինչպես կազմվեցավ Հայոց Ազգը» խորագրով «Հոգվածաշարքը» Հեղինակը այստեղ զուրս չի եկել մեր դասական պատմագիրների տվյալներից, սակայն էականն այն դրական վերաբերմունքն է, որ նա ցուցաբերել է իր օրերում հայտնաբերվող բնեուագրերի և նրանց վրա հենվող պատմագրության նկատմամբ: Այդ տեսակետից առանձնապես ուշագրավ են նրա ծանոթագրությունները: Բաստամյանի արժանիքն

այստեղ կայանում է նրանում, որ նա հենց սկզբից և եթե լավատեսությամբ մոտեցակ պատմական հուշարձանների և արձանագրությունների տված նոր լույսին:

Վահան ծարյագույն վարդապետը «Փորձ»-ի 1880 և 1881 թվականների համարներում ունի մի լուրջ գիտական հոգվածաշարք՝ «Ամուսնությունն ըստ հայոց եկեղեցական իրավաբանության» խորագրով: Իր մասնագիտության վերաբերյալ այս լուրջ ուսումնասիրությամբ հեղինակն ապացուցում է ամուսնության բորոյական նշանակությունը¹²:

Հին հայ իրավունքի պատմության և իրավաբանության խոշորագույն մասնագիտ և մեծավաստակ գիտնական պրոֆ: Խ. Սամվելյանը այս հոգվածաշարքը գնահատելով, այն բնորոշում է հետևյալ կերպով. «Վ. Բաստամյանն հիմնվելով ձեռագիր օրենսգրքերի ու կանոնագրքի ուսումնասիրությունը վրա, տպագրել է (1880 թ.) և մի այլ ստվար աշխատությունը՝ «Ամուսնությունն ըստ հայ եկեղեցական իրավաբանության»: Չնայած վերնագրի ընդգծված բնույթին՝ այդ հետազոտությունը շահեկան է հայ իրավունքի պատմության համար, ներկայացնելով ամուսնական իրավունքի ուսումնասիրությունը որոշ շափով նաև քաղաքացիական իրավունքի սահմաններում: Այդ աշխատությունը, որ տակավին անվագրությունը է մնացել, պատկերացնում է ամուսնական իրավունքի օրենսդրության ամրող զարգացումը¹³:

Դ. Աղայանը, անդրադառնալով հայ իրավունքի պատմության ուսումնասիրության գործում Վահան վարդապետ Բաստամյանի մատուցած անգնահատելի ծառայությանը, գրում է, որ նա «Գոյզ Մխիթարյան Դատավատանագրքի ժողովը կամաց անհաջող է անդամանությունը»:

Եվ իրոք, Իրավաբանական իր խորունկ գիտելիքները զուգորդելով բազմակողմանի ու խորազնին բանասերի զանասիրության հետ, նա բանավեճի մեջ է մտել Հայոց ինձիմյանի և հատկապես գերմանացի գիտնական պրոֆ. Բիշովի հետ: Պրոֆ. Խ. Սամվելյանը բարձր է գնահատում Բաստամյանի մոտեցումը Մխիթարյան Գոյզի և Լվովի դատավատանագրքի մասին. «Պրոֆ. Բիշովն, անձանոթ լինելով հայոց գրականությանն ու պատմությանը, չի կարողացել ճիշտ որոշել իր հայտնարերած լինացայոց օրենսգրքի աղբյուրների ծագումն և ընդհանրապես հայ իրավունքի մասին գաղափար չի ունեցել: Մինչդեռ կեմբերգի հայ

¹⁰ «Էջմիածն», 1951 թ., Խ ԻII, էջ 38.

¹¹ Հ. Արսեն Դ. Ղազիկյան, «Հայկական մատենափառքուն և հանրագիտարան», Ա հատ., Վենետիկ, 1. Ղազար, 1909—1912 թ. թ., էջ 315:

¹² «Փորձ», 1880 թ., Խ 6—7, էջ 151:

¹³ Պրոֆ. Խ. Սամվելյան, «Հին հայ իրավունքի պատմության», Հատ. I, Երևան, 1939 թ., էջ 18:

¹⁴ Դ. Աղայան, «Հիմ կյանքից», էջ 125:

օրենսգրքի և Մխիթար Գոշի Դատաստանագրքի հոդվածների հասարակ համեմատությունն իսկ ապացուցում է նրանց սերտ առնչությունը: Իրոք, Վահան Բաստամյանցը, բաղդասելով այս երկու օրենսգրքի հոդվածաշարը, հաստատեց, որ կեմբերգի հայ օրենսգրքի հոդվածների մի մասը վերցված է Մխիթար Գոշի Դատաստանագրքից գրիթե բառացի, իսկ մեծագույն մասը ենթարկված է թիշ կամ շատ փոփոխությունների...¹⁵: Այստեղ մեր նպատակն է ապացուցել, որ Բաստամյանը, կատարելով պատմա-լեզվա-բանասիրական խոջոր ուսումնասիրություններ, դուրս է բերում մոռացության փոշոց և ըստ արժանավույն զնահատում Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը, միաժամանակ նշելով այն պատմական դերն ու նշանակությունը, որ նա խաղացել է Ռուբինյանց իշխանության ժամանակաշրջանում, լինական ու վրացական օրենսգրությունից և հայ աշխարհիկ ու մանավանդ եկեղեցական դատավորության մեջ:

Հնահատեղով Վահան ծայրագույն վարդապետ Բաստամյանի մեծ ծառայությունը Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակման առթիվ, պրոֆ. Խ. Սամվելյանը նրա կատարած շնորհակալ աշխատանքը բնորոշում է այսպիս. «Մեր իրականության մեջ հայ իրավունքի ուսումնասիրության անդրանիկությունը պատկանում է Վահան Բաստամյանին, նրա գլուխ-գործոցը պետք է համարել Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակումը (1880 թ.), որով նա հայ իրավունքի այդ միակ պատմական ժողովածուն հրատարակի վրա էր դնում հետաքրքրությունների և հետազոտությունների առաջ: ...Բայց և այնպիս, նա տակալին մնում է միակ մատչելի աղբյուրը և պահպանում է իր գերազանցությունը վերշին ժամանակներ հայերեն հրատարակված մի քանի այլ օրենսգրքերի վերաբերմամբ, որոնց հրատարակողները զացել են նույնիսկ նվազագույն շափով պահպանել այդպիսի պատմախանատու տպագրությունների գիտական ձևալորումը: Կարևոր նշանակություն էր ներկայացնում իր ժամանակին Վահան Բաստամյանցի ընդարձակ «Հառացարանություն»-ը, որ կցված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի բնագրի հրատարակությանը, և որը նախապես «Դատաստանագրքի պատմություն», էլ 9:


գիրք Մխիթար Գոշի, իրաւաբանական հետազոտությամբ՝ խորագրով պարբերաբար ապագրված է Թիրիխիի «Փորձա ամսագրում 1879 թվականին: Դա հայ իրավունքի պատմության մենագրական մի հետազոտություն է, որ առաջին անգամ է երևան գալիս հայ իրականության մեջ և դրանով պատվավոր տեղ է գրավում: «Հշշյալ «Հառաջարանության» մեջ հեղինակը փորձ է անում ուրվագծել հայ օրենսգրության պատմությունը և ապա մանրամասնորեն կանգ է առնում Մխիթար Գոշի անձնագրության ու նրա կազմած օրենսգրքի վրա, վեր հանելով նրա նշանակությունը, վերլուծելով նրա սիստեմը, աղբյուրներն և իրավաբանական տեսական ու գործնական բովանդակությունը»¹⁶:

Վահան վարդապետ Բաստամյանցի գուխագրությունը է Մխիթար Գոշի դատաստանագրքի ուսումնասիրությունն ու հրատարակությունը: Այդ մասին նա իրավացիորեն գրում է. «Եվ ահա մի այսպիսի գիրք, որը մի անգին գոհար է մեր մատենագրության մեջ, որը այսպիսի մեծ նշանակություն ունի, որը այսպիսի ընդարձակ գործադրություն ունեցավ ո՛չ միայն հայոց ժողովրդի և պետության մեջ, մինչև այսօր մնացել է առանց տպագրության: Եվ ես արդարեւ երջանիկ եմ համարում ինձ որ՝ այս բախտոց ինձ սիճակեցից: Բայց Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեր ներկա հրատարակությունն էլ ոչ իրեւ մի ազգային օրենսգրքը կամ մի եկեղեցական կանոնագիրք, որպեսպի գործնական գործություն առանձ, այլ փրկւ մի իրավաքանական շարադրություն, հասկապես այն նպատակով որ՝ սա դառնա այսուհետև մի կողմից՝ վեմ անկյան հարկական իրավաբանության և մյուս կողմից՝ մատչելի առարկա իրավաբանական բարձր գիտության հետազոտությանց համար»¹⁷:

Մխիթար Գոշի հիմնական այս աշխատության խորունկ վերլուծությունն ու վեր հանումն էլ հանդիսանում է խոշորագույն այն ծառայությունը, որ բազմավաստակ ու հայրենասեր այս էջմիածնականը իրագործել է՝ ի ծառայություն և ի փառ հայ մշակութի և նրա հոգերը կենարոն Մայր Աթոռ Ս. էջմիածնի:

¹⁶ Նույն տեղում, էլ 17—18:

¹⁷ Վահան ծ. վրդ. Բաստամյան, «Մխիթարայ Գոշի Դատաստանագրքի Հայոց», Վաղարշապատ, 1880 թ., էլ 108:



Ա. ՏԻՐԱԶՅԱՆ

(Պացենտ, Գերազույն Հոգևոր
Խորհրդի անդամ)

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՆԱՎԱՏՈՐՄԻԴ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Կիլիկյան Հայկական պետության պատմությամբ և մասնավանդ նրա տնտեսական կյանքով զբաղվողի համար կարենը է դառնում մոռականալ այն հարցադրության, թե արդյոք Կիլիկյան Հայկական պետությունն ունեցել է իր սեփական նավատորմիջոց: Սեփական նավատորմիջոց ասելով հասկանում ենք թե՝ պետական և թե՝ անհատական սեփականությունն ներկայացնող նավերը: Դըրված հարցին տարբեր պատասխաններ են տվել Հայկական Կիլիկիայի պատմությամբ զբաղված լավագույն հեղինակներ՝ Վիկտոր Լանգուան և էդ. Դյուկորիեն, Հ. Դ. Ալիշանը, ինչպես նաև վերջերս մահացած պրոֆ. Գր. Միքայելյանը:

Այս հեղինակներից միայն Վ. Լանգուան է, որ չի զբաղվել Հայկական Կիլիկիայի նավատորմիջոց հարցով: Հայտնի է սակայն, թե նա ինչ մեծ աշխատանք է կատարել, եկուպական բազմաթիվ արխիվներից հավաքելով Կիլիկյան Հայկական պետության թագավորների հրովարտակներ, արտօնագրեր, զեկուցումներ, հրամանագրեր, նվիրատվության գրեր, ստացագրեր և այլն, իրենց հայերեն, մեծ մասամբ լատիներեն ու նաև ֆրանսերեն և իտալերեն բնագրերով և վավերացված պատճեններով:

1 Այս բոլորը Վ. Լանգուանի ի մի է հավաքել և 1863 թվականին Վենետիկում հրատարակել «Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens» ընդհանուր վերագրի ներբուժ:

Սրանից առաջ նույն հեղինակը հրատարակել էր իր հետեւյալ երկու աշխատությունները՝ Կիլիկյան Հայկական պետության վերաբերյալ. 1) «Essai historique et critique sur la constitution sociale et politique de

իր այս աշխատություններում» Վ. Լանգուան բավական տեղ է տված Կիլիկյան Հայկական պետության նաև տնտեսական կյանքին, հիմնվելով վիսավորապես իր իսկ հրատարակած փաստաթղթերի տվյալների վրա: Սակայն մեր վերնագրած հարցին ամենին ուշադիր եղած շինելով, նա աշքաթող է արած իր իսկ հրատարակած այն կարենը ու պաշտոնական փաստաթուղթը, որը, ինչպես վարը կաեսնենք, վերջնականապես լուծում է Կիլիկյան Հայկական պետության նավատորմիջոց գոլության հարցը՝ միանգամայն դրական իմաստով:

Վերոհիշյալ հեղինակներից էդ. Գյուլտրիեն առաջինը լինելով զրադիլ է Կիլիկյան Հայկական պետության նավատորմիջոցի խնդրով և հանգել ժխտական տեսակետի: Նա փորձել է իր տեսակետը հիմնավորել առաջին հերթին Կիլիկիայի ափերի տոպոգրաֆիական անհարմարություններով և ընդարձակ նավահանգստների բացակայությամբ²: Այս տեսակետը մասամբ միայն ճիշտ է այն իմաստով, որ Կիլիկիայի ծովագերն իրենց ամբողջ երկարությամբ պաշտպանված ծոցեր ու խորշեր չունենալով, անհրաժեշտ հարմարություններ չունեին իրեն նավահատուցներ ծառայելու համար: Այս տեսակետից հարց ծոցը, ուստի և անշուշտ պատահական երևությունը էր,

l'Arménie», St. Pétersbourg, 1860 և 2) «Mémoire sur les relations de la république de Gênes avec le royaume chrétien de la Petite-Arménie pendant XIII et XIV siècles», Turin, 1861.

2 Sh. Ed. Dulaquier. «Recueil des historiens des Croisades, Documents arméniens», tome I, Paris, 1869, p. XXXV.

աղդ ծոցում զարգացավ Կիլիկյան Հայկական պետության ամենավաճառաշահ նավահանգստը Այսաբ:

Առևտրական երկրորդ կենտրոնն էր Տարսոնը, որը Կիլիկյան Հայկական պետության ժամանակաշրջանին դեռ նավահանգստ էր Սիրիոս գետի (այսօրվա Տարսոս Հայի) վրա: Այս վերջինը, սակայն, դարերի ընթացքում իր բերած տիրմով ու ավազով փակած ինելով գետաբերանը, Տարսոնն այսօր դադարել է ծովի հետ շրային հարաբերություն ունենալուց: Կիլիկյան Հայկական պետության ժամանակաշրջանում Տարսոնի առևտրական գերազին դերի մասին այսքան միայն ասենք, որ այնտեղ էր հաստատված Կիլիկյան Հայկական պետության մաքսային հիմնարկների կենտրոնական վարչությունը, որտեղ պարտավոր էին ներկայանալ օտար առևտրականները, վճարելու համար իրենց ներմուծած (կամ արտածած) ապրանքների մաքսերն ու ստանալու համապատասխան արտոնություն իրենց առևտրական գործառնությունների համար Կիլիկյան Հայկական պետությունում:

Պոմպեանովիսի ծոցի արևմտյան ափին էր գոտվում Կոռիկոս նավահանգստը, որը Կիլիկյան Հայկական պետության վաճառաշահ կենտրոններից մեկն էր Այս Այսից հետո իսկապես երկրորդ խոշոր նավահանգստն էր, որն անմիջականորեն գտնվում էր ծովի ափին:

Նավահանգստներ էին նաև Արանա և Մամեստիա կամ Միսիս քաղաքները, որոնցից քիչ ներքեւ Սարսու (այսօրվա Սիհուն) և Պյուտամու (այսօրվա Ճիհուն) գետերը իրար միանալով թափվում էին Միջերկրական ծով: Այս գետերը Հայկական պետության շրջանում մինչև այդ քաղաքները նավարկելի էին: Այս երկու գետերը այսօր բաժանված են ծով թափվում, և իրենց բերած տիրմ ու ավազով նավարկելի չեն այլաւ:

Բացի վերոհիշյալներից Կիլիկյան Հայկական պետությունը ունեցել է նաև մի շարք այլ նավահանգստներ, ինչպես Սիլեկիան՝ նույնանուն գետի վրա, ծովից ոչ շատ հեռու, Պրովանսցիների նավահանգստը (portus Provensalium), Ճենովացիների նավահանգստը (portus Jenovensis), Զաֆրա (այսօրվա Միերսինը), Մալլո, Պալլորամ և այլն³:

Այս համառոտ թվարկումն էլ բավական է ցույց տալու համար, թե Դյուզորիեի՝ Կիլիկյան Հայկական պետության նավատորմիղի գոյությունը. Ժմատող այս կարծիքը ամենակի

չի հիմնավորված հարմար նավահանգստ-ների բացակայությամբ: Հեղինակի, երկրորդ պատճառաբանությունը, որով նա փորձում է Ժմատորմիղի գոյությունը, այն է, թե Հայերը իրենց բուն Հայրենիքի (Մեծ Հայք—Ա. Տ.) աշխարհագրական դիրքով էապես մայրցամաքային ժողովորդ եղած լինելով՝ իրենց գրադիներով (?) երբեք ծովի առիթ և ճա-շակ չեն ունեցել: Այս, իհարկե, չափազանց բնազնացական պատճառաբանություն է, որը չի կարող համոզի լինել, մանավանդ երբ այս հեղինակը դրան ավելացնում է անմիջապես, թե Հայերը ո՛չ ցանկություն են ունեցել նոր երկրներ գրավելու, ո՛չ էլ նրանց հարապորել են առևտրական շահերը⁵:

Կիլիկյան Հայկական պետության ծովերին այն կողմը երկրներ գրավելու փորձերի կապ նույնիսկ մտադրությունների մասին անշուշտ շկան պատճական տվյալներ, կարող ենք սել՝ ո՛չ մի տվյալ: Պատմական բազմաթիւ տեղեկություններից գիտենք սակայն, որ Կիլիկյան Հայկական պետությունն իր ունեցածը պաշտպանելու և պահպանելու մտահոգությունն ունեցել է իր գոյության ամբողջ նիթացքում: Իսկ թե Կիլիկյան Հայկական պետությանը չեն հարապորել առևտրական շահերը, այս գոտմ է, զարդանալի կերպով մի հեղինակ, որն իր հիշյալ աշխատության մեջ, թեև փոքր, բայց համեստան դեպս տես է տվել Կիլիկյան Հայկական պետության առաջարկին: Բազմաթիվ են այն պատճական տվյալները, որոնք ապացուցում են, թե, ընդհակառակը, Կիլիկյան Հայերը իրենց այնոր Հայրենիքի աշխարհագրական և ծովային դիրքի շնորհիվ, ինչպես նաև առևտրական մի շարք ճանապարհների և նրանց մեջ առաջնարթին Այսա—Թավշիկ առևտրական մայրուղու Կիլիկիայում իրենց մեկնման կետը ունեցած լինելու հետևանքով, բացահայտել են առևտրական գործառնությանց շեշտված հարապորանք, ձեռներցորեն մասնակցելով ԺՊ-ԺՊ դարերը ինք ցամաքային և թե՝ ծովային առևտրին հնդկական սահմաններից մինչև Միջերկրականի ավազանի Հյուսիսային և արևմտյան երկրները ու Եգիպտոսից ու Սիրիայից մինչև Սև ծովի հարավային ու հյուսիսային ափերը մինչև Ղրիմ ու Դնեստրի գետաբերանը, գուցեաւ և մինչև Ուգրալ տարածվող առևտրին, եր Այս և Կիլիկյան Հայկական պետության նավահանգստներ են այցելել և դրանցից մեկնել մի քանի տասնյակ ժողովորդներ:

⁴ Տե՛ս էդ. Դյուզորիեի հիշված աշխատությունը, էջ 3337:

⁵ Նույն տեղում:

րի ու քաղաքների առևտրական նավեր։ Այս հարաւատ և հետաքրքրական նյութի մանրամասնությունների մեջ շմտնելով, ուզում ենք եզրակացնել, թե Դյուզորիի հիշյալ պնդումը զորիկ է միանգամայն փաստական տվյալներից։ Եղածներն էլ նրա առաջ քաշած թեզի ճիշտ հակառակն են ապացուցում։

Կիլիկյան Հայկական պետության նավատորմիդի հարցերի վերաբերմամբ միանգամայն տարրեր մոտեցում ունի Հ. Պ. Ալիշանը, որն, այդ ժամին որոշ վերապահումներ անելով հանդերձ, չի դադարում, ինչպես միշտ, ժրաշան աշխատանքով նյութեր ու փաստեղ հավաքելուց, նույնիսկ եթե սրանք երբեմն աննշան լինեն և քիչ համոզիլ։ Այս ժամին նա գումար է օւել ի շգույէ կարերագոյն ևս պիտելիաց զնախնեացս մեր նաւարկութեանէ՝ ու անգուսնեցին և դուզնաքայլու»⁶, եզ ահա, իմացածներից շնչինները շարհամարհելու մտահոգությամբ, նա թվարկում է հետևյալները։ որ 1314 թվականին Օշին թագավորի գեսապանը Վենետիկում գնում է 560 թիակ և ուղարկուած Կիլիկիա, որ կտոն Գ-ը 1284 թվականին Վենետիկի պայլից 600 բյուզանդով գնում է մի առևտրական նավ (Տօրի), նաև՝ որ 1338 թվականին Լեռն Ե-ին տրվում կամ վաճառվում է մի հին նավ Վենետիկի նավարանից⁷, Այսուհետև Ալիշանը դիմում է, այսպիս ասենք՝ ավելի պարզունակ մի փաստի, ինչպիսին է, օրինակ, այն, թե 1321 կամ 1322 թվականին Հնդկաստանի Դանա նավահանգստում (Պոմպեյի մոտ) գտնվող մի նավի նավապետը հայ է եղել⁸։ Մրա համար, սակայն, անշուշտ, անհրաժեշտ էք, որ հայ նավապետ ունեցող այդ նավն անպայման հայկական նավ եղած լիներ։ Նույնը սակայն շնչար կարող ասել Ալիշանի այն տեղեկության վերաբերյալ, թե ներսես Լամբրոնացին Նարեկացու մասին մի մեկնության մեջ մանրամասնորեն նկարագրել է մի նավ։ Ներսես Լամբրոնացին, իբրև Տարոնի եպիսկոպոս, անշուշտ միշտ առիթ էք ունեցել իր աթոռանիստ նավահանգստում տեսնելու բազմաթիվ օտար նավերի կողքին նաև հայկական նավեր, որոնց մանրամասն նկարագրությունը հնարավոր էք անշուշտ միայն այն գեպքում, իբր նավն իր մասերով, իր կատարած տնտեսական ու ուազմական դերով արքին Կիլիկիայում մտել էք գործածության մեջ և ստացել էք հայոց լեզվում իր հատուկ նշումները՝ իր տեսակների և մասերի համար։ Այս բացատրությունը մոտավո-

6 Հ. Պ. Ալիշան, «Միսուան», Վենետիկ, 1885 թ., էջ 373։

7 Նույն տեղում, էջ 369։

8 Նույն տեղում, էջ 372։

րապես Ալիշանին է և չի կարելի այն լընդունել⁹։ Միսվանի հեղինակը թեթևակի հիշելով նաև մի քանի փաստեր, ինչպես են, օրինակ, Մարկի Պոլոյի վկայությունը կամ Լևոն Բ-ի ծովամարտը («Միսուան», էջ 371), որոնց, մեր կարծիքով, ավելի մեծ արժեք պետք է տրվի տվյալ հարցի կապակցությամբ։ Ալիշանը մի շարք հարցադրություններով մոտանում է այն կարևոր խնդրին, թե Կիլիկյան Հայկական պետության տնտեսական զարգացման համբանից կատարված պիտք է լինեն երկու կարերո դեպքեր այդ պետության կյանքին։ առաջին՝ Հայկական գաղութների հիմնումը իտալիայի բազմաթիվ քաղաքներում և առևտրական նավատորմիդի ստեղծումը։ Առաջին խնդրին մենք կանդրադառնանք հավանաբար ամսագրի հաջորդ համարներից մեկում։ Կիլիկյան նավատորմիդի գործության վերաբերյալ Ալիշանի կարծիքը, շնչայած մի շարք վերապահումների, դրական է։ նա անկասկած է համարում («աներկրայիսկ գորով») նրա գոյությունը, թեև, ասում է, ոի միան մնայ տափակին շափ նաւարկութեան Միսուանեաց, որպէս և ծովամարտիկ զօրութեանն ոցցին» («Միսուան», էջ 371)։

Հանգուցյալ պրոֆ. Գր. Միքայելյանն իր ուսուարեն աշխատության մեջ, որն Ալիշանի «Միսուան»-ից հետո միակ լայնածավալ հատորն է Կիլիկյան Հայկական պետության պատմությանը վերաբերող, հազիվ 10—15 տող է նվիրել Կիլիկյան Հայկական պիտության նավատորմիդի հարցին։ Այսուամենայնիվ նա ևս, Ալիշանի նման, անկասկած

9 Ներսես Լամբրոնացին, «Թերեւ առաջի աշաց ուներվ ի նաւակայս Տարոնի, —ասում է Հ. Պ. Ալիշանը, —այսպէս պարզաբանէ զմատուն նաւուն։ Կարմիր Մարտին է, այսինքն սիմն, կամ որ ի ծայր Մարտին է խստորնակ ձողն՝ որ պարզէ զկտան։ Թոշարանն՝ Արմիոնն է, տնսարանն՝ Հայեկն է, ուր նաւապետն նստի և դիմէ, և կամ նշան նավին, որպէս Դիսկուլուացուց նշանն։ Ապաւանդակին հաստ ձոպահն է, զոր Մալուի ասեն։ Լուժք ստուար ամուցն՝ հաստ փայտն է՝ յորոյ վերայ նաւն է, և ի քիթն՝ կից են ընդ միհեանս փայտքն։ Սամերն զծակ փայտն ասէ, ուր զեկն ցցեալ է, կամ զզեկն։ Լաստ հմանն զյատակ հաւին ասէ, կամ զնամ բոլորովին։ Զատին հաստուած՝ յողնափայտերոյն է։ Գոգք ամփոփման զմէջ նաւին ասէ։ Խելք շրթանցն եղերաց բերան և շուրթն նաւին է, ըստ այնմ, Ցիսուս նեցքը ի խելք նաւին։ Պազպաշներ բազմականացն՝ գեղեցկութիւնն որ ի նաւին լինի. Տախտակամած՝ Աթոռը և Թազմականն, և կամ ալլ ինչ. Վանդակապատ՝ որ ի մէջ նաւին միջնակ լինի ածած և բաժանած տուս ի տանէ, Քեղիքն՝ այն Զողքն՝ որ յառագաստին վլումն է, և կամ Միմեր նաւին»։

(Տե՛ս Հ. Պ. Ալիշան, «Միսուան», էջ 372—373)։

է համարում կիլիկյան Հայկական նավատորմիդի գոյությունը, միայն թե, Հեղինակի կարծիքով, որը նա չի հիմնում որևէ փաստի վրա, այդ նավատորմիդը բավարար շափով խոշոր չի եղել¹⁰: Հեղինակի բերած միակ բայց Հետաքրքրական փաստը կիլիկյան նավատորմիդի գոյության մասին հետեւյան է:

Արար Հեղինակ իրեն-էլ-Վարդին, նկարագրելով Այսի պաշարումը 1323 թվականին եփատական զորքերի կողմից, հաղորդում է, թե այս նավահանգստում հայերն ունեցել են երեք ուազմական նավեր, որոնք կոչվել են «Աւտլաս», «Շամա» և «Այսա»: Եվ երբ քաղաքի բնակիչները՝ հայերը տեսել են, որ քաղաքը պաշարող արաբները ճեղքածքներ են առաջացրել բերդի պարիսպների մեջ, շատ ընտանիքները իրենց ունեցվածքներով փոխադրվել են այս ուազմանավերի վրա, որպեսզի հասնեն կիպրոսի¹¹:

Կիլիկյան Հայկական պետության ուազմանավերի գոյության մասին ամենահամոզի փաստերից մեկն է արձանագրել մեր պատմագրիներից կիրակու Գանձակեցին: Հայտնի է պատմությունից կառա թ-ի նավամարտը իր թշնամիների դեմ, երբ նա վերադառնում էր կիպրոսից դեպի կիլիկյան: Գանձակեցին այսպես է պատմում կառա թ-ի իր սեփական նավերով նրանց շախչակելն ու նրանց բազմաթիվ նավերը փախուատի մատնելը: «Դէպեզ զի չոքաւ նա» (կառա թ-ը—Ա. Տ.) ի կիպրոս կողմի տեսութիւն իրոց: Եւ լուեալ զայն թշնամիաց նորա որք ի ցամաքի, ու ինչ կարեն ազգել նմա, պատրաստեցին նաւա բազումս, զի ի ծովու նենգեցեն զնա: Եւ լուեալ զայն արքային կառնի, դարձաւ անդքն յետու ի կիպրոս, զի էր ի ճանապարհի ի վերայ ծովում. և առ իւր նաւա պատերազմականս, և եկեալ ի դարանն, որ գործեալ էր նմա նաւուց բազմաց. և զի այր իմաստուն էր, ծանեաւ թե, յորում իցէ գլխաւորն, եհար զնա արքադիթն նաւովն և ջրասովով արար զամենեսեան. և մնացեալ նաւքն փախեան, և անկաւ ահ ի վերայ ամենեցուն հեռաւորաց և մերձաւորաց»¹²: Ուրեմն, Գանձակեցին շատ որոշ կերպով խոսում է ո՛չ միայն կելուն թ-ի սեփական ուազմանավերի, այլև իր դեմ դավադրող հավանաբար հայ թշնամիների բազմաթիվ նավերի մասին: Համենայն դեպս, կառա թ-ը, որոշ ժամանակով մինչև Աղալիայի մոտերքը ընդարձակած լինելով կիլիկյայի արևմտյան ծովափերը, անհրա-

10 «Կիլիկյան Հայկական պետության պատմություն», Երևան, 1952 թ., 400 էջ (ռուսերեն),

11 Առուի տեղում:

12 «Պատմութիւն Հայոց կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ», Թիֆլիս, 1909 թ., էջ 151—152:

ժեշտաբար կարիքը պետք է զգար ուազմանավերով պաշտպանելու այդ եկերքները, Բացի այդ, ինչպես Հայտնի է, հին և միջին դարերի ծովային առևտորին կից, շատ ընդարձակ շափերով գոյություն ուներ ծովահենությունը, որի դեմ առևտորական նավերը պաշտպանելու համար սրանց ուղեկցում էին որոշ թվով ուազմանավեր: Այս մասին կան նաև կիլիկյան առևտորին վերաբերող հաստատ Ցիշատակություններ:

Նաև միջնադարյան հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոն, խոսելով իր հոր, հորեղբոր և իր վերադարձի մասին Այսասից դեպի Աքրա 1271 թվականին, գրում է Հետեւյալը: «Հայոց թագավորը (կառա թ-ը—Ա. Տ.) եղաց յամար սարքեց մի գալեր (ուազմանավ) և պատվով ուղարկեց նրանց (պապական) լեզուատին (Աքրա)»¹³:

Կիլիկյան Հայկական պետության սեփական նավատորմիդի հարցի վերաբերյալ վերոհիշյալ պատմական տվյալներից ու նաև նվազ փաստերի հիմնված ումանց շտապ եղացակացություններից ավելի՝ դրված հարցը դրական իմաստով վճռող նշանակություն ունի մի պաշտոնական ապացուցյաց, որն ըստ երևույթին վրիպել է կիլիկյան Հայկական պետության պատմության ուսումնասիրությամբ գրադած վերոհիշյալ բոլոր հեղինակների էլ ուշադրությունից: Այդ պաշտոնական ապացուցյաց մենք հայուարերել ենք կառն Գ-ի և եփատոսի մամլուքների սուզման կելառնի (նորյան ինքն Մելիք-Մանսուրը) միջև 1285 թվականի մայիսի 7-ին կնքված դաշնագրի հոգվածներից մեկում, որն այլև ոչ մի կասկած չլ թողնում կիլիկյան Հայկական պետության նավատորմիդի գոյության հարցի վերջնական ու դրական իմաստով լուծման մասին: Ահա այդ հոգվածը: «Եթե դաշնագրի կնքող կողմերից մեկին պատկանող մի նավ մյուսի թագավորության ափերում նավարեկության է ենթարկվում, պետք է խնամքով պահել և պահպանել այս նավի միջի գունվածները և դրանք հանձնել այն աղդի պաշտոնատարաներին (ֆրանսերեն թարգմանության մեջ՝ officiers—Ա. Տ.), որի անդամն է վախճանված առևտորականը: Եթե վախճանվածը մեր տիրոջ՝ սուզման Մելիք-Մանսուրի հպատակներիցը կամ մանկալավիկներից (pages) է, նրա ունեցվածքը պետք է հանձնվի մեր տիրոջ՝ սուզման Մելիք-Մանսուրի տեղականերին (lieutenants): Եթե նա կառն թագավորի հպատակներիցն է, նրա ինչը պետք է հանձնվի այս իշխանի առաջակալության մեջ:

13 Մարկո Պոլո, «Պутешествие», перв. И. Т. Минлова», Ленинград, 1940, стр. 9.

ներին, որպեսզի նրանք դրա մասին կարգադրություն անեն՝ համաձայն արդարության և իրավունքի կանոնների»¹⁴:

Այստեղից՝ ուրեմն միանգամայն պարզ կերպով երևում է, որ Հայկական Կիլիկիան ունեցել է իր սեփական նավերը, և այս պետք է հավաստիրեն ենթադրել, այնպիսի քանակով, որ անհրաժեշտ է նկատվել այդ նավերին պատահելիք արկածները, գլխավորացները նավարեկությանց պարագաները խաղաղության դաշնագիր մի առանձին հողվածի նյութ դարձնել: Եվ երբ ի նկատի ենք առնում այն խիստ կարենոր պարագան, որ այս դաշնագիրը կարգել է 1285 թվականին, այսինքն այն ժամանակ, երբ Կիլիկյան Հայկական պետության արտաքին ծովային և տարանցիկ առևտուրը գետ նոր էր թևակոփուռ իր ծաղկման շրջանը, ապա կարելի է հավաստիրեն պնդել, թե երկրի նավերի թիվն ու նրանց նշանակությունը այս առևտուրի մեջ անպայման շատ ավելի բարձրացած պետք է լինի Կիլիկյան առևտուրի լրիվ ծաղկման շրջանին, որը աեղի ունեցավ մինչև ժԴ դարու առաջին կեսի վերջերը:

Միջին դարերի ծովային առևտուրի և սրա փոխադրական միջոցների, այսինքն՝ նավերի անշափ շահավետ օգտագործման մասին եղած տեղեկություններից գիտենք, որ ծովային առևտուրը Հայկական Կիլիկյան շրջանին աշխատում էր մինչև 35 առկոսի շահճի հիմունքներով, որովհետև կատարված առևտուրական գործառնություններից սպասվող շահերն էլ շափազանց բարձր առկոսներով էին կատարվում, որոնք և բաժանվում էին առևտուրական կապիտալիստի և առևտուրական ձանապարհորդությունն իր վրա վերցնող անձի՝ այսպես ասած ձեռնարկողի միջև, սովորաբար առաջինին 2/3-ի և երկրորդին 1/3-ի համեմատությամբ, երբ միայն այս վերջինի ակնկալած շահը հասնում էր ընդհանուր առմամբ 50 սոտկոսի¹⁵:

Այս տվյալները վերաբերում են յուրաքանչական քաղաքների՝ գլխավորապես Վենետիկի և Ճենովայի սեսպուրիկաների, ինչպես նաև Ֆլորենտիայի, Պիզայի և այլ իտալական քաղաքների ծովային առևտուրին՝ Արևելքի, Հետևարար ոչ նվազ նաև Կիլիկյան Հայկական պետության հետ: Խսկ հայունի է սրանց ծովային առևտուրի անհամեմատ

ավելի բարձր շահավետությունը հաշակրությանը անմիջականորեն իրենց մասնակցության էտապներում, երբ ստեղծված տնտեսական աննախարնթաց բարձր կոնյունկտուրայից առավելապես օգտվողները, զնորդիվ իրենց առևտուրական (ու ուղմական) նավատորմիդների, հենց վերոհիշյալ ուսապուրիի կաներն ու քաղաքներն էին, ինչպես նաև՝ սիցիլիացիները, մարսելցիները, մոնպելլեցիները, կատալոնացիները, ֆրանդրացիները, մինչև իսկ հունացիները, անգլիացիները և Հյուսիսային ծովի այլ ժողովուրդները¹⁶:

Հաշակրությանց պատմության այս հեղինակը՝ Սեն Մորիս իր հիշյալ աշխատության մեջ արել է հետևյալ ոչ միայն պատկերավոր, այլև միանգամայն ճիշտ արտահայտությունը, թե «հաշակիրների մոտ շահատենչովինը կուզ էր տվել կրոնական շահախնդրությունը»¹⁷: Ավելի պատկերավոր է արտահայտում ծովային առևտուրի շահավետությունը վենետիկցիների համար մի այլ հեղինակ, այսպես. «Մյուս բոլոր խաչակիր ժողովուրդները Սիրիա հասան գենքերը ձեռքբում: Վենետիկցիները բերին ապրանքներ և այնտեղ հաստատեցին իրենց առևտուրական սենյակները: Այս արշավանքները բոլոր խաչակիր ժողովուրդների համար՝ բոլորը վնաս էր, իսկ վենետիկցիների համար՝ բոլորը վնաս շահ»¹⁸:

Այսպիսով ուրեմն ծովային ճանապարհով խաչակիրներին զենք, պաշարման գործիքներ և սննդեղեն հասցնելը վենետիկցիների, ինչպես և վերոհիշյալ այլ ծովային ժողովուրդների օժանդակության գլխավոր մասն էր կազմում, ինչ որ կատարված էր վերջիններին համար առավել շահավետության պայմաններում: Սրանց նավերով խաչակիրները կարողանում էին մշտական հարաբերություններ պահպանել իրենց մեկնած երկրների հետ, որտեղից նրանք ստանում էին մարդկան և գրամական օգնություն: Նաև՝ Արեմուտիքի և Արևելքի նյութերով տնտեսական լայն գործողություններ կատարող ուստավորների հակա բազմությունների ծովային ճանապարհորդությունները դեպի Պաղեստին

¹⁴ Տե՛ս այս դաշնագիրը արարերեն բնագրով և քրանսերեն թարգմանությամբ Վ. Լանգուայի հիշյալ

¹⁵ Տե՛ս ադ. Schnaube, «Handelsgeschichte der romanischen Völker des Mittelmeergebietes zu Ende der Kreuzzüge», München und Berlin, 1905, էջ 120:

¹⁶ Տե՛ս նաև Saint Maurice, «Die Geschichte der Kreuzzüge, nach dem Französischen von I. Heusinger, Dresden, Bd. I, էջ 319.

¹⁷ Նույն տեղում, էջ 84:

¹⁸ G. B. Depping «Histoire du commerce entre le Levant et l'Europe depuis les Croisades jusqu'à la fondation des colonies d'Amérique», Paris, vol. I, էջ 152:— Տե՛ս նաև M. Armingaud, «Venise et le Bas Empire», էջ 366:

և վերադարձ, մեծ եկամուտներ էին ապահովում. Հիշյալ ծովային ժողովուրդներին ու քաղաքներին՝ «Նավային փոխազդությունների այս հարատև աճը և շահավետությունը իր կողմից նոր զարկ էր տալին այս ռեսպոբլիկաների (Ճենովայի և Վենետիկի—Ս. Տ.) նավաշինարարությանը», — ասում է Լանգլուան¹⁹:

Ծովային առևտուրի և ծովային փոխադրական միջոցների անշափ շահավետության այս պայմաններում ահա Միջերկրականի արևելյան ավագանի երկրներում կատարվում է մի խոչը պատմական դեպք, երբ սովորան Սալահեդինի՝ Միջերկրական ծովի արևելյան ափերին հաստատված խաչակիր պետությունների դեմ 1187 թվականին (Աքրայի գրավումով) ձեռք բերած ռազմական արագ և արմատական հաջողությունների հետևանքով՝ Արևմուտքի առևտուրական ժողովուրդը մեծ մասամբ կորցնում էն իրենց առևտուրական շուկաներն այդ խաչակիր պետու-

19 Վ. Լանգլուայի հիշված աշխատությունը, էջ 90.

թյուններում, իսկ Հայկական Կիլիկիայի կեռն թագավորը, օգտվելով այս հանգամանքից, իր երկրի դաները լայնորեն բաց է անուած. Արևմուտքի այդ առևտուրական ժողովուրդների, առաջին Ներթին Ճենովացիների և վենետիկցիների առաջ, տալով սրանց բազմաթիվ առևտուրական արտոնություններ, որոնց հիման վրա նրանք իրենց առևտուրը Կիլիկյան Հայկական պետության հետ մեծապես զարգացնում են երկու դարեր շարունակ:

Այս բոլոր ասվածների լուսի տակ ավելի հասկանալի է դատնում Կիլիկյան Հայկական պետության սեփական նավատորմիդի առաջնահերթ նշանակությունը վերոհիշյալ ծովային ժողովուրդների հետ ոնեցած իր առևտուրում, իսկ կեռն Գ. ի վերոհիշյալ դաշնադրում Կիլիկյան նավերի հիշատակությունը վերջնականացնելու հաւատառում է մեր այս հոդվածի հիմքում դրված հարցը՝ Կիլիկյան Հայկական պետության նավատորմիդի գոյության մասին:



ՄՈԶԱԻԿ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄՈԶԱԻԿԱՆԵՐԸ

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն դառնալուց հետո բազմաթիվ հայութափորներ են այցելել Երուսաղեմ: Այստեղ կառուցվել են ավելի քան 72 հայկական վանքեր³³, որոնցում և Հայտնաբերվել են հին մոզաիկաներ, գլխավորապես մոզաիկ հատակներ: Երուսաղեմում վերջին տարիներին կատարված Հնագիտական պեղումները ցուց են տվել, որ այստեղ գտնված քրիստոնեական եկեղեցիները մեծ մասամբ կառուցված են եղել հիթանոսական մեջյանների տեղում, կամ այդ մեջյանները փոխարկված են Քրիստոնեական եկեղեցու՝ հիթանոսական կրոնն արմատախիլ անելու նպատակով:

Երուսաղեմի մոզաիկաների մասին առաջին անգամ գրել է Ռուփեն Սամվելյանը³⁴, որից հետո այդ մոզաիկաները քննության են առնվել բազմաթիվ բանասերների կողմից:

Մինչև այժմ Երուսաղեմում երևան է հանվել Հայկական հինգ մոզաիկա: Այդ մոզաիկ նկարներից առաջին երեքը գտնվել են 1868 թվականին Զիթենյաց կամ Համբարձման լեռան վրա, երբ ուսաները արաբներից գնել էին մի հողամաս, որի վրա ուղղում էին նոր վանք կառուցել: Չորրորդ մոզաիկան գտնվեց 1893 թվականին, երբ նոր կառուցվող մատուի հիմքերն էին փորվում: Հինգերորդ մոզաիկ հատակը հայտնաբերվելց Դամասկոսի դռան մոտ 1894 թվականի հունիսի 25-ին: Սա ամենափառահեղ ու ամենախոշոր մոզաիկ

հատակն էր, որի պատկանելիությունը սկզբում վեճի առարկա դարձավ հույների ու լատինների միջև, սակայն նկարի ճակատին նշանագրած Մեսրոպյան տառերով՝ արձանագրությունը լուցքը վեճերը: Դամասկոսի դռան մոզաիկ հատակի ներքեւ հայտնաբերվել են երեք դամբարանն, իսկ Զիթենյաց լեռան մոզաիկ հատակի տակ՝ 16 քարաղամբարանն, որոնցից մի քանիսի վրա կան հայտառ հայնում արձանագրություններ:

Ե՞րբ են ստեղծագործվել Երուսաղեմի մոզաիկաները, ո՞ր զարաշրջանի գործեր են դրանք և ի՞նչ բովանդակություն ունեն:

Զիթենյաց լեռան վրա երևան հանված մոզաիկ հատակները կազմում են Ս. Հովհաննես Կարապետի վանքի կալվածի մասը, որին հայերը տիրացել են 5—6-րդ դարերի ընթացքում: Սա պատմական փաստ է: Իսկ այդ վանքը իր գոյությունը պահպանել է մինչև 12-րդ դարը³⁵, որից հետո քարուքանդ է եղել: Այս վերաբերում էլ գտնվել են մոզաիկ հատակները, որոնք եղել են եկեղեցու գալթի սալարից:

Երուսաղեմի Զիթենյաց լեռան վրա գտնվել են չորս մոզաիկ հատակներ, որոնք ունեն հայերեն երկաթագիր արձանագրություններ:

Առաջին մոզաիկ հատակի վրա գրված է Հետեկյալը. «Բարեխասաւ ունելով առ Ա. Ջ. Առաքելյանի եւ զերանելի հարս ես Վաղան արարի փառ բողոքեան մեղաց զիշատակարան զայս»:

Երկրորդի վրա գրված է. «Այս զիր Երանելայ Շուշանկայ մաւրն Արտաւանայ Հոռի ԺԱ»:

35 Մկրտիչ Եպիսկոպոս Աղավնումի, «Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Ս. Երկրին մեջ», Երուսաղեմ, 1931, էջ 161:

* Եարեհակլած ամսագրի 1957 թվականի № Թ-Գ-ից, Դ-ից և Ե-ից:

33 «Ճուցակ Անաստասայ վարդապետի վասն վանրէից հայոց որ ի Ա. Քաղաքն Երուսաղեմ», Վեհապետիկ, 1896 թ., էջ 9:

34 «Արևելք» օրաթերթ, Կոստանդնուպոլիս, 1893 թ. (№ 2702) և 1894 թ. (№ 3132):

Երրորդի վրա գրված է. «Վասն աղաւրից եւ փրկութեան Թեւայ, Արասու եւ մուրկան»:

Չորրորդի վրա գրված է. «Այս յիշատակարան Տն. Յակովբայ որ եղեւ ի ձեռն խընդրելոյ»:

Երրուսաղեմի Զիթենյաց լեռան երկրորդ մոզակի հատակի մասին արժեքավոր տեղեկովիցուն է տալիս հայ ականավոր մանկավարժ և մանկական գորող Ղազարոս Աղայանը, որ այցելել է Երրուսաղեմ։ Նա գրում է հետևյալը.

«...Են մի հրաշալի արձանագրություն տեսա Երրուսաղեմ Զիթենյաց լեռան վրա։ Այստեղ ոռաաց եկեղեցու հիմքը փորելիս մի քանի տարի առաջ գետնի տակից երևացել է մի մոզակիազարդ գերեզման՝ անհղդ և անարտա, վրան գրված է Մեսրոպյան տառերով՝ «Այս գիր է Շուշանկայ մարն Արտաւանայ Հոտի Ժի»։ Սրա վրա ոռուսները մատու են շինել և պահպանի հանգուցյալ պատրիարք եսային էլ նույն գերեզմանի պատկերը իսկականի մեծությամբ և զարդարանքով նկարի է տվել և կախել պատրիարքարանում։ Նույն գերեզմանից մի քանի քայլ հեռու դեպի արեելը դարձյալ գետնի տակ երևացել են երկու կարգ գերեզմաններ հայ իշխանների ու տիկինների։ Սրանցից երկուսն են և նշանավոր և զարմանալի։ Մեկի վրա գրված է եղել Շուշանիկ, իսկ մյուսին՝ Զոշիկ»³⁶։

Ե՞րբ են կերտվել Զիթենյաց լեռան վրա դատնված մոզակի հատակները, որոնց ոչ մեկի վրա չի գրվել տարեթիվը։

Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունին, որ գրել է Երրուսաղեմի վանքերի պատմությունը, Զիթենյաց լեռան վրա գտնված վերոհիշյալ չորս մոզակի հատակների կերտման դարաշրջանի մասին ճշգրիտ տեղեկություն տարու համար վկայաբերում է Պաղեստինի հայտնի հնագետ Գլերմոնտ-Գանոյի աշխատությունը³⁷, ըստ որի այդ մոզակիաններից երկուսի վրա եղած արձանագրությունները չեն համապատասխանում մոզակիայի ամբողջական կառուցվածքին և գույներին, իսկ երկուսը ավելի ուշ շրջանի ստեղծագործություններ են։ Ինչ վերաբերում է մոզակիանների արձանագրության մեջ հիշատակված անուններին, ապա Գլերմոնտ-Գանոն ենթադրում է, որ Արտավանը մի պարսկահայ կուսակալ և պրուպես է եղել Հուստինիանոսի կայսրության օրոք։

36 Դ. Աղայան, «Երկեր», Համ, 4-րդ, Երևան, 1950 թ., էջ 360—361։

37 Clermont Ganneau, «Archaeological researches in Palestine», 1874, էջ 329—337։

Այլ ենթադրություն է անում բանասեր Հ. Քյուրդյանը³⁸, որ կարծում է, թե Վաղան անոնքը պետք է կարդալ Վահան, և տառի փոխարեն սխալմամբ դ գրվելու պատճառով։ Իսկ եթե Վահան լինի, ապա Պաղեստինի պատմագիր Պրոկոպիոսի տեղեկությունը է անում բանասերի համաձայն, Արտավան և Վահան Արշակունի եղայրը լին գրաւանդիոն և մեծ ծառալություն են մատուցել բյուզանդական պետության։ «Արտավանը դարձել էր դուքս, իսկ Վահանը որպես զորագետ զոհվել է Հուստինիանոսի կայսրության համար մղած պատերազմում³⁹։ Ենթադրվում է, որ այդ հայ զորագետների մայրը՝ Շուշանիկը Երրուսաղեմության է եկել և մահացել այստեղ, թաղվել է Ս. Կարապետի եկեղեցու գավթում և Արտավանի ձեռքով նրա գերեզմանի վրա կերտվել է մոզակիա։ Արտավանը իր եղբոր՝ Վահանի անունն անմահացնելու համար էլ մոզակիա է շինել ավել, ինչպես նաև «Եսայի և այլ հարց համանման շիրիմներ»։ Անվանի Միսիթարյան Հ. Հակոբոս Տաշյանը մուգիկանների վրա եղած տառաձեկերից եղայրակացնում է, որ այդ տառերը հիմնականում «ոչ լիովին գլխագիր և ոչ այ զուտ ամիշին» են։ Գրերը քիչ շատ զլխագիր բուրրաձեռքությունը կցուցնեն, բայց նաև միջնույն ձեռքությունները շնորհած են առաջնորդները, շուրբեկոսի կերպարաններ, ուղղաձև անդամներ, գրերն ու մանր (այսպիս և ալլն) ավելի միջին են, և ընդհանրապես ամբողջը միջնույն տպագրություն կընեի... Եթե շնորհաբերի, և դարու արձանագրությամբ գիրը համարելու ենք յուր ամեն առանձնահատկությամբը ու անսովոր ձևովն իրեն այն գիրն, որ գարերով գործածված է արձանագրությանց մեջ, եթե ոչ բացառապես ամեն տեղ, գոյնեւ հէականս նույնությամբ բազմաթիվ հիշատակարանաց մեջ»⁴⁰։

Հ. Տաշյանը, իր աշխատության մեջ մատնանշելով 7-րդ դարի Ներսեսի, Անիի, Լոռու Հին եկեղեցական արձանագրություն-հիշատակարանների երկաթագիր տառաձեկերը, եղակացնում է, որ Երրուսաղեմի մոզակիանները պատրաստված կլինեն 551 թվականից առաջ։

Հայ գրչության ու մանրանկարչության մասնագետներից մեկը՝ Գարեգին կաթողիկոս Հովհաննեսի Զոշիկյանը Զիթենյաց լեռան վրա

38 «Բաղմալիկ», Վենետիկ, 1934 թ., № 5—6, էջ 198։

39 Հ. Մ. Զամշյան, «Պատմութիւն Հայոց», Համ, Բ, էջ 250—255 և 517—520։

40 Հ. Հ. Տաշյան, «Ակնարկ մը հայ հնագիտության վրա», Վենետիկ, 1898 թ., էջ 136։

դանված մողախկ հատակը 6—7 դարերի դորձ
է Համարում⁽¹⁾:

Այսպիսով, տիրապետող կարծիքն այն է եղել, որ Երուսաղեմի մոլարկաները ստեղծագործելի են Հռոմատինիանոս Ա-ի ժամանակաշրջանում, 527—565 թվականներին կամ ավելի ուշ:

Մենք այդ կարծիքին չենք, որովհետև երու-
սաղեմում կատարված վերջին տարիների
հասպիտական պեղումները ցույց են տալիս,
որ մողախկ հատակ ունեցող տեղամասերում
հնում եղել են հիթանոսական տաճարներ
կամ մեջյաններ և հավանաբար այդ մեջ-
յաններն ունեցել են մողախկ հատակներ:
Ամենայն հավանականությամբ, երուսաղե-
մի մողախկաները հիթանոս հայ արվեստա-
գիտունների առեղծագործություններ են Տիգրան
Մեծի ժամանակներից սկսած, երբ հայերը
լավված են եղել հոռմեական պետության
առաջ նահանգների հետ, որոնք հիտափայում
անդիսացան քրիստոնեության օջախներ:
Երշակումների կործանումից առաջ հայերը
առշղթ զեր են խաղացել երուսաղեմի սրբա-
կան վայրերում: Մկրտիչ եպիսկոպոս Աղավ-
ունին ևս այն կարծիքն է հայության, որ
Զիթենյաց լեռան հայոց Ս. Հովհաննես Կա-
պետի վանքի մողախկաները հայունի է թե
եռավոր թվականն մը կհասնին: Այդ մողախ-
ի վարպետներն ալ միենույն ոգլով շարժված
ն՝ հիթանոսականը խառնելով քրիստոնեա-
նին հետ, ինչպես ցույց կուտան անոնց
առանձինաբարված մանրանկարները⁴²: Այդ մո-
ղախկաների հյուսկենանկար գտաները հայ-
ական են, որովհետև այդպիսիք հանդիպում
ն՝ հայկական խաչքարերի և եկեղեցական
արդարագույնակների վրա:

1934 թվականին երրուսաղեմում Հայտնաւելվել էն մի քանի մողաբիլ Հատակներ, որոնք ունեն հումարեն արձանագրություններ, սակայն վերջիններս ավելի ուշ դարձանի գործեր էն և չեն համապատասխառում մողաբիլայի կերտման ժամանակաշրջանին: Անգամ Բեթղեհեմի եկեղեցում վերերս գտնված մողաբիլ հատակը, որը վերափում է Կոստանդինյան դարաշրջանին, աստորեն հեթանոսական շրջանում է ատրաստված: Պատմականորեն ապացուցած է, որ Բեթղեհեմի եկեղեցին կառուցված եղել է հեթանոսական մեջյանի վրա: Բեթղեհեմի եկեղեցու այսմաղարդ կենտրոնի մո-

հայիկ հատակը, որն իրենից ներկայացնում է որթատունկեր և խաղողի ողկույզներ, եղերված իրար միջև ընդելուգված ժապավեններով, շատ նման է Սլովակարդի մեջ մողափի Հատակի կողազարդերին։ Սա խսկական արվեստի փորձ է, սակայն ավելի վաղ շրջանի ստեղծագործություն, եթե այն համեմատենք եկեղեցու փոքր ավելի հնուու գտնված մողափի հատակի հետ, որ իրենից ներկայացնում է երկրաչափական ձևեր, կենտրոնում ունենալով ծաղկաձև զարդանկար։ Այն նմանությունը, որ կա Խստրի Պարինց քաղաքի և Թիֆլուսի եմի եկեղեցու մողափի հատակների միջև, ցուց է տալիս որ երուազիմի թի՛ հունական, թի՛ հայկական և թի՛ գրիգիան մողափիկաները քրիստոնեական գարաշրջանի պրեծեր չեն հիմնականում։ Սակայն աս ամեննեին չի նշանակում հրաժարվել այդ բողակաները ազգային պատկանելիությունից։ Հայ եկեղեցում գտնված մողափի հատակը վերագրվում է Հայ արվեստին, հիմք ունդունելով մողափիկաների վրա եղած արձակագրության լեզուն։ «ՍՄիռնա ամսագրի⁴³ տված եկեղեցությունները նորահայտ մողափիկաների բասին նոր լույս են սփռում երուաղիմի հայկական մողափիկաների հնության վերաբերյալ։

Երմանակինում Հայունաբերված խոշոր մո-
պիկաններից երկրորդը Դամասկոսի գոռան
Ռողափիկ Հատակին է, որ գտնվել է 1894 թվա-
անին և այժմ պատկանում է Հայոց Պատ-
իհարքարանին: Այս հոյակապ մողափական
սպույն գրավից արվեստագիտների ուշա-
րությունը:

Երրուսաղեմում Դամասկոսի գուան մոտ
տննված մողաբիկ հատակն ունի 7,15 մետր
րիքարություն և 4,40 մետր լայնություն։ Այդ
ողաբիկ հատակն ունի 0,26 մետր լայնու-
թամբ զամբյուղաձև հյուսված քառակուսի
զրապարդ։ Մողաբիկայի ճակատի վերևը,
որինելյան կողմը կա կոնաձև մողաբիկաներով
ի խորշ, որ հատակից երկրորդ հատակի
նացորդի մի անկյունն է և ունի 0,07 մետր
րիքարություն և 0,75 մետր լայնություն։
Ողաբիկ հատակի ճակատի վրա գտնվող եր-
ու տող հիշատակարանը առնված է 1,07
մետր երկարության և 0,23 մետր լայնության
ուսանձին շրջանակի մեջ և կարդացվում է
եսրոպյան տառերով գրված հետևյալ ար-
անագրությունը երկու առողի վրա։

Ղասն յիշատակի և փրկութեան
մենայն հայոց զորոց զանուանս Տէր զիտէ»:

⁴¹ Գարեգին վրդ. Հովսեփյան, «Թրչության արվեստը հին հայոց մեջ», 1913 թ., Վաղարշապատ, էջ 5:

⁴² Մկրտիչ եպիսկոպոսի, «Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Ս. Երկրին մեջ», Երուսաղման, 1931 թ., էջ 163:

⁴³ «Սիսն», Երուաղեմ, 1934 թ., էջ 330—342.

(«Հիշատակին և փրկության համար բոլոր հայերի, որոնց անունները Տերը գիտի»): Դամասկոսի դռան այս ամբողջ մոզափիկ հատակը բաց գեղնագույն է, սակայն կիրառված են նաև ուս, կարմիր, կապույտ, նարնջի և մոխրի գույնները:

Այս մոզափիկ հատակի շինանյութը կազմել են բնական գույնի քարեր: Մյստեղ ապակու կիրառումը շնչք գտնում, որն ապացույց է մոզափիկայի ավելի խորը հնության: Մոզափիկ հատակը կառուցված է «օպուս վերմիգուլատում» տեխնիկայով, որտեղ իրեն շինանյութ է ծառայել բնական գույնի քարը: Մոզափիկ հատակի երկանյությամբ իրար կողքի շարված են 527 և լայնությամբ՝ 323 խորանարդիկներ, որով ամրող քառակուսի հատակը, մի կողմ թողնելով կոնաձև մասը, բովանդակում է $527 \times 323 = 170\,221$ զանապան բնական գույներով քարե խորանարդիկները: Դատելով այնքան մանր խճաքարերի կառուցվածքից, պետք է ենթադրել, որ Դամասկոսի դռան մոզափիկ հատակը «օպուս վերմիգուլատում» տեխնիկայով կառուցված է վերջին շրջանում, երբ այդ տեխնիկան խորշոր չափով առաջ էր գնացել և հնարավորություն ուներ նախապես գծված նկարի ամբողջ մանրամասնությունները տալ՝ արվեստի բոլոր պահանջների համաձայն: Ինչարկե, մոզափիկ հատակի կառուցման վրա ներդրված խորանարդիկների ճիշտ թիվը դժվար է սահմանել, դա ավելի շուտ միշին թիվ է, որովհետև խորանարդիկները համաշափ ծավալ չունեն:

Դամասկոսի դռան մոզափիկ հատակը, հավանաբար, հեթանոսական շրջանի ստեղծագործություն է: Անտիկ մոզափիկ նկարիչը ստեղծագործել է ազատորեն, անկաշկանդ, օգուագործելով բուսական աշխարհը:

Երրուսաղեմի այս հոյակապ հատականկարը մի որթատունկ է, որ դուրս է գալիս մի գեղեցիկ ծաղկամանից, տարածելով իր ճյուղերն ու սոստերը: Հատականկարն ունի քառասուներք օղակ, որոնք կազմում են հորիզոնական ձևով ինը շարք, որից յոթը հինգական և երկուա՞շը շրոսական օղակ, կամ ուղղահայց կարգով հինգ շարք, երկու կողմի շորս շարքերն իննական և միշին՝ յոթ օղակ:

Ուղղահայց միշին շարքի օղականք ճյուղերում նկարված են, վերևից սկսելով՝¹⁾ 1) մի գույգ աղավնի, դեմ-դեմի թառած որթատունկի մի սոստի վրա, 2) մի զամբյուղ լցված կարմիր-գեղնավում խնձորներով, 3) մի թութակ՝ վանդակում, 4) մի արծիվ՝ կիսով թևաբաց, 5) դատարկ, նրբագերտ մի սափոր, 6) գլխահակ մի բադ, 7) նորից մի զամբյուղ կարմիր խնձորներով լի: Մյուս 36 օղակների

մեջ էլ նկարված են զանազան դիրքով ցամաքային թոշուններ, ինչպես սիրամարդ, հնդկահավ, ջայլամ, կարապ, արագիլ, սագ, բադ, փասյան, ուրուր, աքաղաղ, մարի, սարյակ, աղավնի, տարարկ, կաշաղակ, ագռավի ալլի: Որթատունկի սոստերից կախված են 91 գույնգույն ողկույզներ, միջանկյալ տերևներով:

Դամասկոսի դռան մոզափիկ հատակի հետ հայտնաբերվեց նաև յոթ կտորի բաժանված գեղաքանդակ մարմարյա մի խաչքար, որի շարդված բեկորները իրար մոտ բերելով հնարավոր եղավ կարդալ հետեւյալ արձանագրությունը.

«Յիշեա՛ զՊետրոս որ արար և Յոհան որ ետ առնել զնաշ զայս»:

Խաչի քանդակն ունի հայկական ոճ, չորս միջանկյունները՝ երկու փոքր խաչ և երկու աստղ:

Մեր ձեռքը հասած և լավ պահպանված երրուսաղեմի՝ Դամասկոսի դռան մոզափիկ հատակը արվեստի զմայլելի գործ է: Այս արվեստի մեջ տիբապետող՝ առաջին հերթին թոշնանկարչությունը և ապա ծաղկանկարչությունը, մի երեսությունը, որ մենք տեսնում ենք հին հայկական քանդակագործության մեջ, առավել ևս գորգարվեստում:

Հայ նշանավոր ճարտարապետ Թ. Թորամանյանը խոսելով Բագրատունյաց շրջանի վերածնության մասին, շափականց ուշագրագործության մեջ, առավել ևս գորգարվեստում:

«... Թողուններ և կենդանիներ քանդակելու մեջ,— գրում է նա, — հայերը ուշագրագործադիմություն ըրեր էին 5-րդ և 7-րդ դարերու մեջ, սակայն Բագրատունի շրջանի վերածնությունը միանգամայն մոռացության տված էր նախնյաց մշակած այս ճյուղը»¹⁴⁾.

Դամասկոսի դռան մոզափիկ հատակի կուպողիցիան, նրա զարդարվեստը շնչ կապված քրիստոնեական ուսմունքի հասկացողության հետ, որովհետև կերպարվեստում այդպիսի «կենաց ծառեր»-ի առկայությունը մենք տեսնում ենք քրիստոնեությունից շատ առաջ, Կարմիր բլուրի պեղումներով հայտնաբերված ուրարտական սաղավարտների վրա կամ նույնատեսակ զարդանկարներ ծրուսաղեմի գեղարվեստական սափորի այս կենաց ծառու-ի կոմպոզիցիոն ձևերին ու զարդանկարներին մենք հանդիպում ենք ոչ միայն հայկական միջնադարյան մանրանկարչության մեջ, այլև հայկական գորգերի մեջ հատկապես Զանգեզուրի, Մեղրու, Ղարաբաղի և այլ վայրերում գործված գորգերում:

44. Թ. Թորամանյան, «Անի քաղաք», թե ամրոց, էջ 124:

Աւշագրավ է այդ գեղարվեստական սափուրի ուսուցիչ փորը, որ բաղկացած է յոթը շերտից: Դատելով մեր ձևաբի տակ հղած մանրանկարից, որը հարատարակված է Փարփռում և հանդիսանում է իսկականի վերարտադրությունը, շերտերի գծերը գեպի վերը վերջանում են կլոր գլխիկներով, որոնք մանրագիմանկարի տպավորություն են թաղնում: Գեղեցիկ են սափորի երկու կանթերը, որոնք միանում են սափորի լայնարաց ալիքաձև բերանին: Եզրապարդ ունեցող կանթերը հայերեն շուրջ տված Տ գլխատափ ձև ունեն՝ ներքում, միացման տեղում եռատերև ծաղկի զարդանկարով, իսկ վերևում՝ սափորի միացման տեղում՝ մուգ-կարմիր գույնի կեռ լեզվակներով, որոնց վրա նկարված են մեկական թոշնագույներ: Սափորն ունի նորը, բարակ վլուկ՝ մեջտեղ հաստ ժանյակով փաթաթված և ուսուցիչ փորի ու լայնարաց ալիքաձև բերանի մեջտեղում ունեցած իր տիստով՝ թողնում է հաճելի տպավորություն: Զարմանալի նմանություն կա երուսաղեմի սափորի կանթերի և կուտինահաջ վարպետների կողմից Ադրիանոպոլսի Մուրադիա մզկիթի որմնադրվագի (ԺԶ դար) սափորի կանթերի միջև նրկուսն էլ հայերեն մեծատառ Տ տառի գծածեկեր ունեն: Սափորի երկու կողմում նկարված են Հովհարածեն, փարթամ, պոշավոր սիրամարգեր, որոնք դեմքիմաց կանգնած են կլոր ճյուղերի վրա:

Այս մոզաիկ հատականկարում հիմնականը վեց օղակներն են, որոնցից յուրաքանչյուրն իր աջ ու ձախ կողմերում ունի հարակից երկու օղակ՝ բարակ եղրակապատճեն կարկից օղակներում ևս նկարված են զանազան տեսակի ընտանի ու վայրի թոշուներ: Հիմնական օղակների եղրակապերն ամելի հաստ են և որոշակի տարրերով են երկրորդական օղակներից թե՛ եղրակապերի և թե՛ համեսմատական մեծությամբ: Երկրորդական ճյուղ-օղակները փակված չեն, այս նկարված են կիսափակ, իսկ օղակների վերջալորությունից գորեթե ամենուրեք կախված են ողկույզներ:

Այս հոյակապ հատականկարում բոլոր թոշուները պատկերված են իրենց կենդանի դիրքով ու կեցվածքով: Հայկական գորգանկարների նման, ինչպես մանրանկարչության մեջ է, զարդամոտիվները կրկնվում են դեմք-դիմաց: Սափորի երկու կողմերում նկարված սիրամարգերը, վեց հիմնական օղակներում եղած երկու սարյակները կրկնված են միատեսակ ձևով ու դիրքով: Նույնը կարելի է ասել և խաղողի ողկույզների նկատմամբ:

Երուսաղեմի մոզաիկաների նկարագրությունը բավարար հիմք չի տալիս եղրակաց-

նելու, թե այդ մոզաիկաները մեծ մասամբ բրիստունեական շրջանի ստեղծագործություններ են, բրիստունեական բնույթի գործեր: Այդ մոզաիկաների արձանագրությունները կամ ավելի ուշ շրջանի ստեղծագործություններ են, կամ կցովի հավելվածներ: Կարելի է հնագործել, որ մոզաիկ արվեստը Պալեստինում եղանական սեղմուտար արվեստ է, այլերկրյա մոզաիկ նկարիչների ստեղծագործություն: Վերջին տարիներս Պալեստինում կատարված հնագիտական պեղումները ցույց ավին, որ Բեյթ-Ալֆայում հայտնաբերված հրեական ժողովարանի մոզաիկ հատակների նկարիչները հրեա չեն եղել, այլ հույն կամ բյուզանդական կարիչների: Բեյթ-Ալֆայի մոզաիկաների եղրագոտիները շատ նման են Զիթենյաց լեռան վրա գտնված հայկական երկրորդ մոզաիկ հատակի եղրագոտուն: Հրեական մի մոզաիկի վրա գտնված մոզաիկ նկարչի անունն անգամ՝ Մարիանոս, ցույց է տալիս, որ նկարիչը այլերկրա ծագում ունի: Հավանաբար, ոտ ևս հայ նկարչի զործ է: 1928 թվականին Կոստանդնուպոլսի Զիթերիթ թաղի մեջ գտնված մի քարի եղրագարդերը և ճառագալթածեն աստղը նման են Զիթենյաց լեռան մոզաիկաներին: Հազար տարվա հնություն ունեցող Կոստանդնուպոլսի այդ տապանաքարի աստղը և կիսաօղակները հիշեցնում են Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու և Զիթենյաց լեռան մոզաիկ հատակի օղակները, որոնց մեջ նկարված են թոշուներ ու կենդանիներ:

Երուսաղեմի մոզաիկաների նկարագրությունը տալուց հետո, կարող ենք հանդի հետևյալ հավանական եղրագացության:

1) Զիթենյաց լեռան վրա և Դամասկոսի դռան մոտ եղած մոզաիկ նկարները հավանորեն շատ հին և թերևս հիթանոսական շրջանի ստեղծագործություններ են: Այդ մոզաիկաների վրա եղած արձանագրությունները կամ մակագրությունները ավելի ուշ դարաշրջանի համելումներ են, հետևաբար շեն համապատասխանում մոզաիկաների պատրաստման դարաշրջանին: Մոզաիկայի վերադիր արձանագրությունները գեռևս վերջնական ապացուց չեն այն բանի, որ նրուսաղեմի մոզաիկաները բրիստունեական դարաշրջանի ու բրիստունեական բովանդակությամբ ստեղծագործություններ են:

2) Երուսաղեմի մոզաիկաները իրենց կառուցման տեխնիկայով համապատասխանում են ուսուա վերմիգուպատում»-ին, որ ավելի տարածված էր հելլենական և հոռմեական դարաշրջանում: Երուսաղեմի նրբակերտ մոզաիկաները, որոնք անպայման նշանավոր նկարիչների գործեր են, կարող էին կերպվել

միայն այդ տեխնիկայի զարգացման դեպքում: Մողարկայի այդ տեխնիկան միայն հնարավորություն կտար բացառիկ նույրը գեղեցկությամբ կոմպոզիցիոն նկարներ ստեղծագործել, բարձր տեխնիկական ու նկարչական վարպետությամբ: Խսկ այդպիսի գործեր ստեղծագործվել են մեր թվարկությունից առաջ Յ—1-ին դարերում:

3) Երուազեմի մողարիկ պատկերների դաշտերը և զարդամութիվները իրենց ու-

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈԶԱՒԿԱՆ

Բյուզանդիայի մայրաքաղաքը հայտնի է իր մողարկաներով: Պատմական Հայաստանում հայտնաբերված մողարկաները որոշակի նմանություն ունեն երանե տարածեմի և Կոստանդնուպոլսի մողարկաներին: Բանասեր Կ. Հ. Բասմաջյանն իր աշխատության մեջ, նշելով Կոստանդնուպոլսում հայտնաբերված Գաղիկ Արծրունու քանդակի նման մի մողարկա, գոռամ:

«... Այս տեսակի արձաններ ու պատկերներ հաճախ կտեսնվեին ոչ միայն հայկական հին եկեղեցիներուն վրա, այլև ընդհանուրապես բյուզանդական եկեղեցիներու շատերուն վրա. օրինակի համար, Կոստանդնուպոլսում մեջ էտիրնե Գափուի մոտ իր բնությամբ ծանոթ Բահրեի մզկիթին, — որ նախկին Խորանում հունական վանքին քառասուն վկայից եկեղեցին էր, — խճանկար (մողարիկ) բազմաթիվ պատկերներն մին կներկայացնե ճիշտ վերոհիշյալ տեսարանը»⁴⁵:

Կ. Հ. Բասմաջյանը եզրակացնում է, որ հայ մողարիկ նկարիչները Կոստանդնուպոլսում վերոհիշյալ բյուզանդական եկեղեցու վրա աշխատելիս, Աղթամարի քանդակների տպավորության տակ օրինակած լինեն իրենց ցանկալի հայրենիքի հուշարձանի պատկերները:

Ուշագրավ են Կոստանդնուպոլսի Այա-Սոֆիա հռչակավոր մայր եկեղեցում (այժմ մըրկիթ) վերջին տարիներս երևան հանված երեք մողարկաները, որոնցից մեկը որոշակի նմանություն ունի մեր Ս. Գրիգոր Լուսավորչին: Այս մողարկայի ներքու գրված է Հայրենիքի հուշարձանի պատկերները:

Այդ մողարկայում Գրիգոր Լուսավորիչը նկարված է հունական հայրապետական զգեստով՝ հունական Ս. Դիոնիսիոսի հայրապետական պատարագորի խաչազարդ զգեստով (երկու խաչը զգեստի վերևում, ու-

րույն ոճով ու ինքնատիպությամբ հետագայում հանդիսան են զալիս նաև հայկական մանրանկարչության մեջ և հնագույն խաչքարերի վրա, որն ապացուց է, թե երուազեղմի մողարկաները հայ հին նկարիչների գործեր են, նկարիչներ, որոնք հնագույն դարերում աշխատել ու ստեղծագործել են ոչ միայն երուացեմում, այլև նդիպտոսում, Բյուզանդիայում, Պարսկաստանում և Փոքր Ասիայի զանազան քաղաքներում:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍ ՈՒՄ

Անրի մոտ, մեկը ծնկներից ներքեւ: Գրիգոր Լուսավորիչը և Դիոնիսիոս հայրապետը նկարված են նոյն դիրքով, նրանք իրենց ձեռքում բռնել են Ս. Ավետարանը, որի կողքի զարդերն են միայն տարրեր, ինչպես նաև խաչակնքող ձեռքի ձևը: Գրիգոր Լուսավորիչը լայն շարժումով օրհնում է ծողովրդին, իսկ Ս. Դիոնիսիոս հայրապետը ինքն իր վրա է խաչակնքում: Երկուամ դիմանկարներն էլ տարրեր են, մեկը խորապես հունական է, մյուսը՝ բնորոշ հայկական: Արդյոք Ս. Սոֆիայի տաճարի այս մողարիկ նկարը Ասուղիկի (էջ 85) նշած «գուռն հայոց»-ը չէ, թերևս կապ ունի «Գրիգոր Հայաստանի» մողարիկայի հին:

Կոստանդնուպոլսի Այա-Սոֆիա մայր եկեղեցում հայտնաբերված Գրիգոր Լուսավորչի մողարիկ որմանկարի առնությամբ շատ հետաքրքրական է Լուսավորչի պատկերի բնութագրումը: Մեր պատմագիրները իրենց գրվածքներում շնորհանդես կատարում են նկարագրել Գրիգոր Լուսավորչի արտաքին տեսքը, հետևարար հիմքը շնորհանդես կատարում են նկարիչներին ըստ այնու կերտելու նրա կերպարը: Որքան մեզ հայտնի է, Լուսավորչի պատկերները 14-րդ դարից հին շնորհանդես են նկարված են եպիսկոպոսական թագով, հայրապետական զգեստով:

Կոստանդնուպոլսի Այա-Սոֆիա եկեղեցում վերջին տարիներս հայտնաբերված Գրիգոր Լուսավորչի նորահայտ մողարիկ նկարը նոր լույս է սփռում հայոց մեջ Լուսավորչի կերպարի վրա: Խնչպես հայտնի է, 1453 թվականին Մահմեդ Բ-ը նվաճեց հին Բյուզանդիոնը և տիրուն էլ նկարված են եպիսկոպոսական թագով, հայրապետական զգեստով:

⁴⁵ Կ. Հ. Բասմաջյան, «Հայոց հին գեղարվեստի վարպետները», Փարփա, 1926, էջ 23:

այն 1932 թվականին հայտնաբերվեցին։ Այդ մողախկ պատկերները բյուզանդական արվեստի հոյակապ գործեր են։ Այս-Սոփիայի մայր եկեղեցում հայտնաբերված երեք մողախկաներից մեկում պատկերված է Քրիստոսը իր գահի վրա, աջ կողմը՝ լուսապսակի մեջ կերտված է Տիրամոր դիմանկարը, ձախ կողմը՝ նույնպես լուսապսակի մեջ, Գաբրիել Հրեշտակապետի նկարը, իսկ գրա ներքև, նրա ոտքի տակ՝ Կոնստանդինի կայսրը, որ երկրպագողի դիրքում աղոթում է, Մյուս մողախկ նկարը Ս. Դիռնիսիոսի կենդանագիրն է, կանգնած դիրքով, մի ձեռքին Ս. Ավետարան, իսկ մյուս ձեռքով խաչակնքում է։ Երրորդ մողախկ նկարը հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչն է ներկայացնում։ Քրիստոսի մողախկ նկարը ներբակերտ արվեստի մի գլուխ գործոց է, իսկ Գրիգոր Լուսավորչի ամբողջական նկարը, որ կերտված է նրա մահից եռկու դար հետո, պատկերացնում է իր ժամանակի հայ եկեղեցականների դեմքերից ներշնչված խստղեմ, կորովի, պատկառանք աղդող մի կերպարանք։ Մեր տեսած Գրիգոր Լուսավորչի նկարներում երեսում է նրա դեմքի բարեհամբուլը արտահայտությունը, վեհատեսիլ կեցվածքը, խորախորհուրդ ժամփը, — մի բան, որ մենք չենք տեսնում նորահայտ մողախկ նկարում։

Կոստանդնուպոլիսի Այա-Սոփիայում հայտնաբերված Գրիգոր Լուսավորչի մողախկ նկարը վկայում է այն մասին, որ հայ նշանավոր մողախկ նկարիչներ են եղել հին Բյուզանդիայի մայրաքաղաքում և իրենց հանճարեղ

գործերով կարողացել են թափանցել արվեստի մեծագույն հուշարձաններից մեկի՝ Այս Սոփիայի մեջ, որ հիացմունք է պատճառում դարերից ի վեր նրա այցելողներին։


Հայ մողախկ արվեստը Կոստանդնուպոլիսում իր արտահայտությունն է գտնել և այլ հիշարժան հաստատություններում։

«...Յայուման ազնվական մը՝ Աթոքանցի՝ որ 1630-ին Պոլիս ալցելած էր, կպատմե, թե հայոց պատրիարքի բնակարանի մեկ սրահին մեջ խճանկարված էին եկեղեցական հայրեր, կայսր մը և կայսրուհի մը։ Հայեր ըսած են իրեն, թե սուլթան Սուլեյման այնքան հետաքրքրի էր, որ հաճախ այդ նկարները տեսնելու կուգար։ Այս սրահը կպանվեր Գում-Գափուի այժմու հայոց Պատրիարքարանի գետնի վրա»⁴⁶։

Խնձես տեսնում ենք, Կոստանդնուպոլիսի հայոց Պատրիարքարանը ունեցել է մողախկ հատակ՝ մի քանի դիմանկարներով։ Այս մասին այնքան ժշտա են եղած տեղեկությունները, որ հնարավոր չէ քննության առնել ու որոշակի եղրակացության հանգել։ Ինչ խոսք, որ այդ մողախկ հատակը հայ նկարչի ստեղծագործություն է եղել, բայց թե ո՞վ է եղել նրա հեղինակը և ո՞ր դարաշրջանում է կառուցվել այդ հետաքրքիր մողախկ հատակը, — մնում է անհայտության մեջ։

⁴⁶ «Կյանք և արվեստ», ատրեգիոր, Ա. տարի, Փարփ, 1931, էջ 83.

(Նարունակելի)



Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏՈԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Ակնարկ ճայ կետադրության պատմությունից)

բավոր խոսքի մեջ գործածվող,
հանրության կողմից ընդունված
և պետականութեն սահմանված
կետադրական նշանների վերա-
բերյալ կանոնների համակարգը
կոչվում է կետադրություն։ Զափազանց մեծ
է կետադրության դերը գրավոր խոսքի կար-
գավորման գործում։ Գրոդն իր մտքերը
ճիշտ արտադրայտերու համար օգտագործում
է տրոհության, առողանության և բացա-
հայտության նշաններ, և ընթերցողն այդ
նշանների օֆնությամբ հասկանում է գրո-
ղին, ճշտությամբ վերարտադրում նրա մըտ-
քերը։ Այսպիսով, շնորհիվ կետադրական
նշանների, գորդն ու կարդացողը փոխա-
դրածաբար հասկանում են միմյանց։ Կյան-
քում հաճախ գրողը դառնում է կարդացող,
իսկ կարդացողը՝ գորդ։

Կետադրական նշանները գրավոր խոսքի
անհրաժեշտ տարրն են կազմում և լեզվի
ընդհանուր սիստեմում մասնակցում են
հալորդակցման գործին, ուստի հասկանալի
է, որ կետադրությունը բոլորի համար պետք
է լինի միասնական։

Հայերենի կետադրության պատմությունը
կապված է հայաբառ և հայատառ գրականու-
թյան սկզբնավորման պատմության հետո։ Հայ-
ոգիրի պյուտից անմիջապես հիմու (Ե դար)
մատենագրությանը զուգընթաց ստեղծվում
է նաև հայ քերականական գրականությունը։
Կետադրության հարցերը անցյալի քե-
րականական ձեռագիր աշխատություննե-
րում կարենոր տեղ են գրավել։ Խնչպիս այժմ,
անցյալում ևս կետադրությունը կապ-

վել է շարահյուսության հետ, խարսխվել
նրա վրա։

Գրաքարի շրջանի կետադրության մասին
իշխել է այն սխալ կարծիքը, որ իբր թե
կետադրության արդի հասկացությամբ չի
եղել, որ հին գրչագրերում իբր թե իշխել է
անասելի շվիթ և տարերայնություն։ Այս
ամենը բխել է նրանից, որ մենք հանգա-
մանութեն չենք իմացել մեր գրավոր խոսքի
շարահյուսությունն ու կետադրությունը։
Հայերենի հնայտմագանության, բառագի-
տության և ձևաբանության մասին բազմա-
թիվ լուսու և արժեքավոր աշխատություններ
են պրվել հայ, ոուս և եկորապական գիտնա-
կանների կողմից, իսկ շարահյուսության և
նրա հետ սերտորեն առնչված կետադրու-
թյան մասին մինչև այժմ ոչ մի աշխատու-
թյուն չի գրվել։ Գրաքարի շրջանի կետա-
դրության վերաբերյալ եղած մասնակի դի-
տուղարունները, որոնք տրված են հնա-
գրության և քերականության պանազան
հարցերի գննարկման կապակցությամբ՝
խիստ ամբավարար են։ Այդ դիտուղարուն-
ներում ընդհանրապես ասված է, թե քանի
կետադրական նշան են գործածել մեր նախ-
նիքները՝ առանց ցուց տարու դրանց գոր-
ծածության ժամանակակիցը, ծագումը, արտա-
հայտած իմաստները, կրած փոփոխու-
թյունները և այլն։ Գրաքարի շրջանում ու-
նեցել ենք մշակված, կանոնավոր խոսք և
այդ խոսքը տրոհող ու բացահայտող հա-
րուստ, երբեմն. ինքնատիպ ու մտածված
նշաններ։

Կետադրության հարցերի ուսումնասիրության տեսակետից աշխարհաբարի շրջանը փոքրիշատե բարվոր վիճակումն է գտնվում: Քերականության ընդհանուր հարցերը մշակելիս հայագետներ Ա. Այուղյանը, Ս. Պալասանյանը, Մ. Աբեղյանը որոշ շափով անդրադարձել են նաև կետադրության հարցերին:

Կետադրական նշանների գործածությունը հայերեն լիզվում սկսվել է պրերի գրության գուգընթաց, Ե գարի սկզբներին: Առաջին գրավոր փաստագիրը, տրի միջոցով իմանում ենք հայերենի կետադրական նշանների տեսակների ու քանակի մասին, հույն քերականի՝ Դիոնիսիոս թրակացու հայմեկիների գրականական աշխատություններն են: Հետագա աղբյուրները հանդիսանում են հայերեն վիմագիր արժանագործություններն ու գրագիր մատյանները:

Գրաբարի շրջանում կետադրություն ասելով հասկացել են վերջակետը, միջակետը և ստորակետը (կետ աշարտեալ, միջակ և ստորակետ): Մնացած նշանները դասվել են առողջանություն հասկացության մեջ և կետադրական նշաններ չեն համարվել: Այս շրջանում ճանաչվել է առողջանության տասնշան՝ շեշտ, բով, պարուզկ, երկար, սուլ,

թավ, սոսկ, ենթամնա, ապաթարց և ստորատ:

Զակերուը, մակակետը, գծիկը, վերնագրերից հետո օգտագործվող զանագանն նշանները, համառոտագրության և լիփապակները նշող պայմանական այլ նշանները քերականությանը նվիրված գրագիրում չեն արտացըրված, չնայած դրանք գրավոր խոսքի մեջ գոյություն են տնկել: Կետադրությունը, չնայած հայ գրավոր խոսքի վաղ գոյությանը, եղել է բավականաշատ հարուստ ու ծավալված: Կետադրական մի շաբաթ նշաններ խիստ ինքնատիպ են ու ծագումով միանգամայի ինքնուրում: Հարցական և բացականչական նշանների, շակերտի և ստորակետի վաղ գոյությունը, ձեզ և առաջին երկուսի գործածության նպատակահարմարությունը ցույց են տաշվել հայերենի զարգացման աստիճանը, գրավոր խոսքի կարգավորումը և բանավոր, կենդանի խոսքին մոտենալու առավելությունը:

Այս բոլորով հանդերձ, կետադրությունը մի ընդհանուր սիստեմի տակ չի դրվել, հայ պետականության բացակայության և գրարդցների սահմանափակի թվի պատճառով:

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բարդ նախադասությունները գրաբարում կազմել են բավական կուռ և մշակված մի սիստեմ:

Բարդ նախադասության կազմի մեջ մըտնող պարզ նախադասություններն իրարնկատմամբ, արդի լեզվի նման, ունիցել են երկու տեսակի՝ հարաբերություն՝ համադասական և ստորադասական: Բարդ համադասական նախադասության կազմում եղած պարզ նախադասությունները միմյանց չեն լրացրել, այլ հանդիս են եկել համագործ պաշտոններով՝ ընդհանուր իմաստով կապվելով իրար հետ և միասին արտահայտելով մի ամբողջական, բարդ միտք: Համադասական նախադասություններն իրար հետ կապվել են համադասական շաղկապներով կամ միմյանց են հաջորդի գալական բառերի:

Բարդ ստորադասական նախադասության կազմում եղած պարզ նախադասությունները հանդիս են եկել գլխավոր նախադասության և գլխավորի նկատմամբ երկրորդական, լրացնող ստորադասական նախադասությունների պաշտոնով: Երկրորդական ստորադաս նախադասությունները գլխավորի հետ միա-

ցել են կապակցական բառերով և ստորադասական շաղկապներով:

Լեզվի մեջ տեղի տևեցող կարգավորումներից մեկը՝ նախադասության կամ հների արտահայտությամբ՝ «բան»-ի դրսեռումը, նրա մեջ սահմանվող գաղաքներն են, որոնք արտահայտվում են համապատասխան կետադրությամբ: Պետք է ասել, որ հները բավական պարզ ու հստակ պատկերացում են ունիցել խոսքի և նրա մասերի փոխհարաբերությունների և խոսքի դերի ու նշանակության մասին: Թի որքան մեծ արժեք են տվել նախադասության մեջ կետադրությանը, երեսում է քերականությանը նվիրված ձեռագիր դասագրերում եղած ձեռակերպումներից: Կետադրության հարցին անդրադասության մասին պայմանը «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ գրում է: «Եսկ ի տրոհութենէն զարտունակ միտմ տեսանեմք, այսինքն, յորոշելոյ զրանսն և զատանելոյ: Իսկ ոչ տվյլի տրոհեն ըստ շար խոհակերի զանդամսն ոչ ուղղ յաշել, որ է զմիտմ ի մտաց և դրանն ի բանէ ոչ զատացանել. և պարունակեալն ի նմա անյայտացաւ միտք, զի ի լսողէն

զանխլացոյց և ինքն անարուեստ ցուցաւ¹:

Դավիթ քերականը նախադասության կամ նրա ավելի մեծ միավորի՝ խոսքի տրուհման հարցը դնում է գործնական հողի վրա: Մտքերը դրավոր արտահայտվում են նրա համար, որ ընթերցողները հասկանան, իսկ եթե բարդ նախադասությունները կիտադրությամբ չեն տրոհվում, նրա առանձին բաղադրիչ նախադասությունները կամ նախադասության առանձին անդամները չեն դատվում միմյանցից, ապա ընթերցողը ու միամբ կարող է հեղինակին ճիշտ շհասկանալ, այլև աղավաղել նրա մտքերը: Ճիշտու և ենկին գրել, կանոնավոր տրոհել «բան ի բանէ», նշանակում է ճիշտ հաղորդել իր մտքերը և ընթերցողին հասկանալի դարձնել:

«Ծրոհովիմ ասէ զինուեկումն և զորոշումն բանիցն և տանց յընթերցությամն. ոչ ընդ միմեանս շաղափերով զայլեալլ խորհուրդն», — գորում է հետագա շրջանի քերականներից մեկը (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2329, էջ 64թ):

Խոսողի կամ գրողի արտահայտած մըտքերը նրա սիորհուրդներն են, որոնք պետք է համեանալի դառնան ոմակնդի կամ ընթերցողի համար, այլապես միմյանց զշաղափելով՝ կաղափարեն այն և փոխադարձաբար իրար չեն հասկանա, հետևապես մարդկանց միջն շինում և հարաբերություն չի կարող լինել:

Ա) ՎԵՐՋԱԿԵՏԻ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դիոնիսոս թրակացու հայ մեկնիշները (Ե—է դարեր) կեսադրություն ասելով հասկանաւ էին երեք կետ՝ վերջակետ, որ կոչվել է պէտ աւարտեալ, ամիջակ, որ այժմյան հասկացողովիամբ միջակետն է, և սատորակէտս: Այս դասակարգումը ժառանգաբար պահպել է նաև հետագա քերականների մոտ:

Կրկնակետը, որպես վերջակետ, չի երելում ո՞չ քերականական աշխատություններում և ո՞չ էլ ձեռագրերում մինչև տասնիրորդ դարը:

Վերջակետը հին ձեռագրերում (Ե—թ դարեր) այժմյան հասկացողովիամբ ոչ թե կրկնակետով (։) էր դրվում, այլ մի կետով (.), որն այսօր միջակետ է կոչվում: Վերջակետն իր գործածության տեղով և մասսամբ ձևով տարբերվել է «միջակ» կետից ու ստորակետից: Կետն առհասարակ ունեցել է քառակուսի, եղբեմն էլ քառանկյունի

ձև: Վերջակետի իմաստով գործածվելիս այն դրվել է տողի վերևում, իսկ միջակետի և ստորակետի իմաստով՝ տողի վրա:

Վերջակետը (կէտ աւարտեալ) դրվել է պարզ և բարդ նախադասությունների վերջում և համարվել է խոսքի (նախադասության, որը երբեմն բազմաբարդ է եղել) ավարտման, վերջնական դադարի կամ, ինչպես հներն էին ասում, «խորհրդի» վախճանը: Բայ Ստեփանոս Սյունեցու, «Խնկ ասելն եթէ կէտ է տրամախորհովեան անգեցելոյ նշան: զայս զաւարտեալ կիտէն ասէ, զվախճան ենթադատութեան» (Ստեփանոս Սյունեցի— «Մեկնովիմ քերականի»²):

Համամ Արմենիցին վերջակետը բնորոշելիս հիմք է ընդունում նախադասության չափն ու խորհուրդը, այսինքն՝ երբ այն մի ամբողջական միաք է արտահայտում: «աւարտեալ է, յորժամ շափովըն և խորհրդովըն աւարտի»:

«Աւարտեալ կէտու-ը (վերջակետ) քերականներից ոմանք անվանել են «արքա», «իստուտումն», «վճիռ», «վախճանն»:

Այս նոր ձեռագրում վերջակետը համարվել է նաև ովճար և հանդիսաւ բանին»:

Ծասայի Նշեցին վերջակետը համարում է աւարտեալ կէտու, սակայն ավելացնում է: առ նոյն ինքն ասի և առուն (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2373, էջ 53թ):

Այսպիսով, նախադասության (պանս-ի) հասկացությանը, ըստ հին քերականների, միանգամայն պարզ է: նա ցոյց է տալիս մտքի վախճանը: այդ կիտի վրա կարդացողը դադար է տալիս, հանգստանում, շունչ է առնոտ պատ ավինի ճանապարհորդաց, որ նստին և հանդիսաւ առնուն (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1115, էջ 127թ):

Սակայն այս ամենը ձևակերպված է քերականների աշխատություններում, իսկ մնացած կրոնական և այլ բնույթի ձեռագրությունը: Ամենահին Հայքերն դրավոր վիայությունները, որ մեզ են հասել, վիմագիր արձանագրություններն են: Ամենավաղ շրջանի արձանագրություններից հայտնի հն Տեկորի և երտասաղեմի (Զ դար), Թալինի և Մաստարայի (Ե դար) արձանագրությունները, որոնք, դժբախտաբար, այնքան աղքատ են կետադրության դործածության հարցում, որ դժվար չ դրանց վրա հմենիլով որևէ որոշակի կարծիք հայտնել այս խնդրի վերաբերյալ: Փոքրիկ քարի վրա պետք էր տեղակտորել ահադին նախադասու-

¹ Н. Адонц, «Дионисий фракийский и армянский талкватели его», СПБ, 1915 г., стр. 88.

² Ն. Ագոնց, նույն տեղում, էջ 197:

թյուններ՝ բառերի մեծ քանակությամբ: Իսկ սա արդեն շատ դժվար գործ է: Գրելու արվեստը, նյութը, որի վրա գրում էին, և ժամանակը ստիլիզել են գրիչներին կատարել խնայողություն, կրծառել ինչպես սառերը, այնպես էլ կետերը Այս է պատճառը, որ մեզ հասած վաղագույն շրջանի գրավոր վկայությունները՝ միմագիր արձանագրությունները, համարյա թի կետադրություն չունեն: Այդ արձանագրություններում գործածվել են միջակետը, կրկնակետերը և պատիկ (—) կոչվող նշանը: Եթե կամ երեք կետերով տրամած են թվական արժեքով գործածված տառերը:

Եղիացոսում գտնվել է հայատառ հոմարենով գրված պատիկուաի մի պատառիկ: Ուսումնասիրելով այդ պատառիկը՝ Հակոբոս Տաշյանը հանգում է այն եղագացության, որ «Պարզ կետ, ստորակետ, բայց և այն չենք գտներ ամեննեին: Առհասարակ գործածվածն է երկու կետ կամ մեր «վերջակիտո» (1) կոչածը: Անշուշտ նույն վերջակետի կամ կրկնակետի դիտմամբ՝ գծված կտեսնենք համախ տրոհության որիշ նշան մ'ալ, որ բոլորովին կեռույնանա և լուսացվոց արդի զարմացական նշանին (!) Անտօն³:

Ինական է, որ մայր երկրից դուրս գտնը վածական ամենահնագույն ձեռագիր պատառիկը չէր կարող բնորոշ լինել իր կետադրությամբ և մեզ հիմք չի տալիս նրանով դատելու հայերենի կետադրության սիստեմի մասին: Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ ձեռագիր պատառիկում շկան միջակետը, ստորակետը և բովից: Ինչ վերաբերուն է կրկնակետին, որ տրոշ տեղեր նմանվում է արդի եղորովական լեզուների զարմացական նշանին, պետք է ասել, որ այն ավելի շատ դրշի արդյունք է. ըստ իս, գրողն անփույթ է եղել և կետի ծայրն երկարացել է, որի պատճառով էլ ելքորովական արդի զարմացական նշանի ձևն է ստացել: Այս բանը և լորովականի ազդեցությամբ բացատրել չենք կարող (և Հ. Տաշյան էլ այդ շի ակնարկում), քանի որ այդ լեզուների վաղ շրջանի գրություններում զարմացական նշանի գործածությունը գոյություն չի ունեցել: Այդ մասին է վկայում ուսու բանասեր Վ. Կլասովսկին, որն զբաղվել է ելքորովական հինգ լեզուների կետադրական նշանների ուսումնասիրությամբ: Իր աշխատության մեջ Վ. Կլասովսկին հետևյալն էր դրում...

³ Հ. Հակոբոս Տաշյան, «Ակնարկ մը հայ հնագության վրա», Վիեննա, 1898 թ., էջ 100:

կերտները մտածված են բավական ուշ շրջանում, Ժէ դարի վերջում⁴։

Այսպիսանվ, կրկնակետ վերջակետի գործածությունը հանդես է գալիս նույնիսկ է դարում, սակայն մայր երկրից դուրս և այն էլ կրում է խիստ պատահական բնույթ:

Հետագա երկու գարերի մեզ հասած ժամանակումը դարձալ վիմագիր արձանագրություններն են, որոնք, ինչպես ասացինք արցում կետադրության հարցում մեզ ոչնչություն կարող:

Գրավոր վավերագրերի և այլ կոթողների բացակայության հետևանքով հնարավոր չէ որևէ դրական բան ասել Եղիացու գրավոր խոսքում գործածվող կետադրության մասին, ինչպես տեսանք, այդ ժամանակաշրջանի կետադրության մասին գոյությունը ունեն միայն Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիների ժամանակում:

Միակ հնագույն ձեռագիր վկայությունը, որ ինքնագիր վիճակում հասել է մեզ, լազարյան ճեմարանի լուսատիպ Ավետարանն է, որ գրվել է Վանդանում, 887 թվականին: Այս ձեռագիրը Ավետարանում կետադրության կիրառումն արգեն նյութեղեն փաստ է, ունի գործնական նշանակություն և ոչ թե տեսական, ինչպես վաղ շրջանի քերականների գրագրերում: Այն՝ ինչ կա այս տեղ, ժամանակի ճշգրիտ պատկերն է տալիս: Այս ձեռագրում, հակառակ քերականների տեսական զարադրանքի, գործածվել են մի կետը (միջակետը), չակերտը, որ ստորակետի ձև ունի, և պատիկ կոչված նշանը: Բացի այս, պատիկն ու երկարացման նշանը միասին գործածվել են լուսանցքում որպես պարբերանիշ: Միշակետն իր գործածությամբ ունեցել է տարրերի իմաստ և նշանակություն՝ նայած թի ինչ տրուական դեր է կատարել: Այս ձեռագրում կետն ունի քառակուսի, երբեմն քառանկյունի, երբեմն էլ թափ ստորագետի ձև: Տողի վերևում դրվելիս այն համարվել է վերջակետ, իսկ տողի վրա, նայած նրա արտահայտած պաշտոնին, մերթ որպիս միջակետ, մերթ որպիս ստորակետ:

Լազարյան ճեմարանի լուսատիպ Ավետարանում յուրաքանչյուր նախադասություն սկսվում է գլխագրով: Ի դեպ, պետք է ասել, որ նախադասության մեջ հատուկ գոյականներն անգամ գրվում են փոքրատուություն և նախադասության ալարտուումով ընդմիջվում է խոսքը, դրվում է վերջակետ և հաջորդ նախադասությունն անպայման սկսվում է նոր տողից և գլխատառով:

⁴ В. Классовский; «Знаки препинания в пяти важнейших языках», СПБ, 1882 г., стр. 3.

Սկսած տասներորդ դարից, հայ գրիչների մեծ մժան արդեն որպես վերջակետ գործածում է կրկնակետը (,), որ նման է այսօրվա վերջակետին թե՛ իր ձևով, և թե՛ իր արտահայտչական նշանակությամբ։ Այս դարից արդեն վերջակետը դառնում է կրոր կետ և դրվում է տողի վրա, սակայն որոշ ձեռագրերում այն երբեմն հանդես է զալիս քառակունիքումի զժերի ձևով։

Վերջակետի գործածությունը, այսօրվա նման երկու կետով, ավելի կանոնավոր ու հասուատում է դառնում ԺԱ—ԺԲ դարերից։

Սրանից հետո կրկնակետով (երկու կետով) վերջակետի գործածությունը քաղաքացիություն է ստանում և շարումակլում մինչև մեր օրերը։

ԺԼ դարի որոշ ձեռագրերում («Ծողակաթ», տախտակ իԴ, ձեռագիր № 311, էջ 145թ, 1066 թ.) որպես տրոհման վետ, երբեմն վերջակետի, երբեմն էլ միջակետի իմաստով, գործածվել է կետ և ստորակետը միասին տողահայաց դրությամբ, իրար տակ գրված, իսկ 930 թվականի մի ձեռնագրում («Ծողակաթ», տախտակ իԹ, ձեռագիր № 2374, էջ 90ա) վերջակետից հետո ավելացված է մի ալիքաձև գիծ հորդ զոնական դիրքով։

Միջակետը և ստորակետը միասին որպես մի կետադրական տրոհական նշան հայ հետագա գրագրերում այլևս չենք հանդիպում, մինչդեռ նա ոռուերեն և նվզուական մի շարք լեզուներում հետագայում մտնում է կետադրական սիստեմում և իր գոյությունը շարունակում մինչև մեր օրերը։

Հայերենում վերջակետը հաճախ զարդարվել է գանաղան կետերով ու գծերով։ Այդ բոլոր դեպքերը դնել հարավոր չեն։ Միայն պետք է ասել, որ ուստանասիրված ձեռագրերի փաստերը ցուց են տալիս, որ գրագրերում վերջակետի զարդարման իմաստով կա գործածության շուրջ 12 դեպք։

Բ) ՄԻՋԱԿԵՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Միջակետը (ըստ հների՝ «միջակ») հին քերականների մոտ և հայկական հին ձեռագրերում գործածվել է որպես կետադրական՝ տրոհության նշան, որը տրոհել է համարասական նախադասության առանձին պարզ նախադասությունները միշտանցից, ուղղակի խոսքը՝ հեղինակի խոսքից և թվական արժեքով գործածվող տառերը՝ բնագրի մյուս բառերից։ Միջակետը ու ստորակետը գործական նախադասությունները կողմից համարվել են վերջակետի ծառան կամ սպասավորը։

⁵ Տե՛ս «Ծողակաթ», տախտակ հԱ, ձեռագիր № 2600, էջ 179թ։

Ստեփանոս Սյոմենցին միջակետի մասին գրում է. «Փոկ միջակ» (միջակետ — Հ. Մ.) նշան ոգի սակա ընդունելոյ. քանզի արդարեւ իսկ որպէս ոգի ի ամա առնու ընթերցողն, ի կամ ունելով զձամն եւ ու ի հանգիստ իշուցանելով, զի այս ի վախճանին եղիցի»։ Սյոմենցու սահմանման մեջ տշագրավ է այն, որ նա նշում է միջակետի զարդարի շափը։ Ըստ այդ սահմանման՝ վերջակետի վրա ձայնը հանգիստ իշում է, տրովհնուն «բան»-ի (նախադասության) վախճանն է, վերջը, իսկ միջակետի ժամանակ ձայնը պետք է կախ գցել, որովհնուն նախադասությունը դեռ չի ավարտված, այլ նրա կիսով շափ անկախ մասն է միայն վերջանում։ Այսպիսով, միջակետով տրովհում են այն նախադասությունները կամ նախադասության այն մասերը, որոնք կիսանկախ միտք են արտահայտում, սակայն կապված են բարդ նախադասության մտքի հետ։

Նույն միտքը, գրեթե նույնությամբ, կը թիւ են հետագա դարերի քերականները։ Քերականներից մեկը ընթերցողից պահանջում է միջակետի ժամանակ «ի կախ ունելով զձամն և ու ի հանգիստ իշուցանելով, զի այս ի վախճանին եղիցի» (Հայկական ՍՍՌ պետական մատենադարանի ձեռագիր № 2371)։

Ինչպես ուղղակի խոսքի, այնպես էլ թվական արժեքով գործածվող տառերի աշ և ձախ կողմերում դրվող միջակետի գործածությունը շարունակվում է մինչև տպագրության գրուտը և մասսամբ էլ նրանից հետո մինչև ժԸ դարի վերջերը։ Այս հարցում նույն պետք է դեռ կամ ի առաջարկան բարեկան արժեքով գործածվող տառերի աշ և ձախ կողմերում երբեմն դրվել է ու թե միջակետ, այլ կրկնակետ։

Գ) ՍՏՈՐԱԿԵՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կետադրության բաժնում, հին քերականների մոտ, ստորակետը համարվել է բարդ նախադասությունները և նախադասության առանձին անդամները տրոհող կետ ու իր դադարի փոքրությամբ ճանաչվել է վերջինը։

Անանուն մեկնիցը ստորակետը բնորոշում է այսպիս։ «Եւ զնէ զկիսն, որ կոչի ստորակետ, որ ունի տկարութիւն հանգման մուածողութեանն»։ Այսպիսով ստորակետի պաշտոնը բնորոշելիս անցյալում հենվել են այն բանի վրա, որ նա չի կարող ցուց տալ մուածողության հանգումը, այսինքն՝ ստորակետով տրովհած առանձին անդամները կամ երկրորդական նախադասություններն առանձին վերցրած ամբողջական, ավար-

⁶ Ն. Ադոնցի հիշված աշխատությունում, էջ 197։

տում միտք արտահայտել չեն կարող Հին քերականները ստորակետը բնորոշելիս եւնում էին նաև նրա դադարի չափից. քանի որ ստորակետը նախադասովիյան ավարտը չի ցուց տալիս, ուստի և դադարին հասնելուց գեռում շատ հետու է:

Ստեփանոս Մյոմեցի քերականը ստորակետը համարում է նախադասովիյան մաքի ավարտման և դադարի նախերգանքը, իսկ հետագա քերականները (Եսայի Նշեցին և ուրիշները) ստորակետը չեն համարում «տրամախոհովիյան հանգման» նշան, որովհետեւ նա վսորհուրդը հայտնել չի կարող Քերականներից մեկը գրում է. «Ա ստորակետ տրամախոհին չեւ եւս յանկեցելոյ, այլ եւ կարաւացելոյ նշան», կամ՝ «Ո յաւարտմանէ խորհրդոյն մեծ ունի միջին կէտն յորմէ կարի յոյժ հնոի է ստորակէտին բան վասն միջասահմանին՝ զի ինքն ընդ ինքեան ստորակէտն ո՞չ կարէ յայտնել զիսորհուրդն, քանզի յաւարտեալ կէտն հասանելով, ի կարդի շարամանն իինի բացերևովիւն բանին. Ստորակէտն նախերգան է» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2373, էջ 53ա, 54թ):

Մի այլ քերական գտնում է, որ ստորակետով տրոհված հատվածը միտք չի արտահայտում: Այդ բանն ապացուցելու համար նա որպես օրինակ բերում է մի նախադասովիյուն, ահա այն.

«Իսկ ստորակէտ է, որ բանն վասն որոյ է յայտնի, որպէս որ ասես ընդ մարդ թէ գնա, և շասես թէ ո՞ւր. և կամ ասես թէ առ, և շայտնես թէ զի՞նչ առնու» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1115, էջ 107թ):

Ստորակետ դրվել է՝

ա) նախադասովիյան բազմակի անդամների միջև, նրանք միմյանցից տրոհելու համար. օրինակ՝

«Եւ ի սոցանէ որք գիտեն դպրութիւն, երայեցիք, լատինացիք, տրուկ և համբք վարին, սպանիացիք, յոյնք, մարք, հայք, աղուանք» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 8057, էջ 6, 1289 թ.):

բ) Թվարկությունների դեպքում, թվարկություններիմաստները կամ նախադասովիյունները միմյանցից տրոհելու համար. օրինակ՝ «Եւ. վերծանելի է, ըստ ենթադրութեան, ըստ առողջանութեանցն, ըստ տրոհութեան» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2373, էջ 1թ):

Ստորակետը քերականներն իրենց աշխատություններում հիշատակում են դեռևս Ե-է դարերից սկսած: Լազարյան ճեմարանի Ավետարանում և էջմիածնի փոստկազմով Ավետարանում (Թ—Ժ դարեր) մենք հանդիպում ենք ստորակետի գործածության բազմաթիվ դեպքերի: Թե՛ կազարյան ճեմարանի և թե՛ էջմիածնի համբավակուր Ավետարաններում կան մի շաբթ դեպքեր, որտեղ գործածված ստորակետն իր ձևով ամրողովվին նման է այսօրվա գործածական ստորակետին (,): Ճիշտ է, կազարյան ճեմարանի Ավետարանում նա թվով սահմանափակ է, իսկ էջմիածնի Ավետարանում արդեն բավականաշապի շատ է:

Էջմիածնի Ավետարանի կետադրությունը ավացուցյ է այն բանի, որ ստորակետն իրոք այժմյան ձևով և դիրքով գործածվել է շատ վաղուց: Չենք կարծում, որ ստորակետը մուտք է գործել Ժ դարում, հավանաբար այն գործածվել է նախորդ գոշագործում ևս: Դժբախտաբար Ե-Ը Ղ դարերի ձեռագրերը մեզ չեն հասել, և մենք դժվարանում ենք ասել՝ ինչպես, ո՞ր դարից և ո՞ր ձեռագրերումն է գործածվել ստորակետը: Առաջին գրավոր վավերագիրը ցուցյ է տալիս, որ ստորակետն առկա է եղել և գործածվել է Թ դարից, իսկ ավելի հաստատ Ժ դարից:

Համամ Արևելցու մոտ ստորակետով են տրոհված կոչականները. օրինակ՝ «Զայս պատուիրեմ քեզ, որդեակ իմ Տիմոթէոս»⁷:

Ուստի բանասեր Վ. Կլասովսկին ստորակետի գործածության ակիզմոր ոռուական գրականության մեջ համարում է Ժ դարը»⁸:

Հետագա դարերի հայկական ձեռագրերում ստորակետը կամաց-կամաց տրոշակի ձև է ստանում, վերջնականապես դառնում է բարակ պոշակոր, փոքր զիսիկով մի կետ՝ տարրերվելով միջակետից:

Որպես եզրակացություն կարելի է ասել, որ ստորակետի, միջակետի և վերջակետի տարրությունը ձևի տեսակետից սկսվում է Ժ դարից և հետագայում աստիճանաբար որոշակի և համատարած է դառնում ու շարունակվում է մինչև մեր օրերը:

Սակայն վերջակետի, միջակետի և ստորակետի գործածության դեպքերը վերջնականապես ծավալվում և կարգավորվում են աշխարհաբարի շրջանում:

7 Ն. Աղոնցի Հիշված աշխատաթյունում, էջ 255:

8 Վ. Կլասովսկու հիշված աշխատաթյունում, էջ 3:





ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՅԱՆԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՔԱՅԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՄՆԱՄՅԱԿԸ

Մայիսի 19-ին, երևման Ս. Խաչի տոնի օրը, լրացավ Բաքվի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուամավորի եկեղեցու ավագերեց, արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանի քահանայության քառասուն տարին: Այդ օրը Բաքվի հավատացյալ հայ համայնքի համար բացանիկ ուրախության օր էր: Մատուցվեց հանդիսավոր պատարագ: Ադրբեջանի և Թուրքիստանի հայոց առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետը իր քարոզում ծանրացավ Տ. Վահան ավագ քահանայի երկարամյա անրասիր, օգտակար գործունեության վրա: Սուրբ պատարագից հետո հավատացյալները մեկի-մեկի մոտենում էին համբուրելու հոբելյար քահանայի աջը և շնորհավորում նրան:

Երեկոյան, արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանայի տանը կազմակերպվել էր ճաշկերույթ, որին ներկա էին գերաշնորհ Տ. Սուրեն Խովսկոպոսը, առաջնորդական տեղապահը, թեմական խորհրդի անդամները, քահանա հայրերը և մասնավոր հրավիրյաներ:

Օրվա հանդիսավորությունից և շնորհավորության անկեղծ խոսքերից հուզված, հոբելյար Տ. Վահան ավագ քահանան իր և իր բարեպաշտ տիրուհու անունից մի կարևոր դժմար խոտացավ նվիրել եկեղեցու վերանորոգության համար:

Հորեւլյար արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը մեր եկեղեցական հին սերնդի լավագույն ներկայացուցիչներից է իր եկեղեցական գիտելիքների հարուստ պաշարով, իր փորձառությամբ և երկար տարիների ժրաշան ծառայությամբ:

Տ. Վահան ավագ քահանան ծնվել է Շուշի քաղաքում 1885 թվականի փետրվարի

17-ին: Ավագ է եղել նրա մկրտության անունը: Ավարտել է Շուշու հայոց թիմական դպրոցը: 1917 թվականի մայիսի 19-ին քահանա է ձեռնադրվել Վահան եպիսկոպոսի ձեռամբ Կուսանաց վանքում:

1920 թվականին նա տեղափոխվում է Հյուասային Կովկասի Գեղրգևեկ քաղաքը, որտեղ և քահանայագործում է շուրջ քան տարի: Ապա տեղափոխվում է Վաղիկովկաս, որտեղից և Թրիլիսի, ուր պաշտոնավարում է շուրջ տասը տարի:

Գերագույն Հովմոր Խորհրդի կարգադրությամբ նա Թրիլիսից տեղափոխվում է Կիրովաբադ և ապա Բաքու, ուր և մինչև օրս քահանայագործում է որպես հավատարիմ և քաջ Հովիվ:

Տ. Վահան ավագ քահանան սիրվել և գնահատվել է որպես ազնիվ և պարտաճանաչ հովորական: Նա իր լավ և բարվոք գործունեության որպես գնահատություն արժանացել է կողովների և պատիվների: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, իր կատարած հայրենասիրական աշխատանքների համար, պարգևատրվել է նաև Կովկասի պաշտպանության մեդալով: Նորին Ս. Օծություն Տ. Վազգեն Ա. Հայրապետը ևս գնահատել է արժանապատիվ Տ. Հորն ու արժանացրել նրան հայրապետական օրհնության:

Արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանան իր առաջացյալ տարիքին էլ դեռ միր է և կայտառ, նվիրված իր սիրած եկեղեցու և ժողովրդի հոգեւոր սպասավորության գործին:

Թող Տերը նրան պարզելի անվիշտ ծերություն: Այս է իր սիրելի հավատացյալ ժողովրդի մաղթանքը նրա քահանայության քառասնամյակի առթիվ:



ՍՈՒՐԲ ԵԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ է ՈՒՍՍՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1957—1958 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Արքու Ս. էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը զիշերօրիկ դպրոց է վեց դասարաններով— երեք՝ դասարանական, երեք՝ լսարանական։ Նրա ճպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգեւորականներ։ Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգեւոր կրույքուն։ Ուսանողներին ձրիարար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն։

Ս. էջմիածնի Հոգեւոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական քերույյունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրույքուն։

Դիմողները բնենություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից։ Բարձր կրույքուն ունեցող քեկնածուները կտեղափորվեն համապատասխան դասարաններում։

Դիմողները պիտի ներկայացնեն նետելյալ փաստաբղբերը։

1. Խճճագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգեւորական դառնալու։
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից։
3. Թժկական վկայական՝ առողջության մասին։
4. Մննդյան և մկրտության վկայական։
5. Կրույքան վկայական կամ համապատասխան տեղեկանք։
6. Երեք լուսանկար։

Արտասահմանյան երկրների քեկնածուները պիտի է իրենց դիմումն ու հարակից փաստաբղբերը ներկայացնեն իրենց քեմերի առաջնորդներին ոչ ու քանի քանի օգոստոսի 1-ը, իսկ ներքին քեմերի քեկնածուները՝ մինչև օգոստոսի 15-ը՝ Հոգեւոր Ճեմարան, Հայկական ՍՍՌ, էջմիածին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ